4555

II գրքի

1912

491.99-8
S-45
II գիրք

2010

SB 2062

491 99-8
S-45

ՆԻԿՈՂԱՈՍ ՏԷՐ-ԳԵՎՈՆԴԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ՄԱՖՈՒԳԵՆԵՔԻ ՀԱՄԱՐ

ՔՍԱՆԵԻՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԻՊ

491.99-8
S-45

ԹԻՖԼԻՍ
ՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ, ՊՈՒՇԿԻՆՍԿԻ ՓՈՂՈՑ № 3.
1912

28504-4.3

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

«Մայրենի Լեզու»-ի Երկրորդ տարին բաղկացած է երկու ընդարձակ բաժիններից։ Առաջին բաժինը ամփոփում է իւր մէջ մանկական աշխարհը իւր բոլոր ճիւղաւորութիւններով՝ տունը, ուսումնարանը, կենդանիները, բոյսերը և այն բոլոր զբաղմունքներն ու գործողութիւնները, որոնք տարուայ ընթացքում շրջապատում են մանկան։ Երկրորդ բաժինը—դիւցազնական կամ առասպելական աշխարհ՝ բովանդակում է մանուկներին մատչելի առակներ և հեքիաթներ... Այդ առակներն ու հեքիաթները առնուած են գլխաւորապէս հայկական աղբիւրներից, որոնց մենք մշակել և զետեղել ենք մեր գրքի մէջ վերապահութեամբ։ Մեր գրագէտների մէջ վերջին ժամանակ սկսել է զարգանալ մի տարօրինակ առաքինութիւն. նրանք արգելում են օգուտ քաղել իրանց երկերից նաեւ օրէնքի սահմաններում։

Սա է պատճառը, որ մենք մեր գրքին պիտանի նիւթերը գլխաւորապէս քաղել ենք օտար աղբիւրներից, զգալով հանդերձ, որ այդ աղբիւրները անհամեմատ աւելի նպատակին յարմար նիւթեր են տալիս, քան մայրենի գրականութիւնը։

Մեզ եղած բազմաթիւ դիմումներին ուղղագրութեան վերաբերութեամբ առայժմ այսքանը կարող ենք պատասխանել. ներկայումս երեք հոսանք շարունակում են մրցել միմեանց հետ՝ աւանդական ուղղագրութիւնը, որ բոլոր հայերի հին և նոր գրականութեան ուղղագրութիւնն է. հիւնագրութիւնը, որ ձգտում է դուրս մղել գործածութիւնից ու տառը այն դէպքերում, երբ նա սուղ արտասանութիւն ունի, և վ-ագրութիւնը, որ քարոզում է մի հնչիւնին մի գիր սկզբունքը, այսինքն v—в հնչիւնի համար անխտիր և ամենայն տեղ ընդունում է վ նշանագիրը, իսկ ւ-ին թողնում է իւր պատմական տեղը նոր գրականութեան մէջ, այն է՝ ու և իւ երկբարբառներին կից, որպէս ձայնաւոր տառ։

Անձնապէս ես այն համոզմունքի եմ, որ մենք բաղաձայն ու չունինք և այդ մասին բաւական մանրամասն բացատրութիւններ տուել եմ Նոր-Դպրոցում (1908 թ. № 3 և 5 և 1909 թ. № 8-9) բայց եթէ մի իրաւասու մարմին ապացուցանի, որ՝ ձայնաւոր ու-ն որոշ դէպքերում կարդացւում է որպէս v—в, այսինքն որպէս բաղաձայն տառ, ուրեմն և նրան պէտք է փոխարինէ մի ուրիշ տառ, մի բան որի կարևորութիւնը ես չեմ զգում, ապա այդ ու-ն պիտի փոխարինուի ւ-ով, այսինքն ձայնաւոր ու-ն ձայնաւոր ւ-ով (ածանցման կանոն) իւր պատմական առմամբ։

Գալով այն խնդրին, որ իւրաքանչիւր նշանագիր պէտք է մի հնչունի արտայայտիչը լինի և, աչքի առաջ ունենալով, որ ւ-ն հնումը u—y—ու հնչիւնի նշանագիրն է եղած և այժմ էլ շատ դէպքերում ձայնաւոր է, ես բացարձակ կերպով յարում եմ այն պարոնների առաջարկութեանը, որոնք ւ-ին թողում են իւր սկզբնական պաշտօնի մէջ ո և ի տառերի հետ, իսկ մնացած բոլոր դէպքերում առաջարկում են գործ ածել վ գիրը։

Ազատ մտքը, գրականութիւնը, ժամանակի ընթացքում, անշուշտ, կը վճռեն այդ խնդիրը. դպրոցը, մինչև այդ, չպիտի շեղուի իւր ճանապարհից. նա պիտի աւանդէ մանուկներին միմիայն գրականը, անվիճելին, ուրեմն և աւանդական ուղղագրութիւնը, որ միակ գործածականն է ամեն տեղի հայերի համար։ Այդ խնդրի մէջ մանուկները դեր չունին, քանի որ նա պարզ չէ նոյն իսկ ուսուցիչների համար։ Ամենայն կամայականութիւն դպրոցում դատապարտելի է։ Այդ կամայականութեան պտուղները մենք արդէն քաղում ենք. մեր ընթացաւարտ աշակերտներն անգամ ուղիղ գրել չգիտեն։

Ն. Տ.-Ղ.

ՀՍՍՀ ԳՐԱԽՐԱՏ Գոս. Գրադարան ZUUՌ-ԱՌՍ.ՍՍՌ Ա. Մ. Գորկու անվան

11503-57

ԾՐԶԱՆ ՍՈՒԱՋԻՆ
ՍԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

I. ՏՐՆԷ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԵՐԸՆՈՒՄԷ

1. ԻՄ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԳՆԱԼԸ

Սեպտեմբեր ամիսն էր. հայրս ասաց, որ ինձ պէտք է ուսումնարան տանեն։ Ես շատ ուրախացայ. վաղուց ուզում էի ուսումնարան գնալ։ Հայրս ինձ համար պայուսակ գնեց։ Ես նրա մէջ դասատուրեցի հարկաւոր առարկաները։ Մենք ճանապարհ ընկանք։ Ես ուսումնարան չէի տեսած։ Սիրտս թնդում էր։ Ութը ժամին մենք հասանք մի դպրոցի շինութեան և բակի դռնից ներս մտանք։ Բակում շատ մանուկներ կային. ոմանք խաղում էին արձակ-համարձակ, ոմանք էլ գլխակոր կանգնած էին իրանց ծնողների հետ։ Մենք ներս մտանք ուսուցիչների սենեակը։ Ես երկիւղի մէջ էի. բոլորը նոր մարդիկ էին. ոչ մէկին չէի

ճանաչում։ Ուսուցիչների գլխաւորը — տեսուչը նկատեց իմ շփոթմունքը, մօտ եկաւ, փայփայեց ինձ։ Ես սրտապնդուեցայ։ Յետոյ ինձ քննեցին և ընդունեցին աւագ նախակրթարանը։

Բառեր՝ պայուսակ—քսակ, սումկա, դասաւորեցի—դասեցի, տեղաւորեցի. բակը—գաւիթը, հայաթը. ոմանք—միքանիսը. գլխակոր—գլուխը կախ գցած. երկիւղ—վախ. աւագ նախակրթարան—մեծ պատրաստական դասատուն։

Գրեցէք եւ դասաւորեցէք՝ կող, քոդ. կար, քար. կաղ, քաղ. կոյր, քոյր. կամ, Քամ։

Հարցեր.—Ի՞նչ ասաց՞ քեզ հայրդ։ (Հայրս ասաց, որ ինձ պէտք է ուսումնարան տանեն։)—Հայրդ ե՞րբ ասաց այդ բանը։ (Հայրս այդ բանն ասաց սեպտեմբեր ամսին։)—Դու ի՞նչ արիր... —Ինչո՞ւ ուրախացար և այլն։

(Հարցերով պէտք է ծանօթացնել մանուկներին մանաւանդ նկարագրական յօդուածների բովանդակութեան հետ։ Բոլոր հարցերի պատասխանները պէտք է լրիւ լինին—պատասխանը պիտի ամփոփի իւր մէջ հարցմունքի բոլոր բառերը, յաւելմամբ այն նիւթի, որի համար տրւում է հարցը։)

Գրեցէք, թէ ձեզ ինչպէս են ուսումնարան տարել։

2. ՀԱՆԵԼՈՒԿ

Մի տուն տեսայ սիպտակ փըռած,
Սև-սև հաւեր մէջը թառած.
Ձու կ՚ածէին շատ զանազան։
Կրխօսէին—մարդ բանական։

3. ԿԱՐԴԱԼ-ԳՐԵԼ

Երբ-որ լեզուս բացուեցաւ,
Ազատ խօսիլ սովորեցայ,
Բարի մօրս ձեռքի տակ
Գրել-կարդալն ըսկսայ։

Շատ ժամանակ չանցկացած՝
Այլևս գիր կարդալը
Այնպէս դժուար չէր թըւում,
Ինչպէս կ՚ասեն ծոյլերը։

Այնուհետև ինձ համար
Հոլ-վէգի, գնդակի չափ
Սիրելի են թուղթ, գրիչ,
Գիրք, քանոն, մատիտ, տետրակ։

Բառեր՝ ազատ—հեշտ, համարձակ. այլևս—էլ. դժուար չէր թուում—դժուար չէր համարւում, հեշտ էր երևում. սովորեցայ—սովորեցի։

Յիշեցէք եւ գրեցէք ձեր գիտեցած դասական առարկաների եւ խաղալիքների անունները։

Գրեցէք եւ զանազանեցէք՝ դաս, տաս. դար, տար. դեղ, տեղ. տայ, դա. տուր, դուր. մեխ, մեղ. ծխ, օղ, ող. կախ, կաղ. սոխ, սող. ուխտ, ուղտ. ախտ, աղտ։

4. ԱՄԵՆ ԲԱՆ ԻՐԱՆ ՏԵՂԸ

Հայկը ծոյլ տղայ չէր, բայց կարգ ու կանոն չէր սիրում։ Երեկոները, դասերը սովորելուց

յետոյ, նա իւր գրքերն ու տետրակները թողում էր թափթրփած ու ցրիւ տրւած. առաւօտներն էլ, երբ-որ վեր էր կենում, ժամերով որոնում էր իւր շորերը կամ ոտնամանները։ Ամենայն օր այս ու այն կողմն էր ընկնում Հայկը և միշտ դասից ուշանում էր։

Բառեր՝ ծոյլ—աշխատել չսիրող. Ջանասէր—աշխատել սիրող (Ջանք—սէր). ժամ—սհաթ. ժամերով—շարունակ, երկար ժամանակ. որոնում էր—պտռում էր, ման էր գալիս, որ գտնի։

Նկատեցէք հետեւեալ բառերի ուղղագրութիւնը՝ առաւօտ, երեկոյ, կէսօր, կէսգիշեր. ժամ, ժամացոյց. ժամ, ժամաւոր, ժամասէր։

Գրեցէք եւ զանազանեցէք՝ կար, քար. կող, գող, քող. կուտ, գութ. կիր, գիր. կէտ, գետ. կալ, գալ. օձ, օծ. ձեր, ծեր. ձագ, ծակ. ձոր, ծոր. ծեծ, ցեց. ծիծ, ցից։

5. ՏԽՈՒՐ ԵՐԵԽԱՅ

Երբ-որ ծագեցաւ պայծառ արեգակ,
Աքլոր, աղաւնի, հաւ ու ծիծեռնակ,
Ձի, ոչխար, գառնուկ, այծ, ուլ, հորթ ու կով
Գընացին իրանց գործին ըշտապով.
Միայն ծոյլ տղան չըգնաց դպրոց,
Գիրքը շըպրտեց ու փախաւ փողոց.
Իրիկունն ամենք յետ դարձան ուրախ,
Միայն տըղան էր որտում, գլխակախ։

Բառեր՝ արեգակը ծագեցաւ—արեւը դուրս եկաւ, լուսացաւ. աքլոր—աքաղաղ. աղաւնի—աղուռնակ. ուլ—այծի ձագը. գառը—ոչխարի ձագը. հորթ—կովի ձագը. ձագ—գոմշի հորթը. դպրոց—ուսումնարան. որտում—տխուր. շտապով—շուտով. գլխակախ—գլուխը կախ գցած։

Ցիշեցէք եւ գրեցէք ձեր գիտեցած հորքոտանի կենդանիների անունները։—Նկատեցէք՝ ըշտապել, շըպրտել։

6. ՄԵՐ ՏՈՒՆԸ

Մեր տունը մի ընդարձակ բնակարան է։ Նա ութ սենեակ ունի։ Ամենամեծ սենեակը դահլիճն է։ Դահլիճին կից կայ մի ուրիշ սենեակ, նրանից քիչ փոքր, ուր սովորաբար ընդունում ենք մեզ մօտ եկողներին. դա կոչւում է ընդունարան։ Հայրս իրան համար առանձին սենեակ ունի—առանձնարան, որտեղ նա զբաղւում է իւր գործերով։ Ճաշին, ընթրիքին և թէյին մենք հաւաքւում ենք սեղանատուն։ Գիշերները մենք քնում ենք մի ընդարձակ սենեակում, որ կոչւում է ննջարան։ Մանուկներիս համար էլ մի ջոկ սենեակ է յատկացրած, որտեղ մենք պատրաստում ենք մեր դասերը։ Մանկանոցը շատ մեծ չէ, բայց ամենից պայծառ սենեակն է։ Այսպէս՝ բոլոր սենեակներն իրանց նշանակութիւնն ունին։ Մնում է յիշել նախասենեակը և խոհանոցը, ուր խոհարարը մեզ համար համեղ կերակուր է պատրաստում։

Գրեցէք հետեւեալ բառերի նշանակութիւնը՝ ընդարձակ, դահլիճ, կից, ընդունարան, առանձնարան, զբաղւում է, ընթրիք, սեղանատուն, ննջարան, մանկանոց, յատկացրած է, նախասենեակ, խոհանոց, խոհարար, խոհարարուհի։

Դիտեցէք եւ նկարագրեցէք ձեր կացած բնակարանը։
Հարցեր. Ի՞նչպիսի բնակարան է ձեր տունը. քա՞նի սենեակ

ունի նա. ինչ է ամենամեծ սենեակը. դահլիճին կից ինչ սենեակ կայ. ինչպէս է կոչւում այդ սենեակը. ինչու է նա ընդունարան կոչւում և այլն։

Արտագրեցէք հետեւեալ բառերը եւ, ուր որ հարկաւոր է, ը տառը աւելացրէք՝ ըզբաղմունք, զբօսանք, զգեստ, զգալ... զրոյց, զկեռ, զղջալ, զնդան (բանտ), զննել, զտել (մաքրել), շտապ—ըշտապ, շտեմարան (ամբար), շըրջան, շնորք, շքեղ*)։

Նկարագրեցէք (տուած հարցերով) ձեր տունը (գրաւոր)։
Համեմատեցէք ձեր տունը, այստեղ գրածի հետ (բերանացի)։

7. ԽՐՃԻԹ

Կէս գիշերին պայծառ լուսինն երկնքումը բարձրացաւ,
Մեղմիկ ճաճանչները սփռեց և խրճիթը լոյս առաւ։

Փոքրիկ խուղ էր, դատարկ ցեխից անշքապէս նա շինած,
Մի դուռն ունէր ցած և նեղլիկ և մի երդիկ էլ բացած։

Խրճիթի մէջ, երդիկի տակ, կլոր հնոց կար շինած,
Նրա շուրջը երեք հոգի գործը ձեռքին նստոտած։

Պառաւ կինը ճախարակը վարպետութեամբ պտտում էր,
Բրդի փափուկ քուլաները ուշի-ուշով մանում էր։

Համեստադէմ կոյս աղջիկը, սանդերքն առաջը դրած,
Գլուխը կախ, բուրդ էր զգում, իւր գործովը ըզբաղուած։

Երիտասարդ տղամարդը արագ-արագ տաշում էր,
Եւ մի ժամից ողջ գութանը վաղուան համար պատրաստ էր։

*) Բաղաձայն տառերը բառի սկզբում, մի ուրիշ բաղաձայնի հանդիպելիս, իրանցից յետոյ ը են առնում, որ հնչւում է, բայց չի գրւում (գըրիչ, ղըժուար, թըթու և այլն). միայն ս, զ, շ, տառերը, վերև յիշուած բաղաձայններին հանդիպելիս, ը հնչիւնը առնում են սկզբից (ըզբաղմունք, ըզգեստ)։

Հաւը խօսեց։ Պառաւն մեղմով ձեռքի քուլան վերջացրեց.
—«Կէս գիշերը վաղուց անցաւ, պէտք է քնենք», նա ասեց։

Անցան ժամեր։ Եւ խրճիթում խոր լռութիւն էր տիրել,
Մինչ աղջիկը արիաջան անկողնից վեր էր կացել։

Լուսամուտից նա դուրս նայեց և շրթունքը մեղմ խաղաց.
Արշալոյսը նոր բացւում էր, կուժն ուսեց, ջուրը գնաց։

Բառեր՝ խրճիթ—տնակ, փոքրիկ տուն. խուղ—խուց, գետնափոր տնակ. անշքապէս—առանց զարդի. երդիկ—կտուրի մէջտեղից բացած լուսամուտ. հնոց—կրակ վառելու տեղը, օջաղը. շուրջը—չորս կողմը. ճախարակ—թել մանելու գործիք, անիւ, չարխ. կոյս աղջիկ—չպսակուած աղջիկ. սանդերք—բուրդ զգելու գործիք. արագ—շուտ. վաղուան—էգուցուան. արիաջան—աշխատասէր. անկողին—տեղաշոր. արշալոյս—առաւօտեան առաջին լոյսը։

Արձակ գրեցէք այս ոտանաւորը՝ մասերի բաժանելով։

8. ՄԵՐ ԴԱՍԱՏՈՒՆԸ

Մեր դասատունը մի մեծ սենեակ է։ Սենեակի մի անկիւնում դրած է սեղան և աթոռ վարժապետի համար։ Սենեակի միւս անկիւնում դրած է մի մեծ գրատախտակ։ Պատերին կախած են կենդանիների նկարներ և աշխարհագրական քարտէզներ։

Սենեակի մէջ-տեղը աշակերտների համար շարած են նստարաններ։ Նստարանների առաջ նոյն կարգով դրած են գրասեղաններ։ Վարժապետը սովորեցնում է։ Աշակերտները սովորում են։ Վարժապետը դաս է հարցնում։ Աշակերտները պատասխանում են։ Աշակերտները գրում են, կարդում են, նկարում են և հաշւում են թւերով։ Ամեն մի դաս վերջանալուց յետոյ աշակերտներին հանգիստ են տալիս. ապա սկսւում է միւս դասը։

Բառեր՝ անկիւն, նկարներ, աշխարագրական քարտէզ, նըստարան, գրասեղան, հանգիստ են տալիս։

Գրեցէք հետեւեալ բառերը եւ, ուր որ հարկաւոր է, ը աւելացրէք՝ սպասել—ըսպասել, սպիտակ, ստամոքս, ստանալ, սփոփել, սքանչելի... սլաք, սխալ, սմբակ, Սմբատ, սնունդ, սրինգ...)։*

Համեմատեցէք ձեր դասատունը այստեղ գրածի հետ (բերանացի)։

Նկարագրեցէք ձեր դասատունը տուած հարցերով (գրաւոր)։

9. ՀՐԱՒԷՐ ԴԷՊԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Հաւը խօսեցաւ, օրը բացուեցաւ.
Արեւն էլ վաղուց ելաւ, բարձրացաւ.
Խելօք մանուկներ, շուտ հագնուեցէք։
Շուտով դասատուն դուք հաւաքուեցէք։

Մարդ և անասուն, գաղան և թռչուն,
Ամենքն էլ իրանց գործին են գնում.
Մրջիւնը բերնով կերակուր տանում,
Մեղուն ծաղկից հիւթեր է ծծում։

Դաշտը գոյնզգոյն ծաղկով զարդարուած,
Մարգագետինը կանաչ հագնուած,
Անտառը ձմեռուայ քնից արթնացած,
Իւր տերևները շարժում է կամաց։

Ձկնորսներն իրանց ուռկանն են քաշում,
Հնձողներն իրանց մանգաղը շարժում...
Դուք էլ, մանուկներ, ձեր գրքերն առէք.
Աստուած ծուլութիւն չէ սիրում երբէք։

*) *Տես 10-դ երեսի ծանօթութիւնը։*

Բառեր՝ հաւը խօսեցաւ—աքաղաղը կանչեց. օրը բացուեցաւ—լուսացաւ. ելաւ—դուրս եկաւ. մրջիւն—մրջիմ (միջատ). մեղու—մեղրաճանճ. հիւթ—նիւթը, ծուծը. գոյնզգոյն—զանազան գոյնի. մարգագետին—կանաչ տափ, թալա. անտառ—որտեղ շատ ծառեր կան, քօլ, մեշա, ձկնորս—ձուկը բռնող. ուռկան—ձուկը բռնելու գործիք, հնձող—արտը կամ խոտը կտրող-հաւաքող մշակը. մանգաղ—ինչով որ հնձում են. երբէք—ոչ մի ժամանակ։

Ջոկեցէք բոլոր առարկաները, որոնք կենդանի են, ապրում են և ազատ կերպով կարող են մի տեղից միւս տեղը շարժուիլ։—Շնչաւոր առարկաներ։

Ջոկեցէք նմանապէս այն բոլոր առարկաները, որոնք կենդանի չեն, չեն ապրում, կամ թէև կեանք ունին, բայց չեն կարող ազատ կերպով մի տեղից միւս տեղ անցնիլ։—Անշունչ առարկաներ։

10. ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ

Մեր ընտանիքը մեծ չէ. ես ունիմ հայր ու մայր, երկու եղբայր և երկու քոյր. ես ամենից մեծն եմ։ Մենք մի պառաւ տատ էլ ունինք։ Նա շատ սակաւ է տանից դուրս գալիս. միայն ժամ է գնում։ Սա մեզ շատ է սիրում և փայփայում է։

Իմ հայրս շատ է աշխատում. նրա աշխատանքովն ենք կերակրուում և հագնուում ամենքս։

Մայրս տնտեսութիւն է անում. նա հրամայում է ճաշ և ընթրիք պատրաստել. նա գնում է ներքնատունը և մառանը։ Բայց որ իմանաս թէ ես ինչպէս սիրում եմ նրա հետ մառան գնալ։ Ամբողջ օրը մայրս մեզ համար հոգս է քաշում։ Նա սովորեցնում է մեզ խաչակնքել և աղօթել։ Մենք երեկոները, քնելուց առաջ, միշտ աղօթում ենք։

Ես մէկ փոքրիկ քոյր էլ ունէի, բայց նրան տարան գերեզմանատուն և դրեցին սև հողակոյտի տակ։ Մայրս մինչև այսօր էլ լաց է լինում փոքրիկ Մանուշակի վրայ։

Բառեր՝ սակաւ—քիչ, երբեմն. փայփայում է—գուրգուրում է, սիրում է. տնտեսութիւն—տան հոգացողութիւն (տուն-տես). ընթրիք—իրիկնահաց. ներքնատուն—սառատափ, տան ամենաստորին յարկը. մառան—պաշարեղէն պահելու սենեակ. հոգակոյտ—գերեզման (հող-կոյտ)։

Պատմեցէք ձեր ընտանիքի մասին եւ համեմատեցէք այստեղ գրածի հետ։

Գրեցէք այդ միեւնոյնը ուսուց. տուած հարցերով։

Նկատեցէք հետեւեալ բառերի ուղղագրութիւնը՝ պաշարեղէն, մսեղէն, խմորեղէն, փայտեղէն, բրդեղէն, երկաթեղէն...

11. ՊԱՊԸ

Պապը սաստիկ ծերացել էր։ Նրա աչքերը լաւ չէին տեսնում, ականջները ծանրացել էին. նրա ձեռներն ու ոտները ծերութիւնից դողդողում էին, այնպէս որ, գդալը բերանը տանելիս, կերակուրը կաթկաթեցնում էր։

Այս բանը դուր չէր գալիս նրա որդուն ու հարսին. նրանք ծերին իրանց հետ սուփրի չէին նստացնում, այլ մի անկիւնում առանձին տեղ էին տալիս՝ հաց ուտելու։ Մի անգամ, հաց ուտելիս, ծերի ձեռները դողդողացին, ամանը վայր ընկաւ, կոտրուեցաւ։ Հարսն ու որդին սաստիկ բարկացան խեղճ ծերի վրայ և այնուհետև փայտէ ամանով էին՝ կերակուր տալի նրան։

Ծեր մարդը մի թոռն ունէր։ Մի օր մանուկը, յատակի վրայ նստած, տաշեղներից մի բան էր շինում։

Մայրը հարցրեց. «Այդ ի՞նչ ես շինում, որդի»։

—Փայտէ ման եմ շինում, մայրիկ, որ երբ դու և հայրիկս ծերանաք, նրանով կերակուր տամ ձեզ, պատասխանեց մանուկը։

Հայրն ու մայրը նայեցին միմեանց երեսի և ամօթից կարմրեցին. նրանք այնուհետև սկսեցին ծերին շատ պատուով պահել։

1. Ցիշեցէք եւ գրեցէք ազգակցութիւն ցոյց տուող շընչաւոր առարկաների անունները. պապ, տատ, հայր, մայր...

2. Արտագրեցէք այս դասից բոլոր անշունչ առարկաների անունները. նաեւ բոլոր շնչաւոր առարկաների անունները։

Պատմեցէք ձեր պապի կամ տատի մասին, եթէ ունիք։

Առարկայի մէկը՝ պապ, տատ, հայր, մայր, քոյր, մանուկ, տաշեղ, ման, կերակուր...

Առարկայի շատը՝ պապեր, տատեր, մանուկներ, ամաններ...

12. ՊԱՊԸ ԹՈՌՆԻԿԻՆ

Զարը տանեմ իմ թոռնիկի,
Մեռնեմ սիրոյն Անդրանիկի.
Անդրանիկս մի հատիկ է,
Ինձի համար բիւրեղիկ է։

Փափկիկ թըշերն իմ գառնուկի,
Պայծառ դէմքը, ունքեր կամար,
Աստղերի պէս ցոլուն աչերն
Մի-մի արեգ են ինձ համար։

Ակնահուլունք կապեմ կըռնից,
Որ երբ անցնի մէկի դըռնից,
Զար աչք չառնի իմ թոռնիկին,
Հոգուս հատոր Անդրանիկին։

Ցաւը տանեմ իմ թոռնիկի,
Մեռնեմ սիրոյն Անդրանիկի.
Անդրանիկս որբ է մօրից,
Որբ է մօրից, զուրկ չէ հօրից։

Անդրանիկս թող մեծանայ,
Իւր մօր աւանդ չըմոռանայ՝

«Սիրել Աստուած, իւր ընկերին,
Ատել չարը, գործել բարին»։

Բառեր՝ պապ—հօր մայրը, մօր մայրը. թոռն—որդու որդին. անդրանիկ—առաջին զաւակը. բիւրեղիկ—զուտ ապակի, թանկագին քար. ակնահուլունք—խոշոր հուլունք. ցոլուն—փայլուն. արեգ—արեգակ. որբ—հօրից, մօրից զրկուած մանուկ. աւանդ—պատուէր, խրատ, ինչ որ մեռնողը կտակում է մեռնելուց առաջ։

Ո՞վ է որբը։ Ի՞նչպիսի որբեր են լինում։

Ի՞նչպիսի առարկաներ են՝ Աստուած, չարը, բարին—չարութիւնը, բարութիւնը։

13. ԱՌԱՒՕՏԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ

Պայծառ արևը բարձրացաւ երկինքը և տարածեց իւր ոսկեփայլ ճառագայթները, որ արթնացնէ քնած երկիրը։

Առաջին ճառագայթը թռաւ-ընկաւ արտոյտի վրայ։ Արտոյտը թրպչրտաց, թափ տըւեց թևերը, դուրս թռաւ ընից, շատ ու շատ բարձրացաւ և երգեց իւր ոսկեհնչիւն երգը. «Ա՜խ, ինչքան լաւ է առաւօտեան պարզ և թարմ օդի մէջ թռչելը, ի՜նչքան լաւ է, որքան դուրեկան»։

Երկրորդ ճառագայթը ընկաւ նապաստակի վրայ։ Նապաստակը ականջները շարժեց և ուրախ-ուրախ թռչկոտաց դէպի ցօղապատ մարգագետինները՝ վազեց-գնաց նախաճաշիկ անելու հիւթալի խոտերով։

Երրորդ ճառագայթը մտաւ հաւաբունը։ Աքաղաղը թափահարեց թևերը և երգեց՝ ծո՛ւ-ղրո՛ւ-ղո՛ւ։ Հաւերը ցած իջան թառերից, կրկռացին, սկսեցին քջըջել աղբը և ճիճուներ որոնել։

Չորրորդ ճառագայթը ընկաւ փեթակի վրայ։ Մեղուն դուրս սողաց իւր մոմեղէն խցից, կանգնեց փեթակի դռան առաջ, ուղղեց իւր թևերը և բզզալով թռաւ-գնաց մեղր հաւաքելու հոտաւէտ ծաղիկներից։

Հինգերորդ ճառագայթը մտաւ մանկանոցը և ընկաւ փոքրիկ ծոյլ մանուկի անկողնու վրայ ու սկսեց ուղղակի նրա աչքերը ծակծկել. բայց նա շուռ եկաւ միւս կողքի վրայ և նորից քնեց։

Բառեր՝ տարածեց—փռեց. ճառագայթները—շողերը. արտոյտ—աբեղաձագ թռչուն (жаворонокъ). ոսկեհնչիւն—ոսկու նման ձայն հանող. թարմ—թաղա, մաքուր, նոր. ցող—շաղ. ցողապատ—շաղաթաթախ. մարգագետին—կանաչ տափ (лугъ). նախաճաշիկ—առաջին ճաշը (закуска). հիւթալի—սննդարար, հիւթով լիքը. որոնել—պտըրտել. փեթակ—մեղուի տնակը, քթոցը. խուց—փոքրիկ տնակ։

Ի՞նչպիսի մանուկ էր այստեղ նկարագրածը։

Արտագրեցէք բոլոր շնչաւոր առարկաների անունները՝ թիւը փոխելով։—Արտագրեցէք բոլոր անշունչ առարկաների անունները՝ թիւերը փոխելով։

14. ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Արի՛, իմ սոխակ, թող պարտէզ, մէրին,
Տաղերով քո՛ւն բեր տըղիս աչերին.
Բայց նա լալիս է. դու, սոխակ, մի՛ գալ,
Իմ որդին չ՚ուզէ տիրացու դառնալ։

Ե՛կ, աբեղաձագ, թող արտ ու արօտ,
Օրօրէ տըղիս, քընի է կարօտ.
Բայց նա լալիս է. դու, ձագուկ, մի՛ գալ,
Իմ որդին չ՚ուզէ աբեղայ դառնալ։

Թող դու, տատրակիկ, քո ձագն ու բունը,
Վույվույով տըղիս բեր անուշ քունը.
Բայց նա լալիս է. տատրակիկ, մի՛ գալ,
Իմ որդին չ՚ուզէ սրդաւոր դառնալ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՍՍՀ ԵՐԵՎԱՆ ZUUR-ԱՐՄ.ՍՍՀ
Ա. Մասիսյան
11503 — 57

Կաչաղակ ճարպիկ, գող, արծաթասեր,
Շահի զբուցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաչաղակ, մի գալ,
Իմ որդին չ'ուզէ սովդագար դառնալ։

Թող որսըդ, արի, քաջասիրտ բազէ,
Քո երգը գուցէ իմ որդին կ'ուզէ.
Բազէն որ եկաւ, որդիս լռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քընեցաւ։

Բառեր՝ սոխակ—բլբուլ. մերի—անտառ. աբեղաձագ—արտուտիկ. աբեղայ—վարդապետ. տատրակ—աղունակի տեսակ մի թռչուն (горликъ). *կաչաղակ—քըչեղակ* (сорока). *բազէ—ղղըլ-ղուշ, որսի թռչուն* (соколъ). *ռազմի երգեր—պատերազմի երգեր։*

Կրկնեցէք սովորածները՝ առարկայ, շնչաւոր առարկաներ. անշունչ առարկաներ, մտաւոր առարկաներ, հոգևոր առարկաներ. առարկայի անունը, անուան թիւը—մէկը և շատը։ Օրինակներ այս դասից։

Այս ոտանաւորի իւրաքանչիւր տունը արձակ գրեցէք։

15. ԿԱԻԻՃ

Փոքրիկ Նազելին վաղուց գիտէր, որ կաւիճով գրում են գրատախտակի վրայ, որ նրանով կարելի է ձեռներն ու շորերը փոշոտել, որ նա սպիտակ է ու փափուկ և կարելի է փշրել, փոշի դարձնել։ Ուրիշ ոչինչ չէր իմանում Նազելին կաւիճի մասին։ Մի անգամ նա հարցրեց աղախնին.

—Ո՞րտեղից են ստանում կաւիճը։

«Խանութներից», պատասխանեց աղախինը։

—Շատ լաւ. իսկ խանութներում ի՞նչ տեղից է։

«Սարերից... այդպիսի սարեր էլ կան»։

—Հա՛ ուրեմն դա հող է, մտածեց Նազելին և էլ ոչինչ չհարցրեց։

Բայց ո՞րքան զարմացաւ մեր Նազելին, երբ մի անգամ նկատեց գրքի մէջ մի այնպիսի պատկեր, որպիսին նկարած է այստեղ, և նրա տակը կարդաց՝ կաւիճ։ Նազելին վազեց իւր մօր մօտ։

«Մայրիկ, սիրելի մայրիկ, մի՞թէ սա կաւիճ է նկարած»։

—Այո՛, որդի, տեսնում ես, գրած է։

«Բայց մեր կաւիճը այդպէս չէ, մայրիկ»։

—Նա էլ այդպէս կ'երևի, եթէ խոշորացոյցի տակ դնենք։ Խոշորացոյցը մի ապակի է, որ առարկաները ցոյց է տալիս մեծ դիրքով։

Այնուհետև մայրն սկսեց պատմել, թէ ինչից և ինչպէս է դոյանում կաւիճը*)։

Նկատեցէք նշանակած բառերը՝ փոքրիկ Նազելի. խելօք Նազելի. ծոյլ Նազելի. աշխատասէր Նազելի։ Փափուկ

Ուսուցիչը բացատրում է.

Կաւիճը այն մանր կենդանիների բունն է, որոնք շինում են կաւիճէ և կրէ լեռներ։ Դրանք բնակւում են ծովային ջրերում և այնքան մանր են, որ հասարակ աչքով չեն տեսնւում։ Ուսումնականներն այդ մանրիկներին անուանում են ինֆուզորիա։ Նրանք շատ են և իրանց մանր կաշուի մէջ սողում են ջրի յատակում... այնտեղ ապրում են-ապրում ու մեռնում, իսկ իրանց կաշին—վահանը թողնում են ջրի յատակում։ Ջուրն էլ աւազի հետ քշում է նրանց իւր ալիքներով դէպի ծովի ափերը։ Նրանք այնքան շատ են, որ չնայելով իրանց մանրութեան, այդ մեռած մարմինների միմեանց վրայ դարսուելով ծովի յատակից, շատ տարիներ անցնելուց յետոյ, վեր է բարձրանում մի ամբողջ սար։ Երբեմն այդ սարերի վրայ աճում են խոտեր, փշեր և շինւում են քաղաքներ, գիւղեր։ Մեր պատերն սպիտակացնող կիրն էլ քիչ չունի այն ջրային մանրիկների պատեաններից։

կաւիճ. պինդ կաւիճ. ծանր կաւիճ. թեթև կաւիճ։—Սպիտակ փոշի. սև փոշի. դեղին փոշի. կարմիր փոշի։

Նշանակած բառերը մի առարկայ ջոկում են (որոշում են) իրան նման մի ուրիշ առարկայից—ցոյց են տալիս, թէ առարկան ինչպէսի է (ո՞րպիսի է)։

Գրեցէք համառօտ, թէ ո՞ր տեղից է ստացւում կաւիճը։

16. ԹՌՉՆԱԿ

Երէկ բացի ես դռնակը այն բանտի,
Որի մէջը խեղճ թռչնակն էր բանտարկուած.
Նրան տուի ազատութիւն ցանկալի,
Եւ դաշտերին իրանց երգիչը կորած։

Թռաւ-անցաւ նա նուրբ օդը ճեղքելով,
Պայծառ օրուայ թարմութիւնը զգալով.
Թռաւ-անցաւ ազատութիւն շնչելով
Եւ ինձ համար մեղմ, մանրիկ աղօթելով։

Բառեր՝ դռնակ—փոքրիկ դուռը. բանտ—արգելարան, վանդակ. բանտարկեալ—բանտը դնել, տուն գցել. ազատութիւն տուի—արձակեցի. ցանկալի—ինչ որ ինքը կամենում էր, ուզում էր. նուրբ—նօսր, ոչ-թանձր. պայծառ—պարզ, մաքուր. թարմ—թազա. թարմութիւն—նոր լինելը, թազա լինելը. մեղմ—կամաց. մանրիկ—ցածր ձայնով, մաքումը։

Արտագրեցէք որոշող բառերը առարկայի անուան հետ՝ խեղճ թռչնակ, ցանկալի ազատութիւն, նուրբ օդ, պայծառ օր...

Արձակ գրեցէք այս ոտանաւորը։

17. ՍՊՈՒՆԳ

Փոքրիկ Սաթենիկը, հևալով և հաղիւ շունչ քաշելով, ներս վազեց մօր սենեակը և բացականչեց. «Մայրիկ,

մայրիկ, տես, թէ ինչպիսի սև մարդ է անց կենում. նրա վրայ, ոտքից մինչև գլուխը, կախկըխուած են մի տեսակ գեղեցիկ, փափկիկ բաներ, սիրուն ծակոտիներով։ Նրանցից մինին ես ուզում էի ձեռք տալ, բայց որ իմանաս, թէ նա ինչպէս ծիծաղելի կերպով կուչ եկաւ, կ'ասես թէ վախեցաւ ինձանից. իսկ յետոյ ինքն իրան էլի լայնացաւ, բացուեցաւ»։

—Հա՜, հասկանում եմ, ասաց մայրը. դա սպունգ վաճառողն է. գնանք, գնենք միքանիսը. ես վաղուց մտադիր էի գնել Յոլակի համար։ Եւ բռնելով Սաթենիկի ձեռքից, մայրը դուրս գնաց բակը, ուր ներս էր եկել սպունգ վաճառողը։

Մինչև որ Սաթենիկի մայրը ջոկում էր սպունգներից աւելի ճկուններն ու փափուկները, աղջիկն անդադար սեղմում էր կամ մէկ կամ միւս սպունգը. նա սաստիկ զարմանում էր, թէ ինչպէս են նրանք սեղմըւում և նորից բացւում-լայնանում։ Մայրը գնեց մի քանի սպունգ, վճարեց նրանց արժէքը և ծախողը արդէն պատրաստւում էր հեռանալու. բայց Սաթենիկը դեռ էլի իւր փոքրիկ թաթիկներով բռնում էր չէչոտ սպունգները և շարունակ նայում էր կամ վաճառող յոյնին կամ մօրը։

—Դէ՛հ, գնանք, աղջիկս, տեսնում ես՝ ծախողը հեռանում է, ասաց մայրը։

«Ո՞ր տեղից է հաւաքել նա այդքան սպունգները, մայրիկ», հարցրեց Սաթենիկը։

—Գնանք, գնանք. ես յետոյ տանը կըպատմեմ քեզ։

Երբ տուն եկան, մայրը պատմեց աղջկան, թէ ինչ տեղից և ինչպէս է ստացւում սպունգը»։

---

*) Ուսուցիչը պատմում է.

Այն երկիրը, որտեղ ապրում են յոյները, կղզիներով ցրուած է ծովի մէջ։ (Ծովը մի մեծատարած ջուր է, այնքան մեծ, որ երբ

Բառեր՝ հեալով—շուտ-շուտ շնչելով, հեթեթալով. բացականչեց—բարձր ձայն տուեց. մտադիր եմ—միտք ունիմ. գրաւում էր—դիւր էր գալիս, հետաքրքիր էր թւում, սեղմել—հուպ տալ. սեղմուիլ—կուչ գալ, հուպ գալ. վճարել—արժէքը տալ։

Գրաւոր աշխատանք.—Ի՞նչպէս են որսում և մաքրում սպունգները։

Որոշեցէք ընդգծած բառերը՝ մայրը ջոկում էր ճկուն սպունգներ. մայրը ջոկում էր փափուկ սպունգներ։ Մայրը ջոկում էր ճկունները. մայրը ջոկում էր փափուկները։

Առարկայի որպիսութիւնը ցոյց տուող բառերն էլ թիւ ունին. նրանք առարկայի հետ միշտ եզակի են դրւում, իսկ երբ առարկան չկայ՝ յոգնակի։

մի անգամ նրա մէջն ես մտնում, էլ շուտով ցամաքի երես չես տեսնում)։ Այս ծովի ափերի մօտ յոյներից աղքատները լողալով խորասուզւում են ջրի տակը և այնտեղից հանում են այդ սպունգները։ Ջրից նոր հանած ժամանակը սպունգները ամենևին նման չեն լինում մեր գնածներին. նրանք ամբողջապէս ծածկուած են լինում լորձիւնով, այնպէս որ այն խոր ծակոտիները ամենևին չեն նշմարւում։ Այդ լորձիւնը նոյնպէս կենդանի է և ապրում է ծովի յատակում, թէև չի կարող իւր տեղը փոխել։ Բայց քանի որ նրան չեն պոկել իւր ծննդեան տեղից, նա ապրում և շարժում է իւր շօշափուկները։ Այդ շօշափուկներով նա ջրից ընդունում է իրան սնունդը։ Նրանք շատ անգամ բռնում են բաւական մեծ տարածութիւն ծովի խորքում։ Երբ-որ ծովի տակից հանում են նրան, ստիպուած են լինում երկար ժամանակ լուանալով մաքրել այդ անշարժ կենդանու անախորժահոտ լորձիւնը, մինչև որ հասնում են նրա փափուկ, ծակոտկենաւոր մասերին, որոնք հիմա էլ ներս են ծծում ջուրը, բայց հէնց սեղմում ես թէ չէ, նորից դուրս են թողում։ Հէնց իւր այս յատկութեամբ է նա մեզ պիտանի և օգտակար։ Ուրեմն մեր ունեցած սպունգը այն ծովային կենդանու ամրամասը, նրա ոսկրակազմն է։

18. ԳԱՐՆԱՆ ԿԱՐԱՊԵՏ

Մարտըն անցաւ, հասաւ ապրիլ գեղեցիկ,
Հեռու աշխարհից եկաւ ծիծեռնակ.
Բարով դու եկար, գարնան կարապետ,
Բուն շինողներից ամենից վարպետ։

Կռունկը թռաւ, գնաց վերերից,
Սոխակն էլ փախաւ մեր պարտէզներից.
Մէկ դու մնացիր ճնճղուկների հետ,
Սիրուն ծիծեռնակ, գարնան կարապետ։

Պատուհանիս մօտ շինէ՛ քո բունը,
Անուշ ճռուողով երգէ՛ գարունը,
Աչա՛ ձու, հանէ՛ գեղեցիկ ձագեր,
Ու մնա՛ մեզ մօտ մինչև սեպտեմբեր։

Բառեր՝ կարապետ—ճամպայ բաց անող, առաջից գնացող. Կարապետ—տղամարդու յատուկ անուն. վերերից—վերևներից. ճնճղուկ—ծիտ. երգէ գարունը—երգ ասա՛ գարնան մասին, գովիր գարունը։

Արտագրեցէ՛ք որպիսութիւնը առարկայի հետ՝ գեղեցիկ ապրիլ. հեռու աշխարհ. սիրուն ծիծեռնակ. անուշ ճռուողիւն. քնքուշ ձագեր...

Միեւնոյն որպիսութիւնները գրեցէք առանց առարկայի՝ յոգնակի թւով։

Արձակ գրեցէք այս ոտանաւորը։

19. ՄԱՏԻՏ

Ցոլակը շատ սրամիտ մանուկ էր։ Մի օր նա, իւր հօր գրասեղանի առաջ նստած, մատիտ էր կտրում իրան համար. բայց քանի կտրում էր, կոտրւում էր. թէև մա-

տիտ կտրելը մի դժուար բան չէր, բայց այսօր գործը չէր յաջողւում։ Ցոլակը մտածման մէջ էր. նա անուշադիր էր, նրա համար էլ գործը գլուխ չէր գալիս։

—Ի՞նչ ես անում, փոքրիկս, ներս մտնելով ասաց հայրը. երևում է՝ խելքդ ուրիշ բանի վրայ է, նրա համար էլ գործը ձեռիցդ վայր է ընկնում։

«Այո, հայրիկ, ես ուզում եմ իմանալ, թէ ինչպէս է այս սև ու փայլուն չոփը փայտէ ճիպոտի մէջ մտել ու մատիտ դարձել»։

—Է՜, որդի, կ'ուզես հարիւր մատիտ կտրատիր ու կոտրատիր, բայց էլի քու խելքովդ ոչինչ հաստատ տեղեկութեան չես հասնիլ... Դա արդէն շատերին յայտնի է. գրքի մէջ կարդա, հարցրու... իսկ ինչ-որ ամենքն էլ վաղուց գիտեն, նրա մասին հարկաւոր չէ գլուխ ցաւացնել։

«Գրքերի մէջ ես այդ բանին չեմ պատահել, իսկ եթէ դու պատմես, հայրիկ, շատ շնորհակալ կըլինիմ»։

—Շատ լաւ. նայիր այդ կտորներին, որ դու այդտեղ թափել ես. նրանք սև են, նշանակում է՝ ինչի՞ նման են։

«Ածուխի նման են, հայրիկ»։

—Շատ լաւ. բայց նկատիր՝ ածուխն աւելի փափուկ է և, երբ-որ կոտրում ես, հաւասար չէ կոտրւում. իսկ երկաթը, տեսնի՞ ես, ինչպէս է կոտրւում։ Համեմատիր...

«Հասկացայ, այստեղ խառնուած են երկաթն ու ածուխը»։

—Ճշմարիտ է, ասաց հայրը և համառօտ կերպով պատմեց, թէ ինչպէս է պատրաստւում մատիտը*)։

Ուսուցիչը բացատրում է.

Ածուխն ու երկաթ անհաւասար չափով, այսինքն՝ մէկից շատ, միւսից քիչ, հողի տակը խառնըւել են միմեանց հետ, միացել են և դրանից առաջացել է կապարաքարը։ Մարդիկ էլ գտել

Դիտեցէ՛ք եւ զանազանեցէ՛ք՝ կտրել—կտրատել. սրել—սրոտել. քանդել—քանդոտել, փորել—փորփրել. պատռել—պատառոտել. կոտրել—կոտրատել։

Դիտեցէ՛ք հետեւեալ բառերի կազմութիւնը՝ սրամիտ, գրասեղան, կապարաքար։

Նկատեցէ՛ք եւ զանազանեցէ՛ք՝ երկար ճիպոտ, փայտէ ճիպոտ. մեծ սար, կաւիճէ սար. բարձր տուն, քարէ տուն. տափակ կտուր, հողէ կտուր։

—Ի՞նչպէս են պատրաստում մատիտները (գրաւոր)։

20. ՌԵՏԻՆ

Վարդիկը, որ մի փոքրիկ, աշխատասէր ու խելօք մանուկ էր, մի անգամ, դասն արտագրելիս, ը բառի տեղ ա գրեց։ Վարդիկը նկատեց իւր սխալը և սկսեց լաց լինել։

«Լաց մի՛ լինիր, սիրունիկ, ասաց նրան մայրը. քանի թէ լաց ես լինում, վե՛ր առ, ուղղի՛ր»։

—Բայց այն ժամանակ կըկեղտոտուի, մայրիկ. իսկ վարժապետը պատուիրել է, որ մաքուր և անսխալ արտագրեմ։

«Է՜հ, այդ ցաւին էլ ճար կ'անուի. վե՛ր առ ռետինը ու կամաց և զգուշութեամբ քերի՛ր սխալ գրած տառը. միայն զգոյշ կաց, որ թուղթը չծակես»։

—Յետոյ այդ քերած տեղը ի՞նչպէս ը գրեմ, մայրիկ. չէ՞ որ թանաքը կըծծի և աւելի վատ կըլինի։

են նրան, սղոցել են և անց են կացրել ճիպոտի մէջ ու մատիտը պատրաստուել է։ Բայց այս էլ պէտք է իմանաս, որ սարերում գտած կապարաքարով չեն բաւականացել մարդիկ. այժմ նրանք միևնոյն բանը շինում են արհեստական կերպով, այսինքն՝ գործարանում. դրա համար առանձնապէս շինած հնոցներում երկաթը հալում են, նրա հետ ածուխ են խառնում և կապարաքար են պատրաստում. պատրաստելուց յետոյ՝ նրան ջոկըկում են և ստանում են զանազան տեսակներ՝ փափուկ, պինդ... Փափուկ մատիտների մէջ երկաթը սակաւ է, իսկ պինդերի մէջ նա համեմատաբար աւելի է։

«Ա՛յ ինչպէս կ՚անես. զգուշութեամբ քերելուց յետոյ՝ դու նրան կըտրորես գրչահատի կոթով. լաւ տրորելուց յետոյ՝ շուտով կըգրես հարկաւոր տառը և իսկոյն աւազ կ՚ածես վրան... ոչինչ չի նկատուիլ»։

Լացը դադարեց, տառը ուղղած էր արդէն։ Վարդիկն սկսեց իւր մօրը հարցուփորձ անել։

—Ո՞րտեղից է, մայրիկ, այդ պատուական ռետինը, որ այդպէս զարմանալի կերպով ձգւում, մատովդ է փաթաթւում, իսկ երբ-որ բաց ես թողնում, նորից սեղմւում, կուչ է գալիս։ Իսկ այդ միւսը հագցրած է փայտի մէջ և ինչ երկար է ու մեծ... Ո՞րտեղից են այդ բոլոր ռետինները, մայրիկ։

«Մի տեսակ ծառ կայ, ասաց մայրը, որ աճում է տաք երկիրներում. այդ ծառից հիւթ է դուրս գալիս. իսկ այդ հիւթից կամ խէժից մարդիկ պատրաստում են զանազան տեսակ ռետիններ. նրանցից միքանիսը թանաքով գրածի համար են, միւսները մատիտով գրածի համար։ Ռետինից շինում են նոյնպէս կրկնակօշիկներ, կօշիկներ, գնդակներ և ուրիշ շատ բաներ։

Բառեր՝ ռետին—ըէզին. աճում է—դուրս է գալիս, բուսնում է. հիւթ—ծուծը, ջուրը. խէժ—թանձր հիւթ. կրկնակօշիկ—գալոշ։

Գրեցէք միքանի շնչաւոր առարկաների անուններ այս դասից. առարկաների մօտ դրէք իրանց յարմարաւոր որպիսութեան անուններ։

Հետեւեալ անունների մօտ դրէք մի երկրորդ անուն նրանց պաշտօնին համեմատ՝ Վարդան, մայրիկ, վարժապետ, աշակերտ, քոյր, եղբայր, քեռի, մօրաքոյր, ընկեր, ընկերուհի, թագաւոր, թագուհի, (Վարդան վարժապետ. Շուշան մայրիկը)։

21. ԵՐԿՈՒ ՔՈՅՐ

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,
Հոգով դեռ արի, գլխով ալևոր.
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը.
Ոսկի ասացին գիտունք այն դարը։

Ունէր նա երկու մատղահաս աղջիկ,
Մինը խիստ տըգեղ, միւսը գեղեցիկ.
Մի օր տըգեղը ասում է միւսին՝
«Երթանք ծովի ափ, քոյրիկ, միասին»։

Սիրունը գնաց առաջից տրտում,
Տգեղը յետքից ոխ պահած սրտում.
Հազիւ թէ ծովի ափին էր հասած,
Իւր սիրուն քրոջ գլորեց նա ցած։

Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.
«Քոյրիկ, ի՞մ քոյրիկ, փրկէ ինձ մահից.
«Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
«Ա՛ռ, էն քեզ լինի, պարգևէ ինձ կեանք»։

—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ։

«Քոյրիկ, թէ այդ էլ քեզ չի բաւական,
«Կըտամ քեզ ոսկէ պսակ պատուական»։

—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ։

«Քոյրիկ, մի՛ թողնիր դու ինձ անտէրունչ.
«Քեզ սիրուն փեսաս կըտամ անտրտունջ»։

Տգեղի սիրտը դարձել էր լեռ քար,
Քրոջ խնդիրքը թողեց անկատար։

Ձկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,
Բռնեց մարմինը սիրուն աղջկան,
Զրիցը հանեց, դրեց ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ։

Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան,
Լացեց ու առաւ, դրեց ուսի վրան,
Տարաւ իւր տունը այդ անգին գիւտը.
Զորացրուց նորա մարմնի դիպ հիւթը.
Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկրերից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից։
Երբ-որ ամեն բան պատրաստեց կարգին,
Գնաց արքունիք՝ տաւիղը ձեռքին.
Երբ մտաւ դահլիճ շքեղ զարդարած,
Տեսաւ տրգեղին փեսի մօտ կանգնած.
Բացեց բերանը լարերին խփեց,
Հիւրերի առաջ բարձրաձայն երգեց.

«Հնչէ, իմ տաւիղ, հնչէ համարձակ.
«Հարազատ քոյրս խլեց իմ պսակ.
«Լսէ իմ ծնող, լսէ, սիրական,
«Հարազատ քոյրս խլեց իմ փեսան.
«Լսէ, ժողովուրդ, լսէ անխբռով,
«Հարազատ քոյրս գլորեց ինձ ծով»։

Միւս օրը դահիճք խարոյկ շինեցին,
Մահապարտ քրոջ մէջը գլորեցին։
Հուրը պըլպըլաց, աղջիկը կանչեց.
«Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց»։

Բառեր՝ արի—քաջ, առողջ. ալեոր—ծեր, սպիտակ մազերով ծածկուած. գիտունք—գիտացող, ուսումով մարդիկ. մատղահաս—ջահել տարիքով. ոխ—քէն, ջիգր. մանեակ—վզի զարդ. բնաւ—ամենևին. անտրտունջ—առանց գանգատուելու, առանց փնթփընթալու. լեռ քար—պինդ քար, ժայռ. գիւտ—գտնուածը. տաւիղ—քնար, սազ. արքունիք—թագաւորի պալատը. լարեր—տաւիղի թելերը, սիմերը. դահիճ—պաշտօնեայ՝ մարդկանց կախելու, գլխատելու, պատժելու համար. հուր—կրակ. իմ մեղաց համար—իմ մեղքերի համար։

Դիտեցէ՛ք առարկաների արածը, գործածը՝ Սիրունը ասում է՝ ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ... ես այն քեզ կը տամ... դու պարգեւի՛ր ինձ կեանք։

Տգեղը գնաց, ասաց, կանչեց...

Ձկնորսը ձգեց, բռնեց հանեց, դրեց, ցանեց...

Աշուղն անցաւ, տեսաւ, լացեց, առաւ, դրեց, տարաւ, չորացրեց, շինեց, հիւսեց...

Դու փրկէ, լսէ, հնչէ... դու մի յուսար, մի թողիր...

Ընդգծած բառերը ցոյց են տալիս, թէ առարկան ինչ է անում, ինչ կ'անէ, ինչ պիտի անէ, կամ ինչ պիտի չանէ...

22. ԿՐԱԿ

Սիմոնը գնաց դաշտը։ Շատ ցուրտ էր և անձրև էր գալիս. նա դողդողում էր ամբողջ մարմնով։ Սիմոնը մտաւ անտառը, չոր ցախ ժողովեց, գրպանից հրահանը հանեց, զարկեց կայծաքարին և կրակ արեց։ Նա տաքացաւ, շորերը ցամաքեցրեց և իւր չոր հացի կտորը տաքացրեց, կերաւ։

Կրակի առաջ նստած՝ Սիմոնը մտածում էր. «Ի՜նչ լաւ բան է կրակը. առանց կրակի ոչ կերակուր կարելի է եփել և ոչ տաքանալ։ Տես, որքան գործ է շինւում դարբնոցում և գործարաններում։ Եթէ կրակ չլինէր, մենք երկաթից ինչպէս պիտի շինէինք պայտեր, խոփ, կացին և ուրիշ շատ բաներ։ Ճշմարիտ է, երբեմն կրակից մենք վնաս ենք ստանում, բայց այդ էլ մեր անզգուշութիւնից,

մեր յիմար անհոգութիւնից է լինում։ Մենք արեգակից էլ ենք տաքանում. նա էլ կրակի նման այրում է երկրը։ Առանց արեգակի ոչինչ չէր աճիլ՝ ոչ դաշտերում, ոչ անտառներում և ոչ պարտէզներում, և բոլոր կենդանիք ու մարդիկ կըմեռնէին քաղցածութիւնից. իսկ այժմ Աստուծու ողորմութեամբ ապահով ապրում ենք։

Բառեր՝ հրահան—չախմախ. աբեթ—դաւ (трутъ). կայծաքար—չախմախաքար. դարբին—երկաթագործ. դարբնոց—դարբնի խանութը. գործարան—ուր շինում են զանազան գործուածքներ. պայտ—ձիու նալը. խոփ—գութանի երկաթը, որ հողը բարձրացնում, շուռ է տալիս։

Գրաւոր պատասխաններ ուսուցչի տուած հարցերին։

Մենք ինչ ենք անում՝ տաքանում ենք, շինում ենք, մըրսում ենք...

Սիմոնն ի՞նչ էր անում՝ դողում էր, մտածում էր...

Սիմոնն ինչ արաւ՝ մտաւ, ժողովեց, հանեց, զարկեց...

23. ԴԱՐԲԻՆ

Կրանը ձեռքին, զընդանն առաջին,
Քիթ-երես մըրոտ, դարբնոցի միջին,
Կաշուէ գոգնոցը առաջը կապած,
Լրռիկ կանգնած է մեր Խաչոյ դարբին։

Փուքսը—փու-հա-փու—փչում է, փչում,
Կայծեր ու մոխիր դէս ու դէն փռում.
Երկաթի մի շերտ հնոցը կոխած,
Սաստիկ տաքիցը վառում, կարմրում։

Խաչոն հանում է երկաթի շերտը,
Զընդանի վրայ կռանով ծեծում,
Շինում նրանից պայտ, մեխ ու կացին
Եւ իսկոյն ջրի տաշտակը կոխում։

Թշշում է երկաթն ցուրտ ջրի միջին,
Ամպի պէս փրոում տաք-տաք գոլորշին,
Կրկին ալնդանում, կրկին փափկանում,
Մինչև պատրաստուած շըպրտում գետին։

Այսպէս ամբողջ օր մեր դարբին Խաչոն
Կրակի առաջ, այն կեղտ ու մըրում,
Մի կտոր չոր հաց ճարելու համար
Կուշ-ձիգ անելով իւր կեանքն է մաշում։

Բառեր՝ կռան—մեծ չաքուճ. մուրճ—սովորական չաքուճ. զնդան—սալը. շերտը—կտորը. գոլորշի—շոգի։

Արտագրեցէք առարկան եւ նրա արած գործողութիւնը։

Այդ գործողութիւնները, իրանց նշանակութեանը նայելով, խմբերի բաժանեցէք։

24. ՕԴ

—Դու օդ տեսնո՞ւմ ես։

—Նա միշտ քեզ մօտ է և դու նրան չե՞ս տեսնում։

—Բայց կարելի՞ է լսել, թէ ինչպէս է ձայն հանում օդը։

—Տեսնենք։

Ահա քամին զօրանչում է խողովակների մէջ և սուլելով ներս է մտնում տան ամեն մի բացուածքից. ահա նա խփում է պատուհաններին և սաստիկ փոշի է բարձրացնում ճանապարհներին։

—Իսկ ի՞նչ բան է քամին։

Նա օդն է, որ շարժւում է—մի տեղից միւս տեղ է փախչում։ Փախչելու ժամանակ նա զարկւում է որևիցէ առարկայի և լսւում է աղաղակ, շվվոց։ Երբ փչում ես փողդ, կամ սրինգ ես ածում, կամ մտրակդ պտրտացնում ես—ամեն անգամ ձայն է լսւում։ Փորձի համար մի թղթի

պարկ շինիր և մի փոքրիկ ծակ թողելով՝ փչիր, ուռցրու նրան, իսկ յետոյ բռունցքով խփիր այդ փչած պարկին. պարկը սաստիկ կըճայթի և կըպատռուի։ Սա օդն էր, որ դու լցրել էիր նրա մէջ քո բերանից։—Երբ որ վազում ես, զգում ես, թէ ինչպէս է խփում օդը երեսիդ։ Նշանակում է՝ նա միշտ քեզ հետ է և դու նրանով ես շունչ քաշում։ Առանց օդի դու մի րոպէ էլ չես կարող ապրել։ Երբ-որ դու լողանալիս, ջրի տակն ես անում, քո չորս կողմդ ջուր է լինում։ Բոլորովին այդպէս էլ օդն է շրջապատում քեզ ցամաքի վրայ և դու նրան չես տեսնում այն պատճառով, որ նա շատ նուրբ է և թափանցիկ։ Օդը մինչև անգամ քո ներսդ էլ է մտնում։

Բառեր՝ զօղանջում է—զընգ-զնգում է. խողովակ—լուլա (труба). սուլել—շվշվացնել. բացուածք—ճեղք. աղաղակ—ձայն, բղաւոց. փող—խողովակ, զուռնա, սրինգ—շվի. մտրակ—զամշի. բռունցք—դմբուզ. նուրբ—բարակ, նօսր. թափանցիկ—պարզ, լոյս անցկացնող։

Հարցական խօսք (նախադասութիւն). Նկարագրական խօսք։

25. ՔԱՄԻՆ ԵՒ ՆԱՒԵՐԸ

Ծովի երեսին հանդարտիկ քամին
Ճեմում է ազատ՝ ծիծաղը դէմքին.
Փոքր ու մեծ նաւեր՝ առագաստ բացած,
Նորա ժպիտին նայում են յառած.
Քամին հնչում է յաջողակ ու մեղմ,
Նոքա խաղում են, ճեմում քաղցրադէմ.
Կանգնում է քամին, գժւում, բորբոքւում,
Տանջւում են նաւերն, ողբում ու սրգում։

Ես ճեմում եմ, դու ճեմում ես, նա ճեմում է. մենք ճեմում ենք, դուք ճեմում էք, նրանք ճեմում են։
Ես ճեմեցի, դուք ճեմեցիք...
Ես կըճեմեմ, դուք կըճեմէք...
Ես պիտի ճեմեմ, դուք պիտի ճեմէք...

Գործողութեան անունն էլ, առարկայի անուան պէս, երկու թիւ ունի՝ եզակի եւ յոգնակի։

«Արտագրեցէ՛ք այս դասից՝ առաջ եզակի գործողութիւնները, յետոյ յոգնակի։

Հարցերով վերլուծել բոլոր նախադասութիւնները (առանց տերմինների) հետևեալ կերպով՝
Ճեմում է (Ի՞նչը)՝
Քամին ճեմում է (Ի՞նչպիսի քամին)
Հանդարտիկ քամին ճեմում է.
Ո՞րտեղ է ճեմում...
Ի՞նչպէս է ճեմում...
Էլի Ի՞նչպէս է ճեմում...



II. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՒ ԲՈՒՍԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԻՑ

26. Շ Ն Ի Կ

«Ապա՛, սիրուն շնիկ, կարդա՛, թէ ինչ է գրած իմ գրքումը», ասաց Հայկը իւր փոքրիկ շանը։

«Ի՞նչ իմ բանն է գիր կարդալը, ասաց շունը. ես տունը կըպահպանեմ, գիշերները չեմ քնիլ ու միշտ կըհաչեմ, գայլերին կըվախեցնեմ, որսի կըգնամ, նապաստակ կըբռնեմ, բադեր կըգտնեմ. իմ կողմից այսքանն էլ բաւական է»։

Շունը որպէս ընտանի կենդանի. նրա նկարագիրը (իրաւնական), տուած օգուտը և վնասը (երբ նա կատաղում է)։

Կոչական բառերի ուղղագրութիւնը. շեշտի եւ երկարի գործածութիւնը։

27. Կ Ա Տ Ո Ւ

Փիսիկ-փիսիկ, դու չար փոքրիկ, շատ սիրուն ես, խորամանկ ես, մետաքսապատ թաթեր ունիս, սուր եղունգով մատներ ունիս։ Ականջներդ շուտ են լսում, մեծ աչքերդ մթնում փայլում, երկար բեխերդ ոլորած, խեղճ մկներին մահ ես նիւթում։

Քո ընկերիդ երբ տեսնում ես, պոչդ այս-այն կողմն ես շարժում, մէջքդ ծալում, կըռացնում, աչքերդ փակ մըռռացնում, բայց թէ յանկարծ մի խեղճ մուկիկ մի անկիւնից դուրս է ընկնում, քո պողպատէ թաթիկներով գլխին խփում ես, սպանում։

Կատուն. նրա նկարագիրը. օգուտը. վնասը. համեմատութիւնը շան հետ։

Երկարը (՞) եւ նրա գործածութիւնը։



28. Ձ Ի

Ձին գեղեցիկ կենդանի է։ Նա, երբ-որ ուրախ է, խրխնջում է եռանդով, ականջները վեր է ցցում, աչքերն այս ու այն կողմը ոլորում, վիզը սիրուն կռացնում և իւր ամուր սմբակներով գետինը թակում է։ Ձին պարանոցի վրայ երկար բաշ ունի, որի մի փունջը, երկու մանրիկ ականջների միջով, ծածկում է նրա ճակատը. յետևի կողմը նա ունի հերարձակ ագի, որ տէրերը, թամբելուց յետոյ, կշկռում, կարճացնում են, կամ սանրում են ու երկար ձգուած բաց թողնում։

Ձիու բերանը սանձ են դցում, մէջքին սիրուն թամբ են դնում, փորքաշը կապում, կրծկալը պնդում, երկու կողմից ասպանդակներ կախում, յետոյ հեծնում ու քշում, ուր որ սրտերն է ուզում։

Ձիու սմբակները պայտում են, որ ոտները չվնասուին։ Ձին արագ և գեղեցիկ գնացք ունի։ Նա ուժեղ կենդանիներից մինն է։ Երբ աշխոյժ երիվարը չափ է ընկնում, գետինը նրա ոտների տակ տատանուում է։

Ձին որպէս ներկայացուցիչ միասմբակների. նրա նկարագիրը. օգուտը. նմանութիւնը և զանազանութիւնը միւս սմբակաւորներից։
Տառ, վանկ, բառ։

29. ՏԽՈՒՐ ՁԻ

—Ի՞նչ ես խրրխընջում, իմ ձի եռանդուն,
Ինչո՞ւ ես այդպէս գլուխդ կախել.
Ինչո՞ւ, ինձ ասա, բաշդ չես շարժում,
Ձես կրծում բերնիդ ոսկեփայլ սանձեր։

Մի՞թէ ես քեզ չեմ պատուում ու քորում
Եւ կամ քեզ դարի առատ չե՞մ տալի.
Մի՞թէ սարքդ չէ սիրուն, շողշողուն,
Կապդ ու փորքաշդ չե՞ն աբրեշումի.
Երկզոյգ պայտերդ չե՞ն արծաթաջրած,
Ասպանդակներդ ոսկով չե՞ն պատած։

Տխուր ձին ինձի այս պատասխանեց.
«Ես նորա համար եմ այսչափ տրտում,
Որ որոտմունքի ձայներ եմ լսում.
Ահա փողերի թինդ ու դղրդիւն,
Սրբերի ճայթիւնն աշխարհ է լցնում։

Ես խրրխընջում եմ մորմոքիչ ձայնով,
Պատճառ՝ զգում եմ, որ հովիտներով
Երկար չեմ վազիլ, պատուով չեմ ապրիլ.
Իմ փայլուն սարքով էլ չեմ պըճնըվիլ։

Թշնամին անգութ—ես այդ զգում եմ—
Իմ ողջ սարքերս պիտի կողոպտէ
Եւ այս արծաթեայ երկզոյգ պայտերս
Թեթև ոտներիցս նա պիտի պոկէ»։

Հարցական և կոչական բառերը և նրանց ուղղագրութիւնը։



30. ԿՈՎ

Կովը ձիու չափ գեղեցիկ չէ և ոչ էլ նրա չափ ուժեղ, բայց օգտարարութեան կողմից նա ոչ մի ընտանի կենդանուց յետ չի մնալ։

Կովի դունչը լայն է, ականջները դէպի այս ու այն կողմն են ցցուած։ Նա վերին ծնօտի վրայ առաջնատամներ չունի, այդ պատճառով էլ կծել չէ կարող, բայց դրա փոխանակ կարող է հարու տալ իւր երկու սուր եղջիւրներով։

Կովի ճակատը տափակ է, վիզը բարակ, ողնաշարը դուրս ցցուած, կողքերը փքուած, ոտները կարճիկ, կճղակները բաժանուած, պոչը վրձնաձև։

Նա իւր կերակուրը երկու անգամ է ուտում. առաջ

խոտը պոկում է, փոքր ինչ ծամծմում ու կուլ տալիս, յետոյ երբ-որ բաւական պաշար է հաւաքւում, կանգնում կամ նստում է մի ապահով տեղ, կուլ տուածը նորից բերանն է բերում և հանգիստ կերպով որոճում է, այսինքն իւր տափակ սեղանատամների տակ նորէն լաւ աղում, մանրացնում է։

Ամենայն առաւօտ և երեկոյ կաթնատու կովը հանդիցը տուն է գալիս, բառաչում է-բառաչում ու տանտիկնոջը կանչում.

«Արի՛, արի՛, տանտիկին,
Նայիր իմ լիք ծրծերին.
Գոգնոցըդ կապիր,
Առատ կաթ կըթիր.
Միայն հորթուկիս,
Սիրուն ձագուկիս,
Բաժինը թողես՝
Կաթկալի կուրծքս
Իսպառ չըդարդկես»։

Կովը որպէս ներկայացուցիչ կճղակաւոր կենդանիների. նրա տուած օգուտը. համեմատութիւն միասմբակների հետ։

31. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԷՃԸ

Կովը, ձին և շունը վիճում էին միմեանց հետ, թէ տէրը նրանցից ո՞րին աւելի է սիրում։

«Ի հարկէ նա ինձ ամենից դ շատ է սիրում, ասում էր ձին, ես նրա արօրն ու ցաքանը քաշում եմ, անտառից նրա համար փայտ են բերում. նա շատ անգամ հեծնում է ինձ և քաղաք է գնում. նա առանց ինձ բոլորովին կորած կըլինի»։

—Ո՛չ, մեր տէրն ինձ աւելի է սիրում, ասաց կովը. քո արածդ ի՞նչ է, որ մեծ-մեծ էլ խօսում ես. դրա մեծագոյն մասը իմ եղբայր եզն էլ կարող է կատարել. իսկ ես նրա բոլոր ընտանիքը կաթով կերակրում եմ։

«Դուք երկուսդ էլ սխալւում էք, օտնաց շունը. մեր տէրն ինձ ամենքիցդ էլ աւելի է սիրում, որովհետև նրա բոլոր հարստութիւնը ես եմ պահպանում»։

Կենդանիների տէրը լսեց այս վէճը և ասաց նրանց. «Ձուր տեղը միմեանց հետ մի՛ վիճէք. դուք ամենքդ էլ ինձ հարկաւոր էք և ձեզանից ամեն մինը լաւ է իւր տեղը։

Բառ և խօսք—նախադասութիւն։
Ստորակէտի, միջակէտի և վերջակէտի գլխաւոր կանոնները. չակերտ և տիրէ (գիծ—)։

32. ԿԹԵԼ ԵՒ ՀԱՐԵԼ

«Ասա՛, տեսնեմ, մեր գիւղերում
Կովերն ի՞նչպէս են կըթում»։

—Ահա այսպէս են կըթում.
Հորթը կապում մօր ծընկնից,
Ծիծը խլում գաւակից,
Կովկիթն իրանց ձեռն առնում,
Ապա կողքին կըգկըզում.
Փը՛ռ, բը՛ժժ,
Փը՛ռ, բը՛ժժ...
Ահա այսպէս են կըթում,
Փոքրիկ հորթին լացացնում։

—

«Ո՞նց են հարում խընոցին,
Հէնց էսօր էլ հարեցին»։

—Ահա այսպէս հարեցին.
Թոկը ծառից կապեցին,
Հաստ խնոցին կախեցին,
Երկու օրուայ հաւաքսը
Նրա մէջը ածեցին,
Տաք ու հով ջուր խառնեցին
Եւ ծայրերից բռնելով,
Տարան-բերին, շարժեցին.
Թրը՛խկ, չրը՛խկ,
Զրը՛թկ, թրը՛խկ...
Ահա այսպէս հարեցին,
Դեղին կարագ հանեցին։

Արձակ պատմեցէք, թէ ինչպէս են կթում կովը. ինչպէս են կարագ հանում. ինչ է իւղը, թանը, շորը, սերը, դայմաղը, ինչպէս են մերում մածունը։

33. ՈՉԽԱՐ

Ասում են թէ ոչխարը յիմար է, ես էլ կարծում եմ, որ այդ ճշմարիտ է։ Հրդեհի ժամանակ ոչխարներն իրանք իրանց ընկնում են կրակի մէջ, իսկ երբ-որ գայլ են տեսնում, փայտի պէս մնում են իրանց տեղը և յիմարաբար կճղակներով գետինը թակում են։

Բայց մեր ինչի՞ն է պէտք ոչխարի խելքը. մեզ հարկաւոր է նրա բուրդը՝ գուլպայ, շալ և մահուդ գործելու համար, նրա ճարպը՝ սապոն և մոմ շինելու, կաշին՝ կօշիկների և մուշտակների, իսկ միսը՝ խորովելու համար։

—Ի՞նչ են շինում ոչխարի կաթից. ի՞նչպէս են շինում պանիրը։

34. ԳԱՌԸ ԳԱՅԼԻ ՄՈՐԹՈՎ

Մի օր մէկ գառը, չեմ գիտում ինչ էր,
Խելքին ինչ տեսակ քամի էր փչէլ,
Գըցեց իւր վըրայ մի գայլի մորթի,
Գընաց, խառնուեցաւ հետը իւր հօտի։

Բայց երբ շների աչքովըն ընկաւ,
Ասին՝ անտառից ահա գայլ եկաւ.
Գոռում-գոչումով վրան վազեցին,
Բերաններն առան ու գըզգըզեցին։

Լաւ էր, որ շուտով հովիւը տեսաւ,
Փայտ ու մահակով նոյն տեղը հասաւ.
Ու խեղճ գառնուկը կատղած շների
Սուր ատամներից հազիւ փրկուեցաւ։

Եւ մեր գառը հազիւ հազ,
Արիւնաթաթախ ու նըւազ,
Թոյլ ոտները քաշ տալով,
Հասաւ գոմը մի կերպով։

—Ի՞նչ կըլինէր, եթէ հովիւը չտեսնէր...
Արձակ գրեցէք այս ոտանաւորի բովանդակութիւնը։

35. ԽՈԶ

Շատ կեղտոտ է մեր խոզը, կեղտոտ է և շատակեր. ամեն բան ուտում է, ամեն բան ջարդում, տիղմերի մէջ այնպէս է թաւալւում, կ՚ասես թէ պարզ ջրի մէջ լողանալիս լինի։

Խոզի կնճիթը գեղեցիկ չէ—բութ է, քիթը գետնին

է հանում, բերանը՝ ականջներին, իսկ ականջները կեղտաշորի պէս կախուած են։ Ամեն մի ոտի վրայ խոզը չորս կճղակ ունի։ Նրա պոչը ոլոր է, ողնաշարը դուրս ցցուած. ողնաշարի և պարանոցի վրայ կոշտ մազեր են դուրս եկած։ Խոզը երեքի չափ ուտում է, հինգի չափ հաստանում. տէրերն էլ նրան լաւ պահում են և շատ ուտացնում, որովհետև նրա ճարպը և մազը շատ լաւ գին ունին։

Համեմատեցէք խոզը ոչխարի հետ։

36. ԽՈԶԸ ԿԱՂՆԻ ԾԱՌԻ ՏԱԿ

Խոզը, հաստարմատ կաղնու տակ կանգնած,
Կերաւ կաղինը, գլուխը կախած.
Մինչև կոկորդը կերաւ, լցուեցաւ,
Ապա կաղնու տակ հանգիստ քընեցաւ.

Յետոյ զարթելով՝ բացաւ աչքերը
Եւ բութ կընճիթով ըսկսաւ փորել
Այն կաղնի ծառի հաստ արմատները,
Որից այդ ժամին սնունդ էր առել։

«Չէ՞-որ այդ բանը ծառին վնաս է,
Նրան վերևից ագռաւը կ'ասէ.
Եթէ այդպիսով արմատը բանաս,
Նա կըչորանայ, այդ լաւ իմանաս»։

—Է՛հ, ինձ ի՞նչ վնաս, թէ կըչորանայ,
Ցածից ասում է նրան խոզն ագահ.
Ես դրա մասին իսկի չեմ ցաւում.
Կաղինն է իմս, նա է գիրացնում։

Ծառը բարձրից՝ «ապերախտ, ասաց,
Ուստի են թափւում կաղինները ցած.
Գէթ կարենայիր մի վերև նայել
Եւ կոյր աչքովդ այդ բանն ստուգել»։

Արձակ գրեցէք այս ոտանաւորի բովանդակութիւնը։

37. ԱՂԱԻՆԻՆԵՐ

Սիրուն աղաւնիներ, թաւ-ոտն թռչուններ, կորին նստելով, միմեանց նայելով, իրար սիրում են, միշտ համբուրւում են և ձագուկներին մնաս բարով ասելով, դէպի դաշտն են շտապում, հատիկներ են հաւաքում, քուչերում փափկացընում, իրանց փոքրիկ ձագերին նախաճաշիկ պատրաստում։ Իսկ բնի մէջ ձագերը, քնքուշ աղաւնեակները, նստած են մնում, ուտել են ուզում։ Մայրը տուն է յետ դառնում, փոքրիկներին կերակրում։

Վանկերի չափին նայելով՝ բաժանեցէք այս նիւթը տողերի եւ արտագրեցէք։

38. ԾԻԾԵՌՆԱԿ

Ծիծեռնակը, տես, ամենևին չի հանգստանում. ամբողջ օրը թռչում է, ծղօտներ է հաւաքում, կտուցովը կաւ է կրում, իւր համար բուն է շինում։ Բունը շինեց, վերջացրեց, մէջը երեք ձու ածեց, նրանց վրայ շարունակ երեք շաբաթ պինդ նստեց, փոքրիկ ձագեր գոյացրեց։ Ձագերը որ դուրս եկան, բերանները բաց արին և կերակուր խնդրեցին։ Ծիծեռնակը թռաւ, դաշտը դուրս եկաւ, մժեղներ բռնեց, նրանց կերակրեց։

Ժամանակը հասաւ. ձագերի փետուրները դուրս եկան. նրանք թեւաւորուեցան, իրանց ընից դուրս թռան, հեռու ճանապարհ ընկան՝ կապոյտ ծովերի, մութ անտառների, բարձր սարերի վրայից անցան...

Ձմեռը անցաւ. գարունը եկաւ։ Ծանօթ ծիծեռնակը նորից ետ դարձաւ, իւր բունը գտաւ, նորան կարկատեց, նոր ձուեր ածեց, նոր ձագեր հանեց, պահեց, պահպանեց, աշնանը նորից նոյն կարգով թռոցրեց։

Պատմեցէք թռչունների շուն. էլի ինչ չուող թռչուններ գիտէք։

Վանկերի չափին նայելով՝ բաժանեցէք այս նիւթը տողերի և գրեցէք ձեր տետրակներում։

39. ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆՈՒ ԵՐԳԸ

Ծիծեռնակ—ծիծեռնակ, դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ուր, ինձ ասա, թռչում ես այդպէս արագ։

Ա՛խ, թռիր, ծիծեռնակ, ծնած տեղս—Աշտարակ,
Անդ շինիր քո բունը հայրենի կտուրի տակ։

Անդ հեռու ալեոր հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իւր որդուն սպասում է օրէ-օր։

Երբ տեսնես դու նորան, ինձնից շատ բարև արա,
Ասա՝ թող նստի լայ իւր ամբաղդ որդու վրայ։

Դու պատմէ, թէ ինչպէս աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով կեանքս մաշւել, եղել կէս։

Ինձ համար ցերեկը մութ է շրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս քունը մօտ չի գալիս։

Ասիր, որ չբացուած, թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ՝ հայրենի հողից զրկուած։

Դէ՛հ, սիրուն ծիծեռնակ, հեռացիր, թռիր արագ,
Դէպի Հայոց աշխարհը՝ ծնած տեղս—Աշտարակ։

—Ո՞վ է խօսում. ո՞ւմ հետ է խօսում. ի՞նչ է ասպրում։

40. ԿԱՂԱՄԲԻ ԹԻԹԵՌ

Մանուկը պարտէզում բռնեց մէկ սպիտակ թիթեռ և բերեց իւր հօր մօտ։

«Դա շատ վնասակար թիթեռ է, ասաց հայրը. եթէ դրանք բազմանան, մեր կաղամբը կ'ուտեն, կ'ոչնչացնեն»։

—Մի՞թէ սա այնչափ ագահ է, հարցրեց մանուկը։

«Ոչ թէ ինքը թիթեռն է ագահ, այլ դրա թրթուրը, պատասխանեց հայրը։ Այդ թիթեռն ածում է շատ մանր ձուեր, իսկ այդ ձուերից դուրս են սողում որդունքներ, որոնք թրթուր են անուանւում։ Թրթուրը շատ ագահ է. նա ուրիշ գործ չունի, բացի ուտելն ու մեծանալը։ Երբ նա մեծանում է, պատենաւորւում է։ Այդ միջոցին նա ոչ ուտում է, ոչ խմում, այլ անշարժ ընկած է։ Մի-քանի ժամանակից յետոյ նրանից թիթեռ է դուրս գալիս, ինչպէս ահա այդ բռնածդ։ Այդպէս կերպարանափոխւում է ամեն մի թիթեռ. ձուերից դոյանում են թրթուրներ, թրթուրներից պատենաւորներ և պատենաւորներից՝ թի-թեռներ։ Իսկ թիթեռները ձու են ածում ու մեռնում։

Թիթեռների կերպարանափոխութիւնը (պատմել)։

41. Զ Ա Տ Ի Կ

Որդին. Նայիր, հայրիկ, ինչպիսի գեղեցիկ, կլորիկ

բզեզ եմ բռնել։ Սրա գլուխը սև է, թևերը կարմիր և թեւերի վրայ բծեր կան։ Մի՞թէ սա կենդանի է, հայրիկ. ամենևին չի շարժւում։

Հայրը. Կենդանի է, բայց մեռած է ձևանում. իւր վեց ոտները ծալել, փորիցն է կպցրել, բեղերը թաղցրել է և սպասում է, որ դու նրան վայր դցես խոտերի մէջ։ Դրա անունը զ ա տ ի կ է. դա շատ օգտակար բզեզ է։ Զատիկը և աւելի էլ դրա թրթուրները ուտում-ոչնչացնում են շատ վնասակար կանաչագոյն միջատներ, որոնք խմբովին կպչում են տերևներին և մեծ վնաս են տալիս նրանց։

Որդին. Նայիր, հայրիկ, բզեզն արթնացաւ և բարձրացաւ մատիս ծայրը. այնտեղից նա ուր կըգնայ։

Հայրը. Ահա կըտեսնես. մտիկ տուր, թէ նա ինչպէս շարժում է իւր կարծր վերնաթևերը, իսկ նրա տակից հանում—չռում է իւր իսկական թևերը, որոնք թեթև են և թափանցիկ։

Որդին. Ահա թռաւ նա. ինչ խորամանկն է եղել։

42. ԹԻԹԵՌ ԵՒ ՄԱՆՈՒԿ

Մ Ա Ն Ո Ւ Կ

Սիրուն թիթեռ, ինձ ասա,
Թէ ինչով ես դու ապրում.
Ամբողջ օրը խաղում ես,
Ի՞նչպէս է որ չես յոգնում։

Թ Ի Թ Ե Ռ

Սիրուն կանաչ դաշտերում
Ես ապրում եմ համարձակ,

Ծաղկանց բուրմունքը անուշ
Իմ կերակուրն է միակ։

Բայց իմ կեանքը շատ կարճ է,
Նա մի օրից չէ երկար.
Բարի եղիր, ով մանուկ,
Խնայիր ինձ, ձեռք մի տար։

43. Ա Յ Գ Ի

Այգիները երկու տեսակ են՝ պտղաբեր և հասարակ։ Հասարակ այգիները սովորաբար տների առաջ կամ քաղաքի զանազան թաղերումն են լինում՝ զբօսանք անելու համար։ Պտղաբեր այգիները մեծ մասով քաղաքից դուրս են լինում։ Այգիները շրջապատում են ցանկով, պատով կամ ճաղերով (վանդակներով)։ Այգու մէջ տնկում են պտղատու ծառեր, թփեր և պարտիզի ծաղիկներ։ Գեղեցիկ հասարակ ծաղիկներ էլ են բուսնում այգիներում։

44. Պ Ա Ր Տ Է Զ

Պարտէզները տների մօտ են շինում և չորս կողմից ցանկ կամ պատ են քաշում։ Պարտէզը շատ անգամ մշակում է պարտիզի տէրը, երբեմն էլ պարտիզպանը։ Պարտիզի մէջ շինում են մարգեր (ածուներ) և ցանում են տեսակ-տեսակ ծաղիկներ ու բանջարներ։ Պարտիզում տնկում են նաև պտղատու ծառեր։ Շատ ծառեր էլ կան, որոնք պտուղ չեն տալիս, բայց սիրուն, անուշահոտ ծաղիկ ունին։ Պարտիզին վնաս են տալիս թռչունները, ընտանի կենդանիները և որդերը։ Տաք եղանակին մարգերը ջրում են։ Պարտիզի բանջարեղէնները մարդիկ գործ են

ածում իբրև կերակուր, իսկ անպէտք մասերը տալիս են անասուններին։ Եթէ պարտիզում միայն բանջարեղէն է ցանած՝ բանջարանոց կամ ընդէզ է կոչւում։

45. ԾԱՂԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ

Վ Ա Ր Դ

Ինձ ամենքը կոչում են
Ծաղիկների թագուհի,
Որովհետև ծաղիկս
Սիրուն գոյն և հոտ ունի։

Թէև իմ կանաչ թուփը
Շատ մարդու ձեռք կը ծակի,
Բայց այս անմեղ յանցանքը
Ինձ ամեն մարդ կընների։

Շ Ո Ւ Շ Ա Ն

Իմ ըսպիտակ կոկոնում
Անուշ բուրմունքներ կան շատ,
Եւ ոսկենման փոշի
Մեղուներին բազմաշխատ։

Իմ ցօղունս է նազուք,
Եւ գագաթս գեղեցիկ,
Տերևներս ընդարձակ
Եւ ինքս եմ խիստ հեզիկ։

Իմ հիւրասէր թերթերում
Մեղու, մրջիւն, թէ թիթեռ,

Կարող են հանգիստ գտնել
Իբրև ազնիւ զեռուններ։

Յ Ա Փ Ր Ո Ի Կ

Իմ թուփերս փարթամ չեն,
Ոչ ծաղիկս փառաւոր,
Բայց բուրմունքս կըլսեն
Ամեն մարդիկ հեռաւոր։

Այս պատճառով կարող էք
Յափրուկ գտնել ամեն տեղ՝
Թէ փոքրիկ պարզ փընջերում,
Թէ պարտէզներում շքեղ։

46. ԲՈՅՍԵՐԻ ԿԵՐԱԿՈՒՐԸ

Պայծառ երկնակամարի վրայ ամպեր երևեցան. փոքր-առ-փոքր նրանք թանձրացան և սև կեղևով ծածկեցին կապոյտ երկինքը. իսկ երեկոյին կենսատու անձրևը ջրեց արօտամարգերն ու արտերը։ Դաշտային թառամած բոյսերը զուարթացան. նրանք աննկատելի կերպով ծծեցին իրանց բարակ արմատներով թաց հողի սննդարար հիւթը։ Խոտը կանաչեց. ծառերի փայլուն տերևները ագահաբար ներս ծծեցին խոնաւ օդը։ Ուրախ-ուրախ տատանուիլ սկսեցին ցորենի, գարու և վարսակի արտերը և արագ-արագ լցրին իրանց քստալի հասկերի նիհար հատիկները։

Հարցերով լուծեցէք բոլոր նախադասութիւնները առանց տէրմինների։

47. ԾԱՌԵՐԻ ՎԷՃԸ

Ծառերը վիճեցին միմեանց հետ, թէ նրանցից ո՞րն է լաւը։ Կաղնին ասաց. «Ես բոլոր ծառերի թագաւորն եմ. իմ արմատս գետնի մէջ խորն է մտած, բունս հաստ է, գագաթս երկնքին է նայում. իմ տերևները կտրատուած, իսկ ճիւղերս կարծես երկաթից ձուլած լինին։ Ես փոթորիկների առաջ չեմ խոնարհում, կայծակների առաջ չեմ ընկճւում»։

Սօսին ժպտաց այս խօսքերի վրայ. «Շատ ես պարծենում, ասաց նա. դու մոռանում ես, որ ինձ նման ծառ ողջ Հայաստանումը չկայ. արմատներս անդունդն են հասնում, գագաթս ամպերի մէջ է խաղում. ես հարիւրաւոր ճղներ ունիմ, ամեն մի ճիւղս քո ընիցը հաստ։ Իսկ իմ բունս... օ, նրա փչակում կարող է մարդս կարիք օրը տեղ գտնել։ Համեստութիւն արեցիր, պտուղներդ չյիշեցիր. բայց նրանք էլ խոզերին են քեզ մօտ հրաւիրում. իսկ իմ կոճոճները թէև սնուցիչ չեն, բայց տերևներիս հետ ձեռք-ձեռքի տուած սօսելով, յոգնած անցուորականին իրանց ստուերի տակն են առնում, արևից, անձրևից պաշտպանում են»։

Խնձորենին լսեց այս երկուսի խօսակցութիւնը և ասաց. «Դուք երկուսդ էլ շատ էք հպարտանում. բայց, ասացէք, դուք տալիս էք մարդկանց այն, ինչ որ նրանք ինձանից են ստանում»։

Լսում է մայրին, շարժում է իւր փշոտ գլուխը և ասում է. «Սպասեցէք, շուտով կըգայ ձմեռը և դուք ամենքդ էլ կըմերկանաք. իսկ ինձ վրայ միշտ կըմնան իմ կանաչ փշերը։ Առանց ինձ ցուրտ երկիրներում ապրել չի

կարելի. ես նրանց վառարանները տաքացնում եմ և մարդիկ իմ փայտից են իրանց համար խրճիթներ շինում։

Էլի ի՞նչ պտղատու և հասարակ ծառեր գիտէք դուք։

48. ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԽՄԵԼԻՔ

Առանց ուտելիքի մարդս քաղցից, իսկ առանց խմելիքի ծարաւից կըմեռնէր։ Մարդս իբրև ուտելիք գործ է ածում բուսեղէն, մսեղէն և աղ։ Նա խմում է ջուր, թէյ, սուրճ, գինի, գարեջուր։

Ամենահարկաւոր ուտելիքը հացն է. ամենակարևոր և առողջարար խմելիքը ջուրն է։

Յիշեցէք և գրեցէք ձեր սովորած ուտելիքի և խմելիքի անունները։

49. ՀԱՆԵԼՈՒԿ

Մի տուն ունինք, տան նման չէ.
Գետի ափին, մեծ ժայռի տակ,
Կրկըզած է մեն-միայնակ.
Գիշեր-ցերեկ չար բուի պէս
Ձայն է հանում, գոռում այսպէս՝
Թրը՛խկ-չըրը՛խկ,
Վը՛շտ-ճը՛շտ։

Առուն բարձրից ցած է թռչում,
Պատը ծակում, միջովն անցնում.
Յատակումը դըղըրդոց է,
Շրըմփոց ու թրըխկոց է։

Տան մէջ երկու ուժեղ գաղան,
Մինը տակին, միւսը վրան,

Առիւծի պէս մռընչում են,
Իրար ըռեխ կռծոտում են...

Սրանք մարդ չեն, ոչ արջ, ոչ գայլ,
Ինչ էլ որ տաս, քիչ է դարձեալ.
Հարամի են խպառ քաղցած,
Էլ չեն լսում ոչ խօսք, ոչ լայ,
Դուրս են մղում իրանց փորից
Կերակուրը փոշի դարձած։

Այժմ ասէք, այդ ի՞նչ տուն է,
Որ մինչ այսօր էլ կանգուն է։

50. ՓՈՐՁԱՆՔ ՈՒ ՊԱՏՈՒՀԱՍ

Գիւղացին ցորեն է տանում ջրաղացը։ Ջուալը ծակ էր և մի քանի ցորենի հատիկներ թափուեցան ճանապարհին։ Ծառերը խմբովին ցած եկան և սկսեցին ուտել հատիկները. բայց աքաղաղը մօտ վազեց և ծառերին հալածեց։ Ծառերը գանգատուեցին արծուին։ Արծիւը իւր օրէնքով դատեց՝ առաջ պատառոտեց աքաղաղին, իսկ յետոյ խեղդոտեց ծառերին։

51. Ջ Ր Ա Ղ Ա Ց

Ջուրը նաւից արշաւելով,
Կատաղաբար ձայն է հանում
Եւ ջրաղացի յատակի տակ
Կարծես ամպեր են որոտում։

Անիւների խիստ շարժուելուց
Ամբողջ յատակն է դողդողում
Եւ երկանի պտտուելուց
Փոքրիկ լեզուակն է չրխչրխկում։

Նա շարժւում է օրօրուելով,
Ցորնատաշտի բերնից քաշում,
Որից վերին երկանի մէջ
Մաքուր աղունն է կաթկաթում,

Եւ քարի տակ մանրուելով՝
Ալիւր դարձած ամբարն ածւում,
Իսկ ջրաղացը գեղեցկապէս
Իբրև ծերուկ ալեզարդում։

Համեմատեցէք այս ոտանաւորի բովանդակութիւնը № 49-ի բովանդակութեան հետ։

52. ՎՈՒՇ ԵՒ ԲԱԹԱՆ

I. Փոքրիկ Հայկանուշը տեսաւ, որ իւր հայրը արտումը բռնով մանր ու փայլուն սերմեր է ցանում և հարցրեց.

«Հայրիկ, այդ ի՞նչ ես անում»։

— Վուշ եմ ցանում, աղջիկս, որ քեզ ու Բարսեղի համար շապիկ դուրս գայ։

Հայկանուշը մտածման մէջ ընկաւ։ Նա երբէք չէր տեսած, որ շապիկներն աճեն արտումը։

Երկու շաբաթից յետոյ ցելը ծածկուեցաւ կանաչ մատաքսեայ խոտերով և Հայկանուշը մտածեց. «Ի՞նչ լաւ կըլինէր, եթէ ես այդպիսի շապիկ ունենայի»։

Մի քանի անգամ Հայկանուշի մայրը և քոյրերը գնացին արտը քաղ-հանելու և ամեն անգամ ասում էին նրան, թէ լաւ շապիկ պէտք է ունենաս։ Անցաւ էլի մի քանի

շաբաթ. կանաչը բարձրացաւ. ցօղունների գլուխներին կապտագոյն ծաղիկներ երևեցան։ «Իմ եղբայր Բարսեղի աչքերի նման են սրանք, մտածեց Հայկանուշը. բայց այսպիսի շապիկ ես ոչ ոքի հագին չեմ տեսել»։

Երբ-որ ծաղիկները վայր թափուեցին, նրանց տեղը ճնացին կանաչ և կոլոր գլուխներ։ Երբ-որ գլուխները փոքր ինչ կարմրեցին ու չորացան, Հայկանուշի հայրն ու քոյրերը արմատից փետեցին նրանց, խուրձեր կապեցին և կոթերի վրայ կանգնեցրին, որ չորանան։

II. Վուշի խուրձերը չորացան. նրանց գլուխները կտրեցին, կապեցին և պահեցին, իսկ կոթերը թրջոց դրին առուակի մէջ, վրան էլ քարեր դարսեցին, որ ջրի երեսը չանեն։ Հայկանուշը տխուր նայում էր, թէ ինչպէս են իւր շապիկը ջրումը խեղդում։ Իսկ քոյրերը նրան նորից ասացին, թէ շատ գեղեցիկ շապիկ ես ունենալու։

Երկու շաբաթից յետոյ վուշը ջրից հանեցին, չորացրին և սկսեցին փայտով թակել՝ առաջ կալումը, իսկ յետոյ բակումը, այնպէս որ խեղճ վուշի չոփերը բոլորը դուրս թափուեցին։ Թակելուց յետոյ սկսեցին երկաթէ սանդերքով գզել, մինչև որ նա փափկեց և դարձաւ իբրև մետաքս։ «Ի՞նչ գեղեցիկ շապիկ ես ունենալու», ասացին նորից Հայկանուշի քոյրերը։ Իսկ Հայկանուշը մտածում էր. «Այս ինչ տեսակ շապիկ է. կ'ասես թէ մեր Բարսեղի շէկ մազերը լինի»։

III. Ձմեռուայ երկար գիշերներն եկան։ Հայկանուշի քոյրերը ճախարակներ սարքեցին և սկսեցին վուշից թել մանել։ «Այս թել է, իսկ շապիկը ո՞րն է», մտածում էր Հայկանուշը։

Հայկանուշի հայրը տորքը սարքեց խրճիթում, նրա վրայ հինած արեց և սկսեց գործել։ Մաքուքը սատանի նման անցուդարձ էր անում թելերի միջով և Հայկանուշը

տեսնում էր, թէ ինչպէս էր թելերից քաթան շինւում։ Երբ-որ քաթանը պատրաստուեց, պրծաւ, նրան ցրտի տակ սառցրին և ձիւնի վրայ փռեցին, իսկ գարնանը ձգեցին կանաչ խոտերի վրայ, արևի տակը, և վրան էլ ջուր ցանեցին։ Քաթանը փոքր առ փոքր սպիտակեց ինչպէս ձիւն։

Մայրը քաթանից շապիկներ ձևեց և Հայկանուշի քոյրերն սկսեցին կարել, այնպէս որ Զատկին նա էլ, իւր եղբայր Բարսեղն էլ հագան ձիւնի պէս սպիտակ շապիկներ։

Մանրամասն ու կարգով պատմեցէք՝ թէ ինչպէս են վուշից քաթան պատրաստում և կանեփից թոկեր։

53. ՋՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Ջուրը ամենքին հարկաւոր է՝ բոյսերին, գազաններին, թռչուններին և մարդկանց։

Ջրի գլխաւոր շտեմարանները ծովերն են ու ովկիանոսները։ Բայց ծովերի ջուրը դառն է և աղի. նրան մաքրելու հոգսը արևի վրայ է ընկնում. նա իւր տաք ճառագայթներով այդ ընդարձակ ջրամբարների երեսից բարձրացնում է անհուն քանակութեամբ փոքրիկ անտեսանելի ջրային մասնիկներ, որոնք գոլորշի են կոչւում։ Այդ գոլորշիները իրանց միջի աղային մասերը թողում են ծովերում, իրանք բարձրանում են երկինքը և այնտեղ սառն օդի հանդիպելով, կամաց-կամաց թանձրանում են։ Թանձրացած գոլորշիներին ամպ ենք ասում։

Գոլորշիները բարձրանալով թանձրանում՝ ամպ են դառնում. բայց նրանք ուղղակի ծովի վրայ չեն կանգնում։ Այստեղ քամին սկսում է իւր գործը և ահագին ամպեր թեթև փետուրի նման քշում է դէպի լոյս աշխարհի ամեն կողմերը։ Ամեն մէկ ամպի մէջ այնքան ջուր կայ, որ եթէ

նա միանգամից ցած թափուի, կրծածկէ քաղաքներ, գիւղեր, մարդկանց և կենդանիներին։ Բայց Աստուած գործը ուրիշ տեսակ է կարգադրել. անձրևի փոքրիկ կաթիլները ամպերից կաթկաթում են՝ ինչպէս ալիւրը մաղի միջից. երբեմն էլ այդ կաթիլները սառչում ու թափւում են ինչպէս ձիւն։

—

Ջուրը թարմացնում է հովիտներն ու դաշտերը և հողը նրան իւր ներսն է ծծում։ Հողի տակ աւելորդ կաթիլները միմեանց ետևից հաւաքւում են և կազմում են ստորերկրեայ փոքրիկ կոհակներ. մի քանի կոհակներ խառնըւում են միմեանց հետ և դուրս են բղխում երկրի երեսը սառն աղբիւրի ձևով։ Աղբիւրը բղխում է, առուակ է կազմում և քչքչալով առաջ է գնում։ Ճանապարհին նա պատահում է իւր նման մի շատախօսի և նրա հետ եղբայրանալով, ձայն-ձայնի տուած, առաջ են խաղում։ Ճանապարհին նրանց պատահում են երրորդ, չորրորդ և հինգերորդ առուակներ... սրանք ամենքը խառնւում են միմեանց հետ։ Նայում-տեսնում ես, որ այս եղբայրական միութիւնից մի կանոնաւոր գետակ է կազմուել։ Այս գետակը ջուր է տալիս մարդկանց, կենդանիներին, թարմացնում ու զովացնում է դաշտերի ծարաւ բոյսերը, պտղատացնում է ջրաղացների երկանները, կրում է իւր վրայ լաստեր և թեթև նաւակներ. իսկ նրա սառը կոհակների մէջ խաղում են ձկները։

—

Գետակը վազում, խառնւում է ուրիշ գետակի հետ և միասին առաջ են գնում։ Ճանապարհին նրանց հետ խառնւում են ուրիշները և այսպիսով կազմում են մի ահագին գետ, որ ունենում է բազմաթիւ վտակներ և

անցնում է մի թագաւորութիւնից միւս թագաւորութիւն։ Լողում են գետերի վրայ ծանր նաւեր, որոնք բարձած են լինում զանազան ապրանքներով։ Նրանց եզերքների մօտ շինւում են գիւղեր և քաղաքներ։

Գետերից շատ ջուր է թափւում ծովերի մէջ, բայց արեգակն էլ հանդարտ չի մնում. նա անդադար գոլորշիներ է բարձրացնում, ամպեր է կազմում և ամբողջ աշխարհին անձրև է բաժանում։

Գետերը դարերով թափւում են ծովերի մէջ և նրանց երբէք չեն լցնում. արևն էլ յաւիտեան գոլորշի է բարձրացնում ծովերից, բայց երբէք նրանց չի ցամաքեցնում։ Այսպէս ամենիմաստ կերպով է կարգադրել Աստուած այս գործը։

Համառօտ պատմեցէք, թէ ինչպէս են գոյանում գետերը։

54. ՁԱՐՄԱՆԱԼԻ ՄՇԱԿ

Ինքն է անշունչ, չունի հոգի,
Բայց գործերն են ազգի-ազգի.
Անիւները մեծ ու փոքրիկ,
Լիսեռները լայն ու նեղլիկ.
Կաշուէ գօտի մէջքին կապած,
Հուր ու դժոխք իւր փորն առած.
Ծծած ջուրը տակառներով,
Արտաշնչումն ամպ է ու ծով։

Մրնչում է վիշապի պէս,
Ծրվվում, ճչում, մրրիկ կ'ասես.
Փորնչոցը այնպէս ուժգին՝
Հազար գոմէշ ունի միջին։

Ինչեր ասես նա չէ անում՝
Ցորեն կալում, կտաւ գործում,
Բուրդ ու բամբակ մաքրում, մանում,
Վուշը գզում, հինած անում,
Երկար ու լայն մեծ տորքերին,
Անթիւ ու բիւր մաքուքներին
Արագ-արագ գործի դնում։

Գերաններից մանրիկ մեխեր,
Բազմատեսակ տախտակ քաշում.
Մետաղներից սիրուն փողեր,
Եւ երկաթից գործիք ձուլում.
Կարծր ապակիք, պողպատիկներ
Խաղ ու պարով տաշում, յղկում.
Կ'ասես նրա սուր կըտրիչին
Չեն դիմանալ՝ ինչ էլ դիպչին։

Այս ամենը նա գործում է անխռով.
Ցոգնիլ չունի, մի՛շտ շարժւում է անվրդով։

Ո՞րն է այդ զարմանալի մշակը. ի՞նչ է անում նա. շոգին ի՞նչ գործադրութիւն ունի. ձեզանից ո՞վ է տեսել կամ փորձել շոգիի զօրութիւնը։

Այս ոտանաւորի մէջ եղած տեխնիքական բառերը բացատրել և առարկաները իրաւունքէն ցոյց տալ մանուկներին, ուր որ հնարաւոր է։

III. ՏԸՐՈՒՑ ՁՈՐՍ ԵՂԸՆԿՈՆԵՐԻՆ

55. Ի՞ՆՉ ԱՐԵՑ ՁՄԵՌԸ

Ո՞ւր է շշուկը
Քաղցր անտառի
Եւ կարկաչիւնը
Մերձակայ առուի.
Ո՞ւր են հոտաւէտ
Ծաղկունքը դաշտի։
Ծառը մերկացաւ,
Էլ տերև չունի.
Ջիւնէ սփռոցը
Ամենը ծածկեց,
Դաշտեր ու ձորեր
Սպիտակացրեց։
Ալևոր պապը
Իւր թևի տակը
Ամենն շղթայեց.
Առուն էլ սառեց։
Միայն ցուրտ քամին
Կատաղութիւնով
Անցորդի բերանն
Լցնում է ձիւնով,
Երկինքն էլ ծածկում
Մռայլոտ մէգով։

56. ԱԼԵՒՈՐ ՊԱՊԻ ՁԱՐԻՔՆԵՐԸ

I. Բարկացաւ ալևոր ձմեռը, սաստիկ բարկացաւ և մաքումը դրեց, որ ոչ մի կենդանի շունչ չթողնէ երկրիս երեսին։ Ամենից առաջ նա թռչուններին ձեռք առաւ. նրանք ձանձրացրել էին նրան իրանց երգերով ու ծրլվլոցով։

Ձմեռը փչեց սառը քամի, ծառերի տերևները վէր ածեց, թռչունների տեղը կտրեց. թռչուններն էլ խումբ-խումբ հաւաքուեցին և կրկռալով սկսեցին թռչել բարձր-ոարերի, խոր-խոր ձորերի և կապոյտ ծովերի վրայով դէպի

տաք երկիրներ։ Մնացին միայն մի քանի թռչուններ, բայց նրանք էլ մօտեցան մարդկանց բնակարաններին, որ ուտելու բան գտնեն։

II. Ձմեռը տեսաւ, որ թռչունների եռևից չի կարող հասնել, գաղաններին ձեռք առաւ։ Ձիւնով ծածկեց դաշտերն ու անտառները և մինը միւսի եռևից ուղարկեց իւր սառնամանիքները։ Գալիս են սառնամանիքները մինը միւսից չար, գալիս են և թռչկոտալով անցնում են ծառից ծառ՝ ամեն բան ճայթում, ճրճռացնում ու գաղաններին վախեցնում։ Բայց գաղանները չվախեցան. նրանցից միքանիսը հաստ քուրքերի մէջ էին կոլոլուել, միւսներն էլ մտել էին իրանց խոր որջերի մէջ. սկիւռը իւր խոռոչում ընկոյզ էր կրծում. արջը քարայրի մէջ իւր թաթն էր ծծում. նապաստակը ցատկելով էր տաքանում. իսկ ձիաները, կովերը, ոչխարները շատ վաղուց տաք գոմերի մէջ պատրաստի խոտը ծամում էին և հով չուրը խմում։

III. Աւելի սաստիկ բարկացաւ ձմեռը՝ դէպի ձկները դարձաւ։ Սառնամանիքներ է ուղարկում մինը միւսից կատաղի։ Նրանք վազում, անցնում են գետերի ու լճերի վրայից և նրանց երեսը ծածկում են թանձր սառուցով։ Գետերն ու լճերը սառչում են, բայց միայն երեսից. իսկ ձկները ջրերի խորքն են գնում. սառցային ծածկոցի տակ նրանք աւելի տաք են ապրում։

IV. «Է՜, սպասի՛ր, ասում է ձմեռը. հիմա ես իմ բոլոր բարկութիւնը մարդկանց վրայ կը թափեմ։ Ասում է ու մինը միւսի եռևից ուղարկում է իւր սառնամանիքները։ Ցրտութիւնից լուսամուտների ապակիները սառուցով ծածկւում են. սառը քամին փչում է պատերին, լուսամուտներին։ Իսկ մարդիկ վառում են վառարանները, նրանց առաջ նստում ու ձմեռուայ վրայ ծիծաղում։ Եթէ մէկը կամենում է գնալ անտառ փայտ բերելու, հագնում է

հաստ քուրք ու տաք թաթմաններ և երբ սկսում է կացինը բարձր ու ցածր անել, փայտ կտրել, դեռ քրտնում էլ է։ Ճանապարհին, կարծես ծիծաղելով ձմեռուայ վրայ, կարաւանները շարժւում են՝ ձիաններից գոլորշի է բարձրանում, իսկ ձիապանները ոտքով են գնում, ձիւնը տրորում, ուսերը թափահարում և ցուրտը գովաբանում։

Ամենից աւելի ամաչեց ձմեռը, երբ տեսաւ, որ մինչև անգամ փոքրիկ մանուկները իրանից չեն վախենում. նրանք սղղում են սառուցների վրայ, ճնազնդի են խաղում, ձիւնից սարեր են կանգնեցնում և նրանց վրայ ջուր ցանելով երգում են.

«Օրը կարճ է. արև չըկայ, շատ ցուրտ է.
Ճերմակ ձիւնը քուլայ-քուլայ կըբըրդէ.
Մարդ, անասուն, բուք-բորանից վախեցած,
Տաք-տաք տներ, խոր-խոր բներ են մտած։
Օ՜յ-օյ-օյ, ձմեռն է.
Մեզ դուրեկան մի բեռն է»։

Ձմեռը տեսաւ, որ ոչ-ոքի չի կարողանում յաղթել, բարկութիւնից լաց եղաւ։ Երկնքից նորա արտասուքը կաթկաթեց... Երևի գարունը մօտեցել է։

57. Ձ Ի Ւ Ն

«Ա՜խ, ինչո՞ւ, ինչո՞ւ կը գայ պաղ ձիւնը.
Նորից ամիսներ պիտ՝ մընամ տունը*).
Տեսնելու չեմ ես կանաչ ծառ, արօտ.
Հոտոտ**) ծաղիկին պիտ՝ մընամ կարօտ»։

—Ձիւնը որ կը գայ երկինքէն դէպ՝ վար,
Իմացիր՝ մեծ բախտ է մարդուս համար.

*) Փոխ. տանը. **) հոտոտ—հոտաւէտ։

Վերմակի պէս տաք կը ծածկէ գետին,
Որ բոյսի արմատն դիմանայ ցրտին։

Նա հողին կըտայ հիւթ, պարարտութիւն,
Դաշտին ու արտին մեծ առատութիւն։
Մի տրտնջալ, մարդ, դու բնութենէն.
Թէ տաք և թէ ցուրտ՝ մեզ միշտ օգուտ են»։

58. ՅՈՒՆՎԱՐԻ ՄԷԿԻՆ

Մանկական յիշողութիւնից

Երէկ երեկոյեան մեր տանը շատ հիւրեր կային. նրանք հաւաքուել էին, որ դիմաւորեն նոր տարուն։ Ես մինչև տասներկու ժամն արթուն չմնացի և, առանց շորերս հանելու, քնեցի։ Այսօր ես շատ վաղ զարթնեցի և գնացի իմ ծնողներիս նոր տարին շնորհաւորեցի։ Համբուրելով նրանց ձեռքը, ես վազեցի բարի հօրեղբօրս սենեակը, շնորհաւորեցի նոր տարին և ցանկացայ նրան բախտաւորութիւն և առողջութիւն։ Հօրեղբայրս համբուրեց ինձ և տուեց մի գեղեցիկ պատկերազարդ գիրք։ Նա ասաց. «Եթէ միշտ լաւ աշխատես, այսպիսի ընծաներ շատ կըստանաս ինձանից»։ Ո՞րքան բարի է իմ հօրեղբայրս. նա իմ փոքր քրոջս ու եղբօրս էլ չմոռացաւ ուրախացնել։ Շուշանիկին ընծայեց մի գեղեցիկ տիկին, իսկ Գարեգինին մի փոքրիկ թմբուկ։ Նա ուրախութիւնից այնքան խփեց թմբուկին, որ ձեռները թուլացան։

Այսօր ամենքն էլ ուրախ են և շնորհաւորում են միմեանց նոր տարին։ Մայրս հագցրեց մեզ նոր շորեր։ Երեկոյեան մենք գնալու ենք հօրաքրոջս տուն։ Ես գիտեմ, որ այնտեղ կըխաղանք, կ՚երգենք և շատ ուրախութիւններ կ՚անենք։

59. ՆՈՐ ՏԱՐԻ

Ահա եկաւ նոր տարի,
Հետը բերեց նոր բարի։
Մանր տղոց ուրախ օր,
Բարի գաւակ հօրն ու մօր։

Մանր տղայք են ուրախ,
Ունին կաղին, գոզինաղ։
Սալորի չոր, չամիչ, թուզ,
Փըշատ, ունապ և ընկուզ։

Մանր տղայք, չըմոռնաք՝
Աշխարհումս չէք մենակ։
Ուրիշ շատ խեղճ տղայք կան
Աղքատ և ան-օգնական։

Նոքա հայր ու մայր չունեն,
Սև չոր հացի կարօտ են։
«Աղքատներին ողորմած
Եղէք», կ՚ասէ ձեզ Աստուած։

60. ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆ ԳԱՐՆԱՆ

Ձմեռը դաշտում ծաղիկներ չըկան,
Ձիւն գալուց առաջ նրանք չըքացան.
Բայց ծաղիկների քնքուշ արմատներ
Փափուկ ձիւնի տակ հանգիստ են առել։

Կըգայ գարուն ոստոստալով,
Սար ու դաշտին այցելելով.
Կռիւ կըտայ ձիւն ու սառին.
Վերջ կըդնէ գիժ ձըմեռին։

Նոր բողբոջ կըտան խոտերն ու ծաղիկ.
Գարնանաբերը կըբացուի հեզիկ.
Մանկունք ցնծալով դաշտը կըվազեն՝
«Օրհնեա՛լ է, գարուն, գալըդ քո», կ'ասեն։

61. ԳԱՐՈՒՆ

Կարօտ ենք տեսքիդ, աննման գարուն,
Շո՛ւտ արի, մեզի բեր ծաղիկ սիրուն.

Բա՛ց մեր դրռները, բա՛ց մեր պատուհան,
Թո՛ղ բացուին, ծաղկին վարդ, մեխակ շուշան.
Փակուած սենեակից ելնենք, ազատուինք,
Կանաչ դաշտ երթանք, խաղանք, գլորուինք։

62. ՄԱՅԻՍՈՒԱՅ ԱՌԱՒՕՏ

Ի՜նչպէս թարմ և գեղեցիկ է մայիսուայ առաւօտը։ Դաշտերը ծածկուած են կանաչ խոտերով ու ծաղիկներով. բնութիւնն օրէցօր աւելի քաղցրանում է և գարնանային մէգի միջից ժպտում է ամառը։

Երբ ես գնում եմ անտառ, այնտեղ, ծաղկապատ հովիտներում, փռուած եմ տեսնում մայիսուայ որդին՝ սպիտակ և անուշահոտ շուշանը։ Ամենայն տեղ, ուր որ նայում ես, աչքից առաջ կանաչ գորգեր են փռուած, որոնց վրայ առաւօտեան ցօղը ցանել է իւր մարգարտեայ կաթիլները։ Արևի առաջին ճառագայթները ընկնում են ծառերի տերևների և ցօղապատ մարգերի վրայ և փայլեցնում են նրանց ինչպէս ադամանդեայ ակունքներ։ Թռչունները ծլվլում են չորս կողմդ. իսկ ահա այն կողմից, վարդի կիսաբաց կոկոններով ծածկած թփերի մէջ, լսւում է մի

զմայլելի ձայն. դա սոխակն է։ Առաւօտեան արշալոյսին՝ նա կանգնած է բացուող կոկոնների վրայ, աչքերը կիսախուփ, կարծես ինքն իւր երգից յափշտակուած, երգում, շըվշըվացնում և հազար տեսակ խաղացնում է իւր քաղցր ձայնը։ Նա երգում է և սպասում է վարդի սիրուն կոկոնների բացուելուն։

63. ԱՄԱՌ

Ստեղծողն Իւր առատ ձեռքը բաց արեց,
Արտեր, անտառներ հարըստացըրեց.
Ծառեր ու թփեր զարդով ծածկուեցին.
Ամենայն կողմում ծաղկունք փայլեցին։

Ազատ շրջում են հօտերը դաշտում.
Ազատ լողում են ձկները ծովում.
Այգում պտուղներն դեղնիլ ըսկսան.
Արտերում հարուստ ցանքերը հասան։

Դաշտում մանգաղներն ըսկսան փայլել,
Եւ անտառներում թռչնակներն երգել.
«Ի՜նչքան սիրուն է այս ստուերներում.
Ե՛կ, հանգստացիր, մանկիկ, հովերում.
Ականջ դիր, ինչպէս մենք երգ ենք երգում,
Առատ ամառուան փառք վերընծայում»։

—Ո՛չ թէ ամառուան, ասաց, փառք տըւէք՝
Ով ամառ տըւեց, Նորան օրհնեցէ՛ք»։

64. ԵՐԱՇՏ

Ամառը չորային էր։ Արեգակը օրէցօր բարձրանում էր պարզ երկնքի վրայ։ Փոշին ամպի նման փըռւում էր

ճանապարհին։ Երկիրը քարի պէս սկսդացել, ճաքճաքոտել էր։

Առուները ցամաքել էին։ Ծաղիկները տխրութեամբ կախել էին իրանց գլուխները։ Խոտերը դեղնել էին. նոր բահաս արտերը թառամել։ Երկրագործը տխրութեամբ նայում էր արտերին և ասում. «Ա՛ստուած իմ, ինչ-որ ինձանից կախուած էր՝ արեցի. հողը՝ որքան կարելի էր, խոր ցելեցի, ընտիր սերմով սերմեցի և ուշադրութեամբ ցաքեցի. այժմ թող լինի Քո սուրբ կամքը»։

65. ԵՐԿՐԱԳՈՐԾԸ ԵՒ ԾԱՂԻԿԸ

Համեստ ծաղիկ դաշտային, վատ ժամի հանդիպեցար.
Երբ արօրը քշեցի, նրա առաջը ընկար։

Գեղեցկութիւն դաշտերի, քեզ փըրկել չկարացի.
Սըրտի ցաւով, ակամայ, քաղցը կեանքդդ կարճեցի։

Խոնարհաբար փայլելով իբրև գոհար խոտերում,
Միամիտ կըսպասէիր արեգակի ծագելուն.

Յանկարծ արօրս սրածայր անգրթաբար քեզ կըտրեց,
Եւ այսպիսով քաղցը կեանքիդ դրժբաղդաբար վերջ տուեց։

66. ԱՄԱՌԸ ԽՈՏ-ՀԱՐԲՈՒՄ

«Տղայք, վաղը առաւօտեան մենք ամենքս կըգնանք խոտ-հարքի», ասաց մեր հայրը, և մենք այնպէս զորգոռացինք ու վազվըզեցինք, որ զօրով կանգնեցրին մեզ։ Ես ձուկը բռնելու կարթեր էի պատրաստել. իսկ քոյրերս վեր առան իրանց կողովները, որ հատապտուղներ հաւաքեն, և

առաւօտը, լուսաբացին, մեր բոլոր ընտանիքը, սայլերի վրայ նստած, ճանապարհ ընկանք։

Մի ժամից յետոյ մենք հասանք մեր փափագելի մարգագետիններին։ Երբ-որ մենք տեղ հասանք, արևի ոսկեփայլ ճառագայթները դեռ նոր ծածանւում էին Մեծ-Մասիսի ձիւնապատ գագաթի վրայ. բայց հովիտն արդէն հնձողներով լիքն էր։ Հնձողները, չուխաները հանած, շապկանց, զոյգ-զոյգ առաջ էին քայլում բարձր խոտերի մէջ և իրանց ետևից ձգում էին կանաչ խոտերի շերտերը։ Նրանցից փոքր ինչ հեռու, միւս կողմը, նրանց ընկերները փոցխով ու եղանով հաւաքում էին չորացած խոտը և փոքրիկ բլուրներ էին կազմում։ Հովտի այս ու այն կողմումն էլ սարի նման բարձրանում էին մեծամեծ դէզեր։ Մէկ մարդ կանգնած էր դէզի գլխին և վարպետութեամբ դարսում էր խոտը։ Գիւղացի մանուկները փոքրիկ բլուրները (կոյտերը) կրում էին մեծ-մեծ դէզերի մօտ։ Ուրախութեան աղաղակը տարածւում էր օդի մէջ. երգեր, ծիծաղ, բարձրաձայն խօսակցութիւն, շների հաչոցը, գերանդիների զընգզընգոցը, բեռնակիր ձիաների խրխընջոցը, եզների բառաչիւնը, անիւների մեղմ շառաչիւնը — այդ բոլորը խառնըւում էին ընութեան երգիչների քաղցր դայլայլիկների հետ, յափշտակում էին մարդու միտքը։

Ես շտապեցի ձուկը բռնել այն գետակից, որ հոսում էր այդ հովտի միջով. իսկ քոյրերս սկսեցին հ ա տ ա պ տ ու ղ ն ե ր ժողովել։ Յետոյ մենք շատ ուրախութիւններ արինք՝ թիթեռներ բռնեցինք, ծաղիկներ ժողովեցինք և քոյրերիս հաւաքած մորու գեղեցիկ կարմրախառն հատիկներից փնջեր կազմեցինք։

Փոքր առ փոքր սկսեց մութն ընկնել. արեգակն արդէն ծածկուել էր հորիզոնի ետևը։ Մշակները դադարեցին իրանց գործերից, ցած դրին գերանդիները և խաչա-

կնքելով, գոհացան Աստուծուց։ Մի քանի բոպէից յետոյ՝ ամենքը ճանապարհ ընկան դէպի գիւղ։ Փոքր տղաները, խմբեր կազմած, գնում էին առաջից. նրանցից միքանիսը սրինգ էին ածում, միւսները պարում էին և երգում.

«Սաստիկ շոք է. ցորեն, գարի հասել են.
Հնձողները խոտը հընձել՝ դիզել են.
Բոլոր ծառեր ծածկըւել են տերևով.
Պտուղները ճիտ են անում ժպտալով։

ՀՀ-հՀ-հՀ,—ամառ է.
Արևը խիստ կըվառէ»։

Ես ու քոյրերս խառնուեցինք այդ երգող խմբին և ամենևին չիմացանք, թէ ինչպէս տուն հասանք։

67. ՀՈԻՆՁ

Ահա բանուորներն շարէ-շար կանգնած,
Մանգաղը ձեռքին, գոգնոցը կապած,
Մինչև գօտկատեղ բարձրացող արտում,
Ժպիտն երեսին, ցորեն են հնձում։

Ընդարձակ դաշտը, որ ամիսուկէս
Մեղմ քամու դիմաց, կապոյտ ծովի պէս,
Ճըկլում-թեքւում էր ու հէրանց գնում,
Նորից յետ դառնում, իւր տեղը բռնում,

Այժմ բաց-դեղին ոսկու գոյն առած,
Տիրոջ օրհնութեամբ հասկերը լցրած,
Արևի դիմաց փայլում է, խաղում,
Ամբողջ հովիտը հուր ու ծով շինում։

Ահա բանուորներն շարէ-շար կանգնած,
Մանգաղը ձեռքին, գոգնոցը կապած,
Հնձում են ցորենն ու խուրձեր կապում,
Կապած խուրձերից տասնեակներ կազմում։

68. ԹԱԺԱՅ ՀԱՑ

Կիւրակէի արևը ծածկուեցաւ անտառի ետևը։ Երկուշաբթի առաւօտը գիւղացին իւր որդոց հետ դուրս գնաց դաշտը և ուրախ-ուրախ նայեց արտերին։ Գիւղացին խաչակնքեց և ասաց. «Օրհնեցէք Աստուծուն, որդիք. այս տարի մեր տաւարը խոտ կ'ունենայ և մենք էլ հաց»։ Գիւղացին պոկեց մէկ հասկ, տրորեց ափի մէջ, նայեց և տեսաւ, որ հատիկները մգացել են. յետոյ ատամի տակ փորձեց և տեսաւ որ տրաքում է։ «Ո՛րդիք, ժամանակ է հնձելու. ձեր մայրը երէկ ամբարի վերջին ալիւրը մաղեց»,

Միւս օրը, թէ մեծ և թէ փոքր, բոլորը դուրս թափուեցին արտերը։ Խուրձերը արագ-արագ շարուեցին միմեանց ետևից. իսկ երեկոյին արդէն միքանի տասնեակներ և երեսնեակներ կարգով կանգնած էին արտումը։

Դեռ հունձը չէր վերջացել, որ կամն սկսեց պտրտել կալի վրայ։ Հայրը մի բեռը ցորեն տարաւ ջրաղաց և այնտեղից ճերմակ ալիւր բերաւ։ Մայրը խաշ արեց, խմոր հունցեց. իսկ միւս օրը մանուկներն արդէն ուտում էին նոր ցորենից պատրաստած թաժայ հացը։

69. ՇԻՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԳԸ

Ա՛յ մարդ, այսօր շատ քընեցար, նընջեցիր,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր.
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը ձորն ու դաշտը փռուեցաւ։

Ընկերներդ վաղ արտերը գնացին,
Ցորեն, գարի գերանդիով հնձեցին,
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նստան հանգչիլ կաղնիների հովումը։

Ա՜յ մարդ, վեր կաց, սառը ջրով լուացուիր,
Գօտիդ կապէ, գերանդիդ առ, դաշտ հասիր.
Քանի հով է, հունձրդ արա արտումդ,
Հունձրդ հընձէ, մի ծուլանար գործումդ։

Հունձրդ կապէ, բարդրդ բարդէ, տուն արի,
Հանգստացիր, երբ քո հունձրդ կատարի.
Բեր գերանդիդ, կախէ պատէն քո տանը.
Ես իրիկուան կըպատրաստեմ սեղանը։

Ա՜յ մարդ, հերիք, ինչ-որ այսօր քնեցար,
Աչքդ մէկ բաց, տես թէ որչափ ուշացար.
Մեր դրացին վաղ անցկացաւ կամուրջէն,
Վաղ լըռել է մեր գզիրը ձայնելէն։

Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քընել, սիրեկան,
Արեգական շողը հասաւ մեր դրան.
Մի ծուլանար, ժամանակդ խընայէ.
Այն պիտի մեզ բոլոր ձմեռ կերակրէ։

70. ՉՀՆՁԱԾ ԱՐՏ

Աշունն սկըսուեց, ծիծառը թռաւ.
Անտառն է դատարկ, դաշտը մերկացաւ.
Միայն դաշտումը, անհունձ մնացած,
Տխուր ու տրտում մի արտ կայ կանգնած։

Կարծես հասկերը ասում են միմեանց.
«Ի՜նչպէս մրսում ենք մենք այս ցրտի տակ.
Շատ տխրալի է գետին խոնարհուել
Եւ առօք պտուղդ հողում թաթախել։

«Ամենայն գիշեր մեզ մօտ իջնում են
Անցնող թռչուններն ու մեզ ուտում են.
Գազաններն տրորում, քամին մեզ ծեծում.
Ո՞ւր է մեր տէրը, ի՞նչ է սպասում»։

Քամին տալիս է նրանց վատ համբաւ.
«Մահը ձեր տիրոջ երկրից վեր առաւ»։

71. ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ

Օգոստոս

Շատ ժամանակ է՝ ես իմ յիշատակարանում ոչինչ չեմ գրել. ամբողջ ամառ ես դրա համար միջոց չունէի։ Այժմ մենք էլ այնքան չենք խաղում, որովհետև շուտ-շուտ անձրևում է և աշնան հոտ է գալիս։

Այսօր, Աստուածածնի վերափոխման տօնին, մեծ ուրախութեամբ եկեղեցի են տանում այգիների և արտերի պտուղները։ Աստուածածնին պտուղներն օրհնում են։ Գիւղական փոքրիկ եկեղեցին լիքն է մարդկանցով։ Բարի գիւղացին ջերմեռանդութեամբ վեր է առնում մի փոքրիկ խաղողի ճիւ և մի բուռը ցորեն։ Խաղողը նա ուտում է, պասը լուծում, իսկ ցորենը տանում է, իւր սերմացուի հետ խառնում։ Հայրս և մայրս այսօրուանից սկսում են պտուղներ ուտել. իսկ մենք վաղուց լուծել ենք պաղպասը։

Դաշտերում արդէն շարուած են ցորենի տասնեակ-

ները։ Շուտով գիւղացին կըբերէ նրանց իւր կալը, որ անձրևների տակը չմնան։ Ահա աշխատասէր գիւղացին ջանասիրութեամբ կասում է. իսկ նրա որդին խուրձն է կրում հնձատեղից։

Խուրձը կրելուց յետոյ նա պարապ չի մնալու. արեգակի տաքութիւնը պակասում է. երկինքը շուտ-շուտ ամպում և անձրևներ է թափում. գիւղացու ցելերը փափկացել են. շուտով ցանքն էլ կըսկսեն։ Ճանճերն էլ դղալի կերպով կծում են. նշան է, որ ամառը վերջանում է։

72. Ա Շ Ո Ի Ն

Երեկոյեան վերջալուսին
Ծիծեռնակները չքացան.
Սարեակները խմբեր կազմած
Մեր կողմերից հեռացան։

Ամեն բան հանդարտ քնած է՝
Դուրսը խաւար է տիրում.
Զոր տերևը խշխշում է,
Եւ քամին դուռը ծեծում։

73. ՉՈՐՍ ԵՂԲԱՅՐ

Չորս եղբայր են. ամեն տարի
Երկրիս վերայ ման են գալի.
Չորսն էլ ջոկ-ջոկ ունին հասակ,
Պարգևներն են հաղար տեսակ։

Առաջինն է պատանի,
Բողբոջ, տերև, սաղարթ ունի.

Պայծառ արև, կանաչ արօտ,
Որոնց տղայք են միշտ կարօտ։

Երկրորդ եղբայրն երիտասարդ,
Տալիս է մեզ անձրև առատ.
Ծաղկունք ցանում է ամեն դի,
Յոյս է տալիս առատ հընձի։

Երրորդ եղբայրն այն չափահաս,
Մրգերով լի ունի մի թաս.
Բաժանում է տղոց իւր գանձ՝
Ծիրան, խնձոր խաղող ու տանձ...

Չորրորդ եղբայրն է ծերունի,
Ցուրտ ու խաւար շալկած ունի.
Այդի, անտառ ամայացած,
Դաշտ ու արօտ ձիւնով լցուած։

ԾՐԶԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

---

74. ՄԱՆԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹ

Եկէք՝ պատմեմ ձեզ մի բան,
Ոչ մածուն է և ոչ թան.
Իմ ասածն է մի հեքիաթ,
Ուղղորդը քիչ, սուտը շատ։

—

Փոքրիկ տղայ էի։ Հայրս ինձ ջաղաց ուղարկեց։ Ջաղացպանն ընդունեց տղունը և ասաց. գնա անտառ, տղա՛ս, փէտ արա, բե՛ր, կրակ անենք, կրկենի թխենք. ես քեզանից շհատ չեմ առնիլ։

Անտառ գնացի, մի քեօթուկ գտայ, շատ չարչարուեցի, տեղից պոկ չեկաւ. դարձայ ասացի.

«Ա՛յ քեօթուկ, ի՞նչ զալում ես»։

—Թէ զալում եմ, ինչո՞ւ կացինն ինձ կտրում է։

«Ա՛յ կացին, ի՞նչ զալում ես»։

—Թէ զալում եմ, ինչո՞ւ դարբինն ինձ թակում է։

«Ա՛յ դարբին, ի՞նչ զալում ես»։

—Թէ զալում եմ, ինչո՞ւ երկինքն ինձ տանում է։

«Ա՛յ երկինք, ի՞նչ զալում ես»։

—Թէ զալում եմ, ինչո՞ւ ամպը երեսս ծածկում է։

«Ա՛յ ամպ, ի՞նչ զալում ես»։

—Թէ զալում եմ, ինչո՞ւ անձրևը միջից կաթկաթում է։

«Ա՛յ անձրև, ի՞նչ զալում ես»։

—Թէ զալում եմ, ինչո՞ւ տափը ինձ ծծում է։

«Ա՛յ տափ, ի՞նչ զալում ես»։

—Թէ զալում եմ, ինչո՞ւ խոտն ինձ կոխում է։

«Ա՛յ խոտ, ի՞նչ զալում ես»։

—Թէ զալում եմ, ինչո՞ւ տաւարն ինձ ուտում է։

«Ա՛յ տաւար, ի՞նչ զալում ես»։

—Թէ զալում եմ, ինչո՞ւ գայլն ինձ ուտում է։

«Ա՛յ գայլ, ի՞նչ զալում ես»։

—Թէ զալում եմ, ինչո՞ւ շունն ինձ հալածում է։

«Ա՛յ շուն, ի՞նչ զալում ես»։

—Թէ զալում եմ, ինչո՞ւ պառաւն ինձ թակում է։

«Ա՛յ պառաւ, ի՞նչ զալում ես։

—Թէ զալում եմ, ինչո՞ւ մուկը քուրքս կտրում է։

«Ա՛յ մուկը, ի՞նչ զալում ես»։

—Թէ զալում եմ, ինչո՞ւ կատուն ինձ ուտում է։

«Ա՛յ կատու, ի՞նչ զալում ես»։

—Ես զալում եմ, զալում. հա՛մ մուկն եմ բռնում, հա՛մ միս գողանում. թէ մուկ չեմ ճանկում, մանում եմ տաշտը, ձեր հացը ծամում, ձեր աչքը հանում, յետոյ ետ դառնում, ձեր գոգին նստում ողբում, մլաւում, սիրտներդ շահում։ Դու էլ զալում մանուկ կըլ՛նես, դառնաս միւս կողմ, ցախ ժողովես, տանես ջաղաց, աղունըդ աղաս, շհատ չտաս, անցնես, գնաս։

Բառեր՝ աղուն—աղալու ցորեն. կրկենի—կրակախառն մոխրի մէջ խթած բաղարջ հաց. շհատ—վարձը. քեօթուկ—կոճղ. զալում—քաջ։—Ուղղագրական կանոններ։

75. ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Հեքիաթ-հեքիաթ, մի ջուալ ցաքատ,
Ոչ կոթ ունի, ոչ երկաթ.
Ջաղացի գլխին օխտը գայլ,
Օխտը գայլ են, մի բլբուլ.
Բլբուլ, բլբուլ, դուռը բաց,
Մի հաւ ունենք կեռ կտուց,
Մի ձու կ'ածի, դիփ դեղնուց.
Դեղնուցն ուտի մեր պապիկ,
Պատմէ մեզ մի առակիկ։

ՊԱՊԸ

Դէհ, զաւակներ, խելօք կացէք,
Եկէք, շուրջը նստոտեցէք.
Ես ձեզ պատմեմ կատուի առակ,
Կատուի առակ, խէ՛նտ խայտառակ։

Մեր խորամանկ տանու կատուն
Եւ խօսքի տէր միամիտ շուն
Հին ժամանակ ընկերացան,
Պայման արին, որ միաբան
Պահեն տունը իրանց տիրոջ,
Պատիւ, յարգանք տան ընկերոջ։

Շունն յանձն առաւ դուրսը հրսկել,
Թէ լոյս-ցերեկ, թէ մութ-գիշեր.
Կատուն տանը քունջ ու պուճախ
Պիտի նայէր, հրսկէր յաճախ,

Որ չար մկներ չըկրծոտեն,
Տան պաշարը չըվատնոտեն։

Բարեկամներն ազատ ժամին
Արձակ բակում խաղ կ'անէին.
Երբ գործ չկար, արևի տակ,
Դունչը դընչի, ծանր ու բարակ
Կըպատմէին միմեանց արած,
Իրանց գործերը կատարած։

Քուչին հընուց լաւ որսորդ էր,
Փիսօն վարպետ, կարել գիտէր.
Եւ երբ շունը հանդն էր գնում,
Մի փափկամորթ գազան բըռնում,
Կատուն բերած մորթուց մուշտակ՝
Թաթմաններ էր կարում տաք-տաք։

Մի օր շունը որսի ելաւ,
Մի փափկամազ աղուէս կալաւ,
Միսը ձըգեց ագռաւներին,
Մորթին բերեց իւր ընկերին.
«Փիշիկ, փիշիկ, եղիր բարի,
Ա՛ռ ինձ համար քըթկալ կարի»։

«Գիշեր-ցերեկ տաք սենեակում
Դու ապրում ես ինչպէս խանում,
Էլ չես ասում, թէ դըրսումը
Ընկեր ունիմ, որ ցըրտումը
Չէ իմանում, ինչպէս անի,
Որ իւր գործը գըլուխ տանի»։

«Թէ որ դունչը կըռանս տակ
Ես պառկում եմ մի անկիւնում,
Իմ բարեկամ գայլն համարձակ
Իւր արշաւանքն է կատարում.
Թէ ըստիպուած քիթս եմ հանում,
(Ո՞ր ջուրն ընկնեմ) ցուրտն է տանում»։

—Աչքիս վերայ, ազնիւ ընկեր,
Պիտի նըստեմ հէնց այս գիշեր
Քըթկալ կարեմ, էգուց հաղնես,
Դունչ ու պառնկըդ ազատես
Այսուհետև ցըրտից դաժան,
Իմ լաւ ընկեր, խըզճուկ գազան...

Ասաց կատուն, նայեց մորթուն,
Եւ իւր մըտքում վըճռեց թաքուն,
Որ նըրանցից մի փառահեղ
Թիկնոց կարի իրան լայեղ.
—Շունն ի՞նչ կանի... սա ի՞նչ բան ա,
Չէ՞ ափսոս է, կըփըչանայ։

Միւս առաւօտ շունը վստահ
Առօք-փառօք դունչը մեկնեց...
«Դեռ չեմ պըրծել», կատուն խարդախ
Փընթ-փընթալով ներսից ձայնեց.
«Մի՛ ըշտապիր, քիչ համբերի.
Թող լաւ կարեմ. էգուց արի...»։

Միւս օրն եկաւ... դարձեալ իղուր...
Շունը բացեց ժանիքը սուր.
—Եթէ վաղը իմ քըթկալը
Պատրաստ չեղաւ, տէ՛ս քո հալը.

Իմ սեպհական ատամներով
Ես կըձևեմ մէջքըդ սիրով։

Երրորդ օրը շունը եկաւ,
Բայց չար կատուին էլ չըգտաւ.
Յետին դըռնից, լուսաբացին,
Դուրս էր ծըլկել թիկնոցն ուսին.
Դուրս էր ծըլկել—գլուխն առել,
Գլուխն առել, փախել, կորել։

Այս անվայել արարմունքը,
Կատուի տըգեղ այս վարմունքը,
Շունն այն օրից չի մոռանում՝
Որտեղ նըրան պատահում է,
Յարձակւում է, մորթուց բըռնում
Եւ բարկացած դետին զարնում։

—

Իւր ընկերին կատուի նման
Դաւաճանող մարդիկ շատ կան.
Բայց սակաւ չեն, որք շան նման
Չեն մոռանում մինչ գերեզման
Զրկանքները իրանց կըրած,
Բարեկամի ձեռքով տըւած։

Եւ երբ երկու լաւ ընկերներ
Դաւաճանում են մէկ-մէկու,
Մենք սովոր ենք նոցա կընքել՝
«Սիրով ընկեր—շուն ու կատու»։

Այս առակը մասերի բաժանեցէք և ամեն մի մասի բովանդակութիւնը արձակ գրեցէք ձեր տետրակներում։

76. ԳՈՐՏԸ ԵՒ ԵԶԸ

Մի գորտ դաշտում մի եզ տեսաւ մեծ ու գեր։ Զէս ասիլ, որ գորտն էլ նախանձ է ունեցել. մոքից անցրեց, թէ արի մի փորձ փորձեմ, տեսնեմ կարող եմ՝ եզան չափ լինեմ։ Գորտը ուռչիլ սկսաւ, փըքուեցաւ, տըրզեցաւ, դարձաւ ընկերին ասաւ.

«Նայիր, կրկռան ընկեր, արդեօք եզան չէ՞մ հասել»։

—Չէ, սանամայր, ասաց նա, դու ուր տեղ ես և նա ուր. ձեր մէջը մեծ սարեր կայ։

«Հապա հիմա, նորից նայիր, տես՝ թէ որչափ փըքուեցայ։ Դէհ, ի՞նչպէս եմ, ասիր, տեսնեմ, այժմ այդ եզան կընմանե՞մ»։

—Չէ, հոգի, չէ։

«Հապա հիմա»։

—Տարբերութիւնն ոչինչ է. ինչ-որ էիր, էլի այն ես։

Բայց մեր գորտը նորից այնքան փքուեցաւ ու փքուեցաւ, որ վերջապէս շատ ուռչելուց ճաքեցաւ։

Կարդացէք այս առակը չափով. արտագրեցէք տող առ տող, ինչպէս կարդացիք. արձակ պատմեցէք։

77. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Աչքեր ունի, ոտքեր չունի,
Մարդ կըսպանէ, ձեռքեր չունի,
Ջուր է ածում, փետուր չունի,
Շապիկ ունի, որ կար չունի։

Զորս ոտք ունիմ կարճ ու կոկիկ,
Գլուխ ունիմ ինչպէս գորտիկ.

Մարդ տեսնելիս սիրտս է դողում,
Ոտք ու գլուխս չի երևում։

78. ՎԱՐԴԵՆԻՆ ՈՒ ՓՈՒՇԸ

Վարդենին ու փուշը բուսել էին միատեղ։ Մի օր փուշն ասաց իւր դեղեցիկ հարևանին. «Բարեկամ, համբերութիւնդ ինձ զարմացնում է. ինչո՞ւ չես պատժում քո փշերով այն մեղուներին, որոնք այնպէս տգարզալով հոտդ ու հիւթդ ծծում են»։

—Ինչո՞ւ պատժեմ, համեստութիւնով պատասխանեց վարդենին. չէ՞-որ իմ հիւթից նրանք անուշ մեղր են պատրաստում։

79. ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՛չ ցորեն եմ, ոչ գարի,
Որ հողագործն ինձ ցանի.
Առանց ջրի հունցած եմ,
Առանց ձեռքի կոլորած.
Ես անկրակ թրխած եմ,
Թոնիր, ջաղաց տեսած չեմ,
Ձեր ամենիդ սիրածն եմ։

80. ՊՍՏԻԿԸ ՈՒ ԼԽՏԻԿԸ

Ով որ փքանայ, շուտով չքանայ։
Ժող. առած.

Դաշտի մուկը հսկայ ու չաղ,
Ագին երկար, ինքը ղ ո չ ա ղ՝
Մօտենալով մի օր մի տան,
Տեսաւ պստիկ, վտիտ մրկան.

«Վահ, քո տունը Աստուած շինի,
Էդպէս պստիկ մուկ կըլինի.
Է՛դքան նիհար, հալից ընկած
Աշխարհումս դեռ չի եղած։
Հարուստ տան մէջ, տաք ամբարում,
Թագաւորի կեանք ես վարում.
Ուտում ես միշտ կարագ ու եղ,
Կոծում շաքար ու նուշ համեղ...
Իսկ ես խոպան, ցուրտ դաշտերում
Հազիւ-հազ եմ ապրուստ ճարում.
Բայց, տես, քեզնից մեծ եմ, հսկայ,
Ինձ պէս լիտիկ էլ մուկ չկայ...»

—Մի՛ պարծենար, իմ աչքի լիս,
Մէկ նայիր՝ թէ ո՞վ է գալիս։

Նայեց էն կողմ դաշտի մուկը,
Տեսաւ կատուին, ցամքեց թուքը։

Պստիկ մուկը իսկոյն փախաւ,
Իր նեղ բնում շուտ թագ կացաւ.
Շատ աշխատեց հսկայ մուկն էլ,
Բայց չըկարաց ծակը մտնել։
Կատուն վազեց խաղլիկ-խաղլիկ,
Բռնեց դաշտի մկան չաղլիկ։
«Բուրիկ, կանչեց տան մկնիկը.
Պստիկն է լաւ, թէ լիտիկը...»։

81. ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԿԿՈՒՆ

I.

Անտառի խորքում, ուր գայլ ու աղուէս, արջ ու նա-

պաստակ, ագռաւ ու տատրակ՝ որ որ իր որջում, որ որ իր բնում, ապրում են ազատ, ընկերով, մենակ,—ծառի փչակում շատախօս կկուն մի բուն էր շինել, երեք ձու ածել, վրէն թուխս նստել, երեք մազմզոտ ձագուկներ հանել։

Շատ ծոյլ թռչուն է, ասում են, կկուն. իւր համար երբէք չի շինում նա բուն. նա ձու է ածում պատրաստի բնում, որ իրանց համար միւսներն են շինում և նրա ձուից դուրս եկած ձագը, որպէս հարազատ պահում, պահպանում։ Բայց այս մի կկուն ուրիշ սիրտ ունէր, իւր տեսակի մէջ բացառութիւն էր։

Հաստաբուն ծառի արմատի տակին իւր որջն էր շինել աղուէսն ահագին. մի որջ էր շինել ոլոր ու մոլոր և աչք էր դրել շաբաթներ բոլոր, թէ կկուի ճուտեր երբ պիտի մեծնան, փափուկ միս բռնեն, որ իրան պէտք գան։

—Է՛յ, ասաց մի օր ցածից լայնափոր աղուէսն ահաւոր կկուին մենաւոր. չե՞ս տեսնում ծառի արմատի տակին ես տուն եմ շինել ինձ համար կարգին. ի՞նչպէս սիրտ արիր առանց հրամանի իմ տան կտուրին բուն շինել եանի։ Ահա կըտեսնես, ես քեզ ի՞նչ կանեմ. պոչով կըզարկեմ, ծառը պըրանեմ, լիսպոր ձագերդ ոտիս տակն անեմ։

«Ամա՛ն, հարևան, չանես դու այդ բան»։

—Եթէ ուզում ես, որ այդպէս չանեմ, որ այդպէս չանեմ, հոգիդ չհանեմ, ճուտերիցդ մին քու յօժար կամով ներքև ուղարկիր, որ ինձ ծառայի և իւր վարմունքով յանցանքդ քաւի։

Կկուն վախեցաւ և իւր զաւակը աղուէսին տըւաւ։ Աղուէսն էր, առաւ ու մի կողմ տարաւ, մօր աչքից հեռու «համփ» արաւ, կերաւ։

Միւս օրը եկաւ անգութ գազանը, բերանը բացաւ, ասաւ այս բանը. «Գիտե՞ս դու, կկու, ընկեր թեւաւոր՝

տանս գործերը շատ են, բիւրաւոր. մի ձագդ մենակ չի կարում պրծնի, միւսին էլ ղրկիր, որ եղբօրն օգնի. թէ չէ՝ հօ գիտես, ես քեզ ինչ կ'անեմ. պոչով կըդարկեմ, ծառը կործանեմ. ծառը կործանեմ, ճուտերդ տանեմ»։

«Ամեն, աղուէս ջան, չանես այդպէս բան»։

—Եթէ ուզում ես, որ այդպէս չանեմ, համ ես սիրեմ քեզ, համ էլ պաշտպանեմ, շուտ ներքև ղրկիր քու երկրորդ որդուն. կըտանեմ իմ տուն. երկու եղբօրով ինձ կըծառայեն և ուրախ-զըւարթ միասին կ'ապրեն։

Կկուն հաւատաց, որդուն ղրկեց ցած։ Աղուէսն էր, առաւ, միւս կողմը տարաւ և մօրից թաքուն «համփ» արաւ, կերաւ։

Երրորդ օրն եկաւ աղուէս ապէրը, ծառն իվեր կանգնեց, մեկնեց թաթերը. «Սիրունիկ կըկու, անուշ հարևան, բարեսիրտ մայրիկ, թռչուն աննման, ողջոյն եմ բերել քեզ քու ճուտերից, լաւ ականջ արա այդ ծառի ծէրից. նրանք խնդրում են՝ իրանց քըւորը շուտ հիւր ուղարկես, խաղան սաղ օրը. կ'ուտեն, կըխմեն, կ'երգեն, կըխնդան, իսկ երեկոյին էլի յետ կըդան»։

Մայրը խնդագին ցած գցեց ձագին։

Աղուէսն «համփ» արաւ, մօր աչքի առաջ ըռնեց ու կերաւ։

Կկուն ճիչ հանեց, գոչեց, հառաչեց, բոլոր թեւաւորք օգնութեան կանչեց։ Թռչուններն եկան, եկան ժողուեցան և մօր խնդրանօք դատի նստեցան։ Նախագահն եղաւ սև գայլ-ագռաւը և դատաւորներ՝ բուն ու կաքաւը. նստան, խորհեցին, խելք խելքի տըւին, վերջը այսպիսի որոշումն արին. «Աղուէսը, հարկաւ, պատժի արժան է, բայց նրան պատժել խիստ դժուար բան է. շան հետ բարեմիտ պայման պիտ' անուի, որ մեր վճիռը լաւ գլուխ տանուի»։

II.

Թռչունների դատարանը գայլ-ագռաւին յանձնեց բանը։ Գայլ-ագռաւը թռաւ-թռաւ, հովի շանը ուր-որ գըտաւ. բոլոր անցքը պատմեց նըրան. պատմեց արդար վըճիռն իրանց և աղաչեց, խնդրեց սրտանց, որ բարեդուրթ դամփռն յօժարի, իրանց խնդիրը կատարի։

«Հաւ-հաւ—լաւ, լաւ, ասա, տեսնեմ, ինչ պիտ' անեմ, որ աղուէսից վրէժ հանեմ»։

—Այն մացառուտ թըփի տակին դու կընստես մի կէս ժամով և աղուէսի բըդոտ ագին բերան կ'առնես, երբ իւր կամով, դունչը ցցած, նա կըվազի և առջևըդ կըպպըզի։ Դէ, դու թագ կաց առաք-փառաք, տեսնենք՝ մեզնից ով է խելօք։

Ասաց, թըռաւ, վրանի դռնից մի մեծ կտոր պանիր առաւ... Պանրի կտորը կըտուցին, նա յետ դարձաւ նոյն միջոցին, որջի դռան շուտ իջաւ ցած՝ «Աղուէս ապէր, դուրս եկ, ասաց. տես, քեզ համար ինչ եմ բերել. այսպէս մի բան դու չես կերել։

Աղուէսն առաւ պանրի հոտը, ծակիցն ելաւ անամօթը, վրայ վազեց գայլ-ագռաւին. իսկ նա թռաւ, կանգնեց հեռին։ Աղուէսն էլի առաջ գընաց, դունչը ցցած, բերանը բաց. մեր դատաւորն էր խորամանկ, թըփի գլխին առաւ նա կանգ։ Աղուէսն վազեց դէպ՝ այդ թուփը. կըճուճն ընկաւ, գըտաւ խուփը... Դեռ չէր անցել երեք վայրկեան, որ մեր դամփռը տեսաւ իւր բան...

Երբ որ շունը քիչ հեռացաւ, գայլ-ագռաւը թփից իջաւ, կանգնեց դնչին չար գազանի և իւր կտցով, բզի պէս սուր, փորեց աչերն անպիտանի։

Զափով կարդալ. բաժանել մասերի. կարդալ-պատմել առակի բարոյախօսականը։

82. ԱԳՌԱՒՆԵՐԸ

Լինում է չի լինում մի պառաւ։ Որդի չի ունենում այս պառաւը։ Գնում, մի աղքատ ու որբ մանուկ է գտնում և անում է իրան որդեգիր։ Պառաւը պահում-մեծացնում է տղային։

Բայց տղան շրջում է չար ընկերների հետ և ինչ վատ բան ասես՝ սովորում է։ Պառաւը մտածում է. բերեմ, ամուսնացնեմ, կարելի է խելքի գայ։ Եւ բերում, ամուսնացնում է։ Տղան կնկայ ու որդու տէր է դառնում, բայց իւր չարութեան ընկերներից չի բաժանւում։ Կինը բողոքում է՝ նա ծեծում է կնկանը. որդին հաց է ուզում՝ նա հայհոյում է որդուն։ Պառաւի սիրտը դառնանում է. «Տղայ, ասում է, խելքդ գլուխդ բեր, աշխատանքի գնա, կնիկ ու որդի պահիր, թէ չէ՝ քեզ էշ կըշինեմ»։

Տղան մեղայ ասելու փոխանակ, գոռում է պառաւի վրայ. «Շատ մի՛ խօսիր, ասում է, թէ չէ՝ քեզ էլ կըծեծեմ»։

Պառաւը տեսնում է, որ տղան անուղղելի է, առնում է պողպատէ ճիպոտը, զարկում է տղային և ասում է. «Մարդ չես ուզում լինել՝ էշ եղիր»։ Տղան դառնում է քո ուզած էշը։ Նրան տանից դուրս են անում։ Հարևանը բռնում է ականջից, տանում է իւր բաղը և եօթը տարի բեռան տակ բանեցնում է։

Եօթը տարուց յետոյ մեր էշը կաշին փոխում է, նորից մարդ է դառնում և գալիս է իւր տունը։ Կնիկն ու որդին դուռը բաց են անում և ուրախութիւնով ներս են ընդունում։ Տատին էլ իմաց են անում, թէ որդեգիրդ եկել է։

Մի քանի օրից յետոյ պառաւի որդեգիրը իւր չարութիւններն սկսում է. փոխանակ տանը ցոնց սիրելու, առա-

ջուանից աւելի սաստիկ սկսում է հայհոյել ու ծեծել. պառաւին էլ աւել-պակաս խօսքեր է ասում։ «Տղայ, խելքդ գլուխդ չի եկել. դու, ինչպէս տեսնում եմ, մարդ չես դառնալու, ասում է պառաւը. քեզ զայլ կըշինեմ, սարեր ու ձորեր կընկնես»։

—Ձայնդ կտրիր, քաւթառ, ասում է տղան. վեր կըկենամ, գլուխդ կըջախջախեմ։

Պառաւը վեր է առնում պողպատէ ճիպոտը, զարկում է տղային և ասում է. «Մարդ չես ուզում լինել՝ գայլ եղիր»։ Տղան դառնում է գայլ։ Գիւղացիք փայտ են վերցնում, շներին քիս են տալիս և հալածում են լեռները։

Եօթը տարի գայլութիւն անելուց յետոյ՝ պառաւի որդեգիրը կաշին փոխում է, նորից մարդու կերպարանք է մտնում և վերադառնում է իրանց տուն։ Բայց այս անգամ նա աւելի չար է լինում, քան թէ առաջ. էլի սկսում է հայհոյել ու ծեծել իւր կնկանն ու որդուն. էլի սկսում է անպատուել ու ծաղրել պառաւին։

Պառաւը համոզւում է, որ իւր որդեգիրը երբէք կարդին մարդ չի դառնալու, վերջին անգամ զարկում է պողպատէ ճիպոտով և տղան դառնում է սիլ ագռաւ։ Տղան դաղա անելով թռչում-գնում է իւր չարութեան ընկերներին գանգատւում։ Ընկերները հաւաքւում-գալիս են, որ պառաւին խեղդեն։ Պառաւը պողպատէ ճիպոտն առնում է ձեռքը, ամենքին ագռաւ է դարձնում։ Նրանք էլ գնում-հասնում են իրանց ընկերին, երամ են կազմում։

Այն օրից մինչև այսօր այդ ագռաւներն են, որ տներ ու գաւիթներ են մտնում, գողութիւն են անում... Մարդիկ էլ բոլոր թռչուններին սիրում ու համբերում են, իսկ ագռաւներին ատում են և հալածում։

83. ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴԸ

Ժամանակով մարդու մէկը շատ ունևոր է լինում. բայց ծուռ ու մուռ ապրելով, ինչ որ կայ-չկայ ուտում, նստում է. հաց-մաց կարուում է, մէկ ձեռը ծոցն է գնում, մէկ ձեռը ծնօտին, ախ ու վախ անում, հալուում, մաշուում։

Իւր ծանօթները գալիս-շրջապատում են նրան. նրանցից մի ալևոր վերցնում-ասում է. «Դու մի բան ես արել, քու բախտը քեզանից խրտնել, փախել է. ել, գնա՝ քու բախտի ետևից, գուցէ գտնես, ձեռք բերես, առաջուայ պէս բախտաւորուիս»։

Մարդը գլխի է ընկնում, ելնում, իրան տալիս է սարերի, քարերի. գիշեր-ցերեկ իւր բախտն է որոնում։ Մի գիշեր էլ երազի մէջ տեսնում է, որ իւր բախտը մի սարի վրայ ընկած է բերանքս-իվար, ախ ու վախ է անում իրան նման։ Առաւօտը, զարթելուն պէս, վեր է կենում ու շտապակ դէպի էն սարը բարձրանում։

Գնում է-գնում՝ տեսնում է, որ ճանապարհի վրայ մի առիւծ նստած է։ Առիւծը կանչում, հարցնում է մարդուն. «Ո՞ւր ես գնում»։ Մարդն ասում է. «Գնում եմ բախտս գտնեմ»։ Առիւծն ասում է. «Ես գիտեմ, քու բախտը շատ գիտուն է. իրանից հարցրու, թէ ես ինչով կըբժշկուիմ. ահա եօթը տարի է, որ հիւանդ եմ։ Վերադառնալուդ արի, ինձ ասա. ես էլ իմ ձեռից եկած լաւութիւնը կ՚անեմ քեզ»։—Մարդը խօսք է տալիս, անցնում, գնում է։

Գնում է-գնում մարդը, տեսնում է մի այգի, որ հազար նմուշ պտուղներով լիքն էր. պոկում է մի պտուղ, բերանը դնում, տեսնում է՝ դառն է. պոկում է միւսը, երկրորդը... բոլորը դառն են։ Այգու տէրը դուրս է գալիս, այս մարդուն հարցնում, թէ ո՞ւր ես գնում։ Մարդն էլ իւր դարդը պատմում է այգու տիրոջը։ «Որ այդպէս է,

քու բախտից հարցրու, թէ իմ այգու ճարն ի՞նչ է, որ ինչ անում եմ չեմ անում, պտուղները դառն են լինում։ Երբ-որ դառնաս, ինձ պատասխան բեր. ձեռքիցս ինչ լաւութիւն գայ, կ՚անեմ քեզ»։ Մարդը խօսք է տալիս և անցնում, գնում է։

Գնում է-գնում, հասնում է մի հոյակապ պալատի. ներս է մտնում, տեսնում, որ մի ջահել-ջիւան օրիորդ դարբասի մէջ պարտում է։ «Աղբէր, դու այստեղ ի՞նչ բան ունիս», հարցնում է ջահելը։ Մարդը իր գլխին եկածն ասում է նրան։ Ջահելն էլ դառնում, ասում է սրան. «Ես շատ հարստութիւն, շատ կայք ու ապրանք ունիմ, բայց մի ցաւ ունիմ, որ գիշեր-ցերեկ ինձ հանգստութիւն չի տալիս. եթէ քու բախտից ինձ մի ճար հարցնես, ամենն տեսակ բարութիւնից կըտամ քեզ»։ Մարդը խօսք է տալիս, անցնում, գնում։ Գնում է-գնում, տեսնում է, որ իւր բախտը վեր է ընկել սարի գլխին։ Բարև է տալիս, նստում. շատ գանգատ ու արտունչ է յայտնում. յետոյ հարցնում է իրան պատուիրած բաները. ամենի պատասխանն էլ ստանում է։

—Դէ՛, վեր կաց, գնանք, ասում է մարդը։

—Դու առաջ գնա՛, ես կըգամ, ասում է բախտը։

Մարդը վերադառնում է։ Առաջ հանդիպում է այն ջահելին և ասում է. «Քու դեղն այն է, որ դու մի կտրիճի հետ պսակուիս. քո հոգսն ու ցաւը կ՚անցնի»։

Գալիս է այգին, տիրոջը կանչում է ու ասում. «Քու այգու ջուրը որ առուից որ գալիս է, էն առուի մէջ ոսկու հանք կայ. ոսկու փշրանքը ջրի հետ գալիս է. ծառերը ծծում են, պտուղները դառնանում. կամ ջրի առուն փոխիր, կամ հանքը քանդիր, դուրս հանիր. պտուղները կ՚անուշանան»։

Յետոյ գալիս է մարդը, նստում առիւծի մօտ. պատ-

մում է ամեն բան՝ իւր բախտը գտնելը, այգու տիրոջ ու ջահելի համար ասածները։ Առիւծը հարցնում է. «Ջահելը քեզ որևէ լաւութիւն չարա՞ւ»։ Մարդը պատասխանում է. «Ինչպէս չէ. ասաց՝ արի ինձ մի, նստենք մէկ տեղ, Աստուծու բարութիւնը վայելենք. ես չհամաձայնուեցի»։ Առիւծը հարցնում է. «Իսկ այգու տէրը ի՞նչ լաւութիւն առաջարկեց»։ Մարդը պատասխանում է. «Այգու տէրը ոսկու հանքերը քանդեց, հանեց, մի կողով ոսկի տուեց ինձ. ես չվերցրի, ասացի. ո՞վ է դրանք շալակում, տուն հասցնում»։

«Է՛, հարցնում է առիւծը. ինձ համար ի՞նչ դեղ ասաց»։

Մարդը պատասխանում է. «Քեզ համար էլ ասաց, որ եթէ մի անխելք մարդու գլուխ ուտես, կ՚առողջանաս»։

Առիւծը մի լաւ վեր ու դիր է անում սրա ասածները, մեղմով թաթը մեկնում է դէպի մարդու գլուխը, բռնում, զարկում է գետին և փշրում, ուտում է. «Ես ու իմ Աստուած, ասում է, քեզանից էլ անխելք մարդ չեմ կարող գտնել աշխարհիս երեսին»։

84. ՎԱՐԴՈՒՀԻՆ ԵՒ ՅՈԼԱԿԸ

Քոյր ու եղբայր էին Վարդուհին ու Յոլակը. հայրմայր չունէին. խորթ մայր կար միայն, որ նրանց չէր սիրում։ Մի օր խորթ մայրը կանչում է Վարդուհուն, մի բուռն աղանձ է տալիս նրան և ասում է. «Վեր առ եղբօրդ, Վարդուհի, աշխարհս մեծ է. գնացէք, ձեզ համար տպրուստ ճարեցէք»։

Վարդուհին բռնում է եղբօր ձեռքը և գիւղից դուրս են գնում։ Գնում են-գնում, շատն ու քիչն Աստուած գիտէ, մի տեղ դէմ են ընկնում—կանգնում։ Այստեղ ճանապարհը երկուսի էր բաժանւում. չէին իմանում՝ որ ճանապարհով գնան։

—Քոյրիկ, սոված եմ, ասում է Յոլակը։

Վարդուհին նստում է ժայռի ստուերում, ջէբից մի բուռն աղանձ է հանում, տալիս եղբօրը։ Այդ միջոցին, որտեղից որ էր, մի ճնճղուկ վայր է իջնում և ասում է. «Բարի՛ մանուկներ, ես էլ սոված եմ. միքանի հատիկ էլ ինձ տուէք այդ ցորենից»։

Յոլակն ասում է՝ չտանք, Վարդուհին թէ՝ չէ, տանք. դա էլ սոված է, ուտելու բան չի գտել. ասում է ու մի քանի հատ ցորեն գցում ծոի առաջը։

Ծիտն ուտում է. ապա դառնում-ասում է Վարդուհուն. «Բարի՛ աղջիկ, դու ինձ կերակրեցիր. ես էլ քեզ լաւութիւն կ՚անեմ. դու չես իմանում, թէ որ ճանապարհով գնաս. եթէ վերևի ճանապարհը բռնելու լինես, կըմտնես մի անտառ և գազանների կերակուր կըդառնաս. այնտեղից դուրս գալու հնար չկայ. եթէ ներքևի ճանապարհով գնաս, բարի կըգտնես. միայն ներքևի ճանապարհով գնալիս՝ անձրևաջուր չխմէք, թէ չէ՝ անասուն կըդառնաք»։ Ասում է ու թռչում-հեռանում։

Նրանք բռնում են ներքևի ճանապարհը։

Ամառն էր. արևը բարձրից կրակ էր թափում։

—Քոյրիկ, ծարաւ եմ, ասում է Յոլակը։

«Ոչինչ, Յոլակ ջան, ոչինչ. համբերիր, շուտով աղբիւրին կըհասնենք»։

Գնում են։ Արևն էլ բարձրից կրակ է թափում և խեղճ որբերին այրում-խորովում. աղբիւրն էլ, կ՚ասես, դեռ շատ հեռու է. գնում են-գնում, նրան չեն հասնում։

—Վարդուհի՛ ջան, Վարդուհի՛, բերանս պապակում է. տես, այստեղ ջուր կայ, այս փոքրիկ փոսի մէջ. կա՛ց, խմեմ։

«Չէ, ջանիկս, չէ. դա ձիու ոտնատեղ է, եթէ խմես, քուռակ կըդառնաս։

Գնում են։ —Արևն էլ բարձրից կրակ է թափում և խեղճ որբերին այրում-խորովում. աղբիւրն էլ, կարծես, դեռ շատ հեռու է, գնում են-գնում, նրան չեն հասնում։

—Օ՜յ, քոյրիկ ջան, քոյրիկ, ծիտն ինչ է, որ իր սաածն ինչ լինի. ծարաւ մեռնում եմ. այ մի նոր փոսիկ, ջրով լիքը. թող խմեմ, ասում է Ցոլակը։

«Չէ, ջանիկս, չէ. դա կովի ոտնատեղ է. խմես թէ չէ, հորթ կը դառնաս. քիչ էլ համբերիր. ծիտիկը խելօք էր, շատ խելօք. մենք նրա խօսքը չպէտք է կոտրենք», ասում է Վարդուհին։

Ցոլակն ախ է քաշում և կամաց-կամաց գնում է քրոջ ետևից. բայց ահա տեսնում է մի նոր փոսիկ. էլ ձայն չի հանում, չոքում է կողքին և միջի ջուրը խմում է։

Վարդուհին յետ է նայում և տեսնում է, որ եղբայրը չկայ։ Ցոլակ, այ Ցոլակ, ձայն է տալիս նա. բայց եղբօր փոխանակ մօտ է վազում մի գառնուկ։ Վարդուհին հասկանում է, որ եղբայրը ջուր է խմել ոչխարի ոտնատեղից. վայ է տալիս գլխին, բայց էլ որտեղ...

Նրանք առաջ են գնում։ Շատ են գնում թէ քիչ, Աստուած գիտէ,—նրանց առաջ բացւում է մի փոքրիկ ծառաստան, այնքան գեղեցիկ, այնքան հրաշալի, որ կ'ասես մի ձեռատունկ պարտէզ լինէր։ Ամենից առաջ Վարդուհին ու գառը մօտ են վազում մի փրփրուն աղբիւրակի և նրա կաթնահամ ջրից խմում են. ապա Վարդուհին գրկում է գառնուկին և գառնապէս լաց է լինում։ Գառնուկն էլ աղու-աղու մայում է իւր սիրալի համար...

Այդ ժամին, երբ քոյրը փայփայում էր եղբօրը, հեռուից լսւում է մի անուշ մեղեդի. մինը երգելով մօտենում է անտառին. նրա երգը այնքան քաղցր էր, այնքան

դուրեկան, որ մինչև անգամ ծառաստանի թռչունները մի բոպէ լռեցին, դադարեցրին իրանց դայլայլիկները... Երգի ձայնը քանի գնում-մօտենում է... վերջապէս ծառերի միջից երևում է մի ձիաւոր, ոսկից-գլուխ զինուած։ Երիտասարդ իշխանի ետևից գալիս էին միքանի ուրիշ ձիաւորներ։ Սոքա պարոնի սպասաւորներն էին։

Ձիաւորները երևալուն պէս՝ Վարդուհին վեր ելաւ ծառը և թաղնուեց նրա խիտ տերևների մէջ, իսկ գառնուկը սկսեց դէս ու դէն ընկնիլ։

Իշխանը ցած եկաւ աղբիւրի մօտ։ Սպասաւորները նոյնպէս ցած թռան ձիերից. ոմանք վազեցին-առան պարոնի ձիու սանձը, միւսներն ընկան գառան ետևից, որ փախաւ, իշխանի ոտների արանքը մտաւ. կենդանին, կ'ասես, պաշտպանութիւն էր խնդրում այդ մարդուց։

—Հանգստանանք այստեղ, ասում է իշխանը իւր սպասաւորներին, և սկսում է փայփայել գառնուկին, որ իւր կողմից աղաչանքով նայում էր նրան։ «Տարօրինակ բան, մտածում է իշխանը. այս խղճուկը նայում է ինձ որպէս մարդ։ Կարծես մի բան է ուզում ասել. բայց լեզու չունի»...

Այդ վայրկեանին ծառներից մինը մօտենում է իշխանին, որ առնի գառը, բայց մի բոպէ կանգնում է, սպասելով տիրոջ հրամանին։

—Հեռու տար, տղա, հեռու տար այս գառը. գիտեմ՝ դուք ուզում էք խեղճ կենդանու մսից համեղ խորոված պատրաստել. բայց տարէք, ինձանից հեռու մորթեցէք... մեղքանում եմ։

—Ո՜վ բարի մարդ, ձայն է տալիս Վարդուհին ծառի վրայից. ողորմած եղիր, թոյլ մի տար, որ մորթեն գառնուկին. դա սովորական գառը չէ—իմ հարազատ եղբայրս է։

Իշխանը նայում է վերև և ինչ է տեսնում. ծառի խիտ ճիւղերի մէջ նստած էր մի էակ, մի հրաշալի օրիորդ, որ վրդովմունքից ու երկիւղից ամբողջ մարմնով դողում էր։ Իշխանը ձայն է տալիս.

«Ո՞վ ես դու, աղջիկ, որ տատրակի պէս
Ծառն ես բարձրացել, պահուել քեզ ու քեզ.
Եթէ հրեշտակ ես, ինչու՞ ես խօսում դու մարդու նման.
Եթէ հրեշտակ չես, ո՞նց է եղբայրդ այս դառը անբան։
Բայց ով էլ լինես, ես քեզ տալիս եմ խօսք իշխանական,
Որ այսուհետև դու պիտի կազմես նոր զարդը իմ տան»։

«Ցած եկ ծառից»։

—«Իսկոյն ցած կըգամ, եթէ խոստանաս, որ խեղճ գառնուկս պիտ՝ ինայ անվնաս»։

Իշխանը ձայնեց և գառը բերին, իրան գիրկն առաւ։ Վարդուհին ծառից արագ ցած իջաւ։ Հացի նստեցան։ Վարդուհին պատմեց իւր գլխի անցքը։ Իշխանը առաւ և տարաւ նրան իւր ապարանքը։ Վարդուհին եղաւ տիկինը այդ տան։ Ուրախ ապրում էր գառնուկն էլ անբան։

Մի տարի անցաւ։ Վարդուհու մայրը հեռուից իմացաւ, որ իւր աղջիկը տիկին է արդէն. ճանապարհ ընկաւ, որ նրան տեսնի. «գուցէ այդ բանից ինձ օգուտ հասնի»։ Մտքումը դրեց, որ մօր անունով մտնի պալատը խաբէութիւնով։ Եւ երբ իշխանի պալատին հասաւ, դուռը պահողին դիմեց ու ասաւ. «Իմացուցէք տըէք տիկին տիրուհուն, ամենից սիրուած խանում Վարդուհուն, որ հեռու երկրից, հայրական գիւղից, մի կին է եկել, ուզում է տեսնել»։

Եւ երբ ներս գնաց, նրան համբուրեց և այսպէս ասաց. «Մոռացիր անցածը, աղջիկս, աղաչում եմ, մոռացիր անցածը։ Ես քեզ վատութիւն արի. բայց իմ վատու-

թիւնը քեզ համար բաղդաւորութեան դուռը բաց արաւ։ Ինձ մօտ դու անօթի ու տկլոր պիտի լինէիր. այստեղ դու տէր ես և հրամայող... Մոռացիր անցածը, ազնիւ Վարդուհի. պահիր ինձ քեզ մօտ որպէս աղախին. ոչ-ոքի մի ասիր, թէ ես քո խորթ մայրն եմ. ամուսինդ, եթէ իմանայ, ինձ տանից դուրս կ՝անի»։

Բարի էր Վարդուհին, բարի էր և միամիտ. նա հաւատաց մօրը և պատուով պահում էր իւր մօտ սպասաւորի անունով։ Բայց սա հէնց առաջին օրից որոշեց իւր անելիքը։

Ամենայն երեկոյ նրանք գնում էին լճի ափը զբօսանքի։ Մի օր էլ, երբ զբօսնում էին, մայրը գլորեց նրան ջուրը, ինքը ծածուկ վերադարձաւ Վարդուհու սենեակը, հագաւ նրա զգեստը, քողը դցեց երեսին և մտաւ իշխանի մօտ։ Խաբուեցաւ իշխանը. խաբուեցին բոլոր տնայինք։ Միայն գառը չէր խաբուում. նա վազվզում էր լճի եզերքին և դառնագին մայում էր։

Խորթ մայրը տեսաւ, որ գառը շատ է վազվզում լճից դէպի տուն, տանից դէպի լիճ, շատ է մայում ու բղղում, սուտ հիւանդացաւ, անկողին մտաւ և ապսպրեց իշխանին, թէ մինչև գառնուկ եղբօր մսից չուտեմ, չեմ առողջանալ։ Այսպէս է բժիշկների կարծիքը։

Իշխանը շատ զարմացաւ, բայց էլի իրաւունք տուեց, որ գառը մորթեն։

Գառնուկը փախաւ, կանգնեց լճի ափին և, լեզու առած, կանչում էր.

Վարդուհի՛ ջան, Վարդուհի՛,
Հոգոյս հատոր իմ քոյրիկ,
Մեր ամենքի թագուհի,
Աշխարհիս մէջ մի հատիկ...

Ինչո՞ւ առար դու քեզ մօտ
Խորթ մամային անամօթ.
Ինչո՞ւ առար դու քեզ մօտ
Այդ կնոջը քեզ ծանօթ։

Այսօր հիւանդ ձևացած,
Նա անկողին է մտել
Եւ բարեմիտ իշխանից
Ինձ մորթելու խօսք առել։

Վարդուհին ջրի տակից պատասխանում է.

Անուշիկ եղբայր, վազիր իշխանին,
Շուտ տեղեակ արա նրան այդ բանին.
Խնդրիր իմ կողմից, որ քեզ պաշտպանէ,
Չար կընկայ դէմքից դիմակը հանէ։

Պարոնը շատ հեռու չէր. նա լսեց այս խօսակցութիւնը և կանչեց իւր սպասաւորներին.

«Հաւաքուեցէք, հաւաքուեցէք, ծառաներ,
Եւ ձգեցէք իմ մետաքսեայ ուռկաններ»։

Ծառաները վազեցին, ուռկանները ձգեցին և Վարդուհուն հանեցին. նրա կեղտոտ լաթերը հեռացրին, մաքուր ջրով լուացին և վրան ճերմակ սաւան ձգեցին։ Վարդուհին առաջուանից աւելի գեղեցկացաւ։ Նա գրկեց գառանը և կամենում էր համբուրել... Բայց գառն էլ գառը չէր, այլ տղամարդ էր դարձել։ Պարոնը տուն տարաւ նրանց և այնուհետև երեքը միասին աւելի երջանիկ սկըսեցին ապրել։ Իսկ խորթ մօրը, փոխանակ կախ տալու, բարի Վարդուհու խնդրանօք իրանց տանից դուրս արին։

85. ՅՈՊՈՊԻԿՐ

Գեղեցիկ նորահարսը մենակ նստած էր սենեակում և գլուխ էր կոկում։ Նա սանրում էր իւր խիտ մազերը — սանրում էր և քթի տակին լռիկ-մնջիկ երգում էր.

«Ա՜խ, զարմանք բան է էս հայի բանը.
«Էդպէս կարգ չըկար իմ հօրանց տանը.
«Ազատ մարդ էի աղջիկ ժամանակ,
«Խօսում, ծիծաղում, երգում համարձակ։
«Ամեն կենդանի՝
Թէ թռչուն ասես, թէ չորքոտանի,
«Իրաւունք ունի,
«Թէկուզ նա լինի մի բզեզ չընչին,
«Ձայն տալ, ծըլվըլալ իւր ցեղի հանդին։
«Միայն մենք ենք՝ որ իրաւունքից զուրկ,
«Որպէս մի գերան, մի աղիւսէ բուրգ,
«Մեծերի առաջ խօսել չենք կարում».
Ասում էր հարսը ու արցունք թափում։

Յանկարծ այդ ժամին—
Ո՛րտեղից բերեց սատանի քամին—
Դուռը բացւում է ու մինը մտնում.
«Անամօթ աղջիկ, այդ ի՞նչ ես անում,
Ո՞ւմ հետ ես խօսում, ինչո՞ւ ես երգում»։
Պատրոնն էր լսել ձայնը խեղճ հարսի,
Բարկացած մտել, որ նրան սաստի։
Հարսը զարհուրեց, յետ ու յետ գնաց,
Լեզուն փորն ընկաւ, հազիւ կըմկըմաց.
«Յո՜-յո՜, պոպ-պոպ», կիսաձայն ասաց.
«Գետինը պատռէր, մէջը մտնէի,
«Որ մեծիս առաջ ձայն չըհանէի»։

—Յոպոպ դառնաս, վա՜ տոքրահարս,
Ես քեզ տեսնեմ՝ յոպոպ դառնաս,
Որ չար լեզուիդ կապը ճանչնաս։
Ասաց, անիծեց։ Անէծքը առաւ՝
Հարսն յոպոպ դառաւ
Եւ սանրը գլխին երդկից դուրս թռաւ։
Այն օրից այսօր սիրուն թռչունը,
Երբ միտն է բերում իր մարդկանց տունը,
Նախշուն թևերը թափէ-թափ տալով,
Կատարին բուսած սանրը բանալով՝
«Յո-պոպ» հա՜ «յո-պոպ» կանչում է, կանչում.
Բայց ոչ-ոք նրան էլ չի ճանաչում։

86. ՈՒՐԻՇԻՆ ՀՈՐ ՓՈՐԵՍ, ԻՆՔԴ ՄԷՋԸ Կ'ԸՆԿՆԵՍ

I.

Մի ծեր մարդ ապրում էր իւր պառաւ կնոջ հետ։ Պառաւը շատ չար կին էր։ Նա ունէր մի աղջիկ՝ անունը Շողակաթ։ Շողակաթը չարութեան կողմից իւր մօրիցը պակաս չէր։

Ծերը հանդարտ և բարի մարդ էր։ Սա էլ ունէր մի աղջիկ անունը Մարիամ։ Մարիամը շատ հանդարտ, աշխատասէր և գեղեցիկ աղջիկ էր։

Խորթ մայրը ամենևին չէր սիրում Մարիամին։ Նա միշտ ասում էր իւր մարդուն. «Չեմ ուզում Մարիամի հետ կենալ. տար նրան անտառ, այնտեղ մի գետնափոր գտիր, թող նա այնտեղ մնայ, գործի, ինչ ուզում է՝ անի»։

Պառաւն այնքան ասաց, որ խեղճ մարդու գլուխը տարաւ։ Էլ ուրիշ ճար չկար. ծերը լծեց սայլակը, վեր առաւ Մարիամին և ճանապարհ ընկաւ։ Գնացին անտառ

և այնտեղ գտան մի քարայր։ Շատ ցաւում էր ծերը իւր աղջկայ վրայ, բայց ի՞նչ կարող էր անել։ Նա տուեց Մարիամին հրահան, կայծաքար, աբեթ և մի տոպրակ բրինձ ու ասաց նրան. «Մարիամ, կրակ վառիր, որդի, բրնձից քեզ համար կերակուր եփիր, խրճիթդ լաւ սրբիր-աւելիր և դու էլ նստիր ու մանիր. մի՛ վախենար, վաղը ես կըգամ քեզ տեսութեան»։

Մարիամը մնաց մենակ, ամբողջ օրը մանեց, իսկ երբ-որ մթնեց, վառարանը վառեց և իրան համար կերակուր եփեց։ Հէնց որ կերակուրն սկսեց եփ գալ, մին էլ տեսնես, յատակի տակից մի մուկը դուրս վազեց և նրան ասաց. «Սիրուն աղջիկ, մի գդալ սպաս տուր, ուտեմ»։ Մարիամը լաւ կերակրեց մկանը. նա էլ շնորհակալութիւն արեց ու գնաց։

Ինքը Մարիամն էլ հաց կերաւ ու սկսեց մանել։ Յանկարծ, կէս գիշերին, մէկ արջ ներս է մտնում խրճիթը և ասում է նրան. «Ապա, աղջիկ, կրակը հանգցրու, որի աչքակապուկի խաղանք. վեր առ այս արծաթէ զանգակն ու զընգզընգացրու. իսկ ես կ'աշխատեմ քեզ բռնել»։

Մարիամը շատ վախեցաւ և չէր իմանում, թէ ինչ անի։ Բայց այդ բոպէին մուկը դուրս վազեց յատակի տակից, բարձրացաւ Մարիամի ուսերը և նրա ականջումն ասաց. «Մի՛ վախենար, Մարիամ, կրակը հանգցրու, դու էլ դռան ետևը թաց կաց, իսկ զանգակն ինձ տուր»։ Մարիամն այդպէս էլ արեց։

Արջն սկսեց խաղը, բայց ամենևին չկարողացաւ մկանը բռնել. մուկը վազում էր ու զընգզընգացնում, իսկ արջը նրա յետևից պտույտ-պտույտ էր անում։ Նա շատ այս ու այն կողմն ընկաւ, բարկացաւ, կատաղեցաւ, գոռաց բարձր ձայնով, սկսեց գաւազանով բոլոր անկիւններին ու պատերին խփել, կոտրատեց եղած աման-չամանը, բայց մկանն

ինչ կարող էր անել։ Վերջապէս արջը հանդարտուեց ու ասաց. «Դու շատ լաւ աչքակապուկի ես խաղում, աղջիկ, այդ պատճառով ես առաւօտեան կ՚ուղարկեմ քեզ համար մի ջոկ ձի և մի սայլ հարստութիւն»։ Ասաց ու գնաց։

II

Միւս օրը, առաւօտեան, պառաւն ինքն ուղարկեց ծերին անտառ. «Գնա, ասաց, տես, ինչքան թել է մանել քո Մարիամը»։

Ծերը գնաց։ Պառաւը նստեց լուսամուտի առաջ և ինքն իրան ասում էր. «Հիմա ծերուկս կըգայ և Մարիամի ոսկորներն էլ հետը կըբերէ»։

Պառաւը նստած սպասում էր. մէկ էլ լսեց, որ անտառի կողմից մի չըխկչըխկոցի ձայն է գալիս։ Նա մտածեց. «Ահա գալիս է ծերուկս և Մարիամի ոսկորները բերում է հետը»։ Այս խօսքերն ասած-չասած՝ բակի դռները բացւում են, ձիերը ներս են վազում. իսկ Մարիամը, իւր հօր հետ սայլի վրայ նստած, անթիւ բարիք էր բերում։ Պառաւը բարկանում, կատաղում է... «Ա՛յ քեզ հրաշք, գոռում է նա. վաղն էլ իմ աղջկանս տանես անպատճառ. իմ Շողակաթը քո Մարիամի հատը չէ. նա երկու ջոկ ձի և երկու սայլ ոսկի կըբերէ»։

III

Միւս օրը ծերը պառաւի աղջկան տարաւ անտառի այրը և տուեց նրան բոլոր բաները, ինչ-որ իւր աղջկան էր տուել։ Շողակաթը կրակ վառեց և ճաշ եփեց։ Մուկը յատակի տակից դուրս նայեց և ասաց. «Սիրուն աղջիկ, խնդրեմ մի գդալ կերակուր տաս»։ Շողակաթը գոռաց նրա վրայ. «Կորի՛ր, կեղտոտ անպիտան. դեռ կերակուր էլ

ես ուզում», ասաց ու ճիպոտով խփեց խեղճ մկան մէջքին։ Մուկը փախաւ, մտաւ իր բունը. իսկ Շողակաթը նստեց, միայնակ բոլոր կերակուրը կերաւ ու պառկեց քնելու։

Կէս գիշերին արջը ներս մտաւ այրը և ասաց աղջկան. «Ա՛յ աղջիկ, արի աչքակապուկի խաղանք. առ այս փոքրիկ զանգակը, վազի՛ր և զընգզընգացրու. իսկ ես կ՚աշխատեմ քեզ բռնել»։ Աղջիկը վեր առաւ զանգակը և սկսեց վազել. բայց ո՞ւր պիտի փախչէր արջի ձեռքից։ Նրա ծընկները ծալւում էին, ձեռները դողդողում և զանգակն ինքն իրան զընգզընգում էր։ Իսկ մուկը յատակի տակից ասում էր. «Զար Շողակաթը թող ոչնչանայ, արժանի է»։

IV

Միւս առաւօտ պառաւը մարդուն ուղարկեց իւր աղջկայ հետևից. «Գնա, ասաց, ձիերը և ոսկին բեր»։

Ծերը գնաց. իսկ պառաւը նստեց դռանը և սպասում էր։ Փոքր ժամանակից յետոյ նա լսեց, որ անտառի ճանապարհից թըխկթըխկոցի ձայն է գալիս։ Պառաւը մտածեց. «Ահա գալիս է իմ Շողակաթը և իրան հետ անթիւ բարիք է բերում»։

Վերջապէս ծերունին մօտեցաւ դռանը։ Պառաւի աղջիկն այնպէս ջարդուած ու կոտրատուած էր, որ հազիւ կարողացան սայլակից ցած բերել։ Կատաղեց չար պառաւը, բայց ի՞նչ կարող էր անել։

Մի քանի ժամանակից յետոյ Մարիամը մի լաւ տղայի հետ ամուսնացաւ։

---

87. ՀՐԵՂԷՆ ՁԻ

Ա.

Մի ծեր մարդ երեք որդի ունէր՝ երկուսը խելօք էին, իսկ երրորդը յիմար և կեղտոտ։ Գիշեր ու ցերեկ յիմարը, տանը վայր ընկած, ոչինչ գործի չէր գնում։

Ծեր մարդը մի օրավար ցորեն էր ցանել։ Ցորենը դուրս էր եկել, մեծացել և գեղեցիկ հասկեր բռնել. միայն գիշերները մէկը գալիս էր ու տրորում արտը։ Այս բանին մի ճար անելու համար՝ ծերը իւր որդոցն ասաց. «Սիրելի՛ որդիք, գիշերները հերթով գնացէք, արտը պահպանեցէք և աշխատեցէք գողին բռնել»։

Առաջին գիշերը մեծ որդին գնաց պահպանութիւն անելու, բայց կէս գիշերին քունը տարաւ ու քնեց։ Առաւօտեան յետ դարձաւ տուն և ասաց. «Ամբողջ գիշեր չքնեցի, սառայ, փայտ դարձայ, բայց գող չտեսայ»։ Միւս գիշերը երկրորդ որդին գնաց, ողջ գիշերը քնեց և առաւօտեան միևնոյն լուրը բերեց։

Երրորդ գիշերը հերթը յիմարին հասաւ։ Նա մէկ պարան վեր առաւ և գնաց, արտի մօտ նստեց, գողին սպասեց։ Կէս գիշերին մօտեցած՝ նրա քունն էլ տարաւ։ Յիմարը վեր առաւ դանակը, մատը մի փոքր կտրեց, մէջը աղ ածեց, մրմընջացրեց և այդպիսով քունը փախցրեց։ Գիշերուայ կէսին, մէկ էլ տեսնես, աշխարհ շարժուեցաւ, քամի վեր կացաւ և երկնքիցը հրեղէն թևով մի ձի ցած իջաւ, արտի մէջ մտաւ. քթածակերից ամպ էր բարձրանում, աչքերում, կարծես, կայծակ էր փայլում։ Եւ ձին սկսեց ուտել ցորենը,—ո՛չ այնքան ուտել, ինչքան կոխոտել։

Փորսող տալով մեր յիմարը կամաց-կամաց մօտեցաւ ձիուն և յանկարծ թոկը նրա պարանոցը գցեց, բռնեց։

Ձին ամենայն զօրութեամբ ձգձգեց, յետի ոտների վրայ ծառս եղաւ, բայց մեր յիմարի ձեռքից չազատուեցաւ. ապա կանգնեց ու սկսեց աղաչել. «Յովհաննէս, բարեկամ, ինձ արձակի՛ր. ես դրա փոխարէն մեծ ծառայութիւն կ՚անեմ քեզ»։

«Շատ լաւ, բայց ես քեզ յետոյ ի՞նչպէս գտնեմ», ասաց Յովհաննէսը։

—«Երբ-որ կամենաս ինձ կանչել, դուրս կրգաս դաշտը, երեք անգամ կըշվվացնես և կըկանչես. «Հրեղէն ձի, հրեղէն ձի, շուտով ինձ հասի՛ր». ես այն րոպէին քո առաջը կըլինիմ»։ Յովհաննէսն արձակեց ձին և պատուիրեց, որ միւս անգամ արտը չտրորէ։

Յիմարը յետ դարձաւ տուն։ «Ի՞նչ տեսար, ի՞նչ շինեցիր», հարցրին նրան եղբայրները։ Յովհաննէսը պատասխանեց. «Ես մի հրեղէն ձի բռնեցի. նա ինձ խոստացաւ, որ էլ մեր արտը չի մանիլ. ես էլ նրան արձակեցի»։ Մնացած բանները նա չպատմեց։ Շատ ծիծաղեցին եղբայրները խեղճի վրայ. միայն, ճշմարիտ որ, այն օրից յետոյ ոչ ոք արտին վնաս չէր տալիս։

Բ.

Այս անցքից միքանի օր յետոյ թագաւորից ամեն գիւղեր ու քաղաքներ մունետիկներ ուղարկուեցին, որոնք բարձր ձայնով կանչում էին և ասում. «Ո՛վ պարոններ, քաղաքացիներ, ազնուականներ և գիւղացիներ, մեծ թագաւորը տօն է կատարում և ձեզ ամենքիդ հրաւիրում է։ Երեք օր ուրախութիւն պէտք է լինի։ Լաւ ձիաներդ վեր առէք. թագաւորի միակ և արեգակի պէս գեղեցիկ աղջիկը բարձր բուրգի պատշգամբում նստած կըլինի. ով որ իւր ձիով կարողանայ թռչել, թագաւորի աղջկան հասնել

ու նրա մատից մատանին հանել, թագաւորը նրան իւր աղջիկը կնութեան կըտայ»։

Յովհաննէսի եղբայրներն էլ գնացին այս հանդէսը, բայց ոչ թէ իրանք թուչելու, այլ ուրիշներին նայելու։ Յովհաննէսը խնդրեց, որ իրան էլ հետները տանեն։ «Դու ինչի՞ համար ես գալիս, յիմար, ասացին եղբայրները, մարդկանց վախեցնելու, ի՞նչ է. տանը վէր ընկիր»։

Եղբայրները ձի նստեցան, գնացին։ Յովհաննէսն էլ նրանց յետևից ծածուկ դուրս գնաց դաշտը և իւր հրեղէն ձիուն կանչեց։ Որտեղից որ էր՝ ձին իսկոյն վազեց, Յովհաննէսի առաջին կանգնեց։ Յովհաննէսը ձիու գլխովը

ցատկեց, որից յետոյ կերպարանքն էլ փոխուեցաւ և մի այնպիսի քաջ տղամարդ դարձաւ, որ տեսնողն ամենևին չէր ճանաչիլ, թէ առաջուայ կեղտոտ Յովհաննէսն է։ Յետոյ նա հեծաւ ձին և քշեց դէպի հանդէս։ Գնաց-տեսաւ, որ թագաւորի տան առաջ, ընդարձակ հրապարակի վրայ, անհամար ժողովուրդ էր հաւաքուած. իսկ բարձր աշտարակի պատշգամբին թագաւորի աղջիկն էր նստած. ինքը գեղեցիկ էր լուսնի նման, մատանին փայլում էր արեգակի նման։ Բայց ոչ ոք չէր համարձակւում դէպի վեր ցատկել։ Ո՞վ էր իւր գլխից ձեռք վեր առել։ Մեր Յովհաննէսը խփեց ձիու կողերին։ Կենդանին մռնչաց, սաստիկ ուժով վեր ցատկեց և հասաւ պատշգամբին։ Յովհաննէսը թագաւորի աղջկայ մատից թանկագին մատանին հանեց, ձիու գլուխը յետ դարձրեց և փախաւ։ Թագաւորը, թագուհին և բոլոր ժողովուրդն սկսեցին գոռալ. «Բռնեցէք, հա, բռնեցէք»... Բայց որտեղ...

Յովհաննէսը տուն եկաւ՝ ձեռքի մէկը փալասով փաթաթած։ «Այդ ի՞նչ է եղել ձեռքդ», հարցրին հարսները։

«Մորի քաղելիս քարից վայր ընկայ, ձեռքս պլոկուեցաւ, ոչինչ բան չկայ», ասաց Յովհաննէսը։

Երեք օրից յետոյ թագաւորից մունետիկներ են գալիս և ասում են, որ բոլոր տղամարդիկ, որոնք բնակւում են նրա թագաւորութեան մէջ, պարտաւոր են գնալ նրա մօտ՝ խնճոյք անելու, և ով որ թագաւորի այս հրամանը չի կատարիլ, նրա գլուխը կըկտրեն։

Ուրիշ հնար չկար. ծերունին իւր բոլոր ընտանիքով գնաց հրաւէրքի։ Եկան, հաւաքուեցան, սփռոցի շուրջ շարուեցան, կերան, խմեցին, շատ ուրախացան։ Խնճոյքի վերջում թագաւորի աղջիկը իւր ձեռքով սկսեց ամենքին մեղրաջուր բաժանել։ Ամենից յետոյ Յովհաննէսին մօտեցաւ։ Յովհաննէսն էլ այն օրուանից էր, որ թշնամիդ չլինի.

շորերը պատառոտած, մրոտած, մազերը կեղտոտ, խճճուած, ձեռքի մէկն էլ կեղտաշորով փաթաթած. խստակ զզուելի։ «Տղայ, ձեռդ ինչի՞ է կապած, հարցրեց Թագաւորի աղջիկը. բաց արա, տեսնեմ»։

Յովհաննէսը ձեռի փաթաթանը յետ արեց և մատի վրայ փայլեց Թագուհու մատանին։ Աղջիկը բռնեց նրա թևից, տարաւ իւր հօր մօտ և ասաց. «Հայրիկ, ահա իմ փեսացուն»։

Սկսեցին Յովհաննէսին բաղանիք տանել, գլուխը սանրել, մածերը օծել, շորերը փոխել... և նա մի այնպիսի գեղեցիկ տղամարդ դարձաւ, որ հայրն ու եղբայրներն էլ չէին կարողանում ճանաչել նրան։ Թագաւորը եօթն օր, եօթը գիշեր հարսանիք արեց, մեծ խնճոյք տուեց և Յովհաննէսին փառքով պսակեց։

88. ՈՐՍՈՐԴ ՅԱԿԱՆԸ

Լինում է-չի լինում մի աղքատ որսորդ։ Այս որսորդն ունենում է մի որդի, անունը Յական։ Մեռնելիս՝ նա կանչում է Յականին և ասում է. «Սիրելի՛ որդի, ես մեռնում եմ. աւանդ եմ թողնում քեզ երկու բան՝ իմ նետ-ու-աղեղը և իմ պատուէրը։ Պատուէրս էլ սա է. ամեն տեղ, ո՛րդի, կարող ես որսի գնալ, բայց Վշտաձորից այն կողմը չանցնես։ Ասում է ու մեռնում։

Յականն առնում է իւր հօր զէնքերը և շարունակում է նրա գործը։ Նա ամեն օր հանդն է գնում, որս է անում և նրանով մայր ու որդի ապրում են։

Մի օր էլ Յականը գնում է որսի, մինչև կէսօր ման է գալիս, բան չի գտնում։ Կէսօրին մօտ՝ մի կաքաւ դուրս է գալիս նրա առաջ։ Նա արձակում է նետը։ Կաքաւը թրպրտում է ու վայր ընկնում թփերի մէջ։ Յականը մօտ

է վազում, որ բռնի։ Վիրաւորուած թռչունը հաւաքում է իւր ուժերը և վեր բարձրանում թփերի միջից. նա թռչում է մի տարածութիւն և կրկին վէր է ընկնում մացառուտի մէջ։ Յականը վազ է տալիս այն կողմը։ Բայց թռչունը այդտեղ էլ ճանկ չի ընկնում. նա թռչում է կրկին ու կրկին և իւր եռևից քաշում-տանում է ոգևորուած որսորդին։ Վերջապէս Յականը նկատում է, որ ինքը դուրս է եկել իրանց սահմանից և անցել է Վշտաձորի այն կողմը։ Մի անսովոր սարսուռ անցնում է նրա մարմնով։ Ի՞նչ անի, ո՞ւր գնայ. մոլորուել է արդէն։ Շատ ծարաւ էր. լեզուն պապակում էր։ Հեռուում նկատում է մի ծառաստան. դէպի այն կողմն է գնում։ Մօտենում է ծառաստանին. ի՞նչ է տեսնում. մի հրաշալի այգի, այնքա՛ն գեղեցիկ, այնքա՛ն շքեղ, որ ո՛չ պատմել կարելի է, ո՛չ նկարագրել. պէտք է աչքովդ տեսնես, որ հասկանաս։ Մա՛ն է գալիս Յականը, այս կողմն է գնում, այն կողմն է ընկնում. մարդ չկայ... Այդ ժամին նա լսում է մի ձայն, որ ծառի վրայից ասում էր. «Որսորդ աղբէր, դու ուզում էիր ինձ սպանել, բայց ինքդ ընկար փորձանքի մէջ. եթէ խելք ունիս, կ'ազատուիս այդ փորձանքից. եթէ յիմար ես, վերջդ է»։ Վիրաւորուած կաքաւն էր խօսողը, որ ասաց ու թռաւ։

Յականը մնում է ապշած. «Եթէ խելք ունիս, կ'ազատուիս այս փորձանքից»... կրկնում է նա. բայց ի՞նչ խելք բանացնէր, ո՞ւր գնար ծարա՛ւ, անօթի՛... Այս ու այն կողմը նայեց, որ չուր գտնի... Պարտիզի խորքում տեսաւ մի շէնք։ Տուն չէր սա և ոչ բնակարան անասունների. մի տարօրինակ բուրգ էր, որի միջից մի գառիվայր սանդուխտ իջնում էր դէպի տափի տակը։ Յականը կանգնում է սանդուխտի գլխին, ականջ է դնում... Անդունդում խոխոջում էր մի առուակ, թէ գետակ։ Յականը ցած է գնում սանդուխտով։ Ջրի քչքչոցը սաստկանում է ու

սաստկանում։ Ցականը մոռանում է ամեն բան. Ջրի ձայնը ծարաւ մարդուն, հացի հոտը—քաղցածին խելագարութեան կարող են հասցնել։ Ցականն էլ մօտ էր խելագարուելուն։ Բայց այդ րոպէին նա մտաբերում է կաքաւի երգը. «Եթէ խելք ունիս, կ'ազատուիս»։ Նա հաւաքում է իրան և զգուշութիւնով ցած է իջնում։ Գնում-տեսնում է, որ մի ստորերկրեայ գետակ բղխում է հորի մի կողմից և, մի երկու պտոյտ անելով նրա լայնութեամբ, կորչում է միւս կողմով։ Ցականը չոքում է Ջրի եզերքին և հէնց էն է՝ ուզում է խմել, մինը ձայն է տալիս. «Կաց, պատանի, կաց. դու ոտք ես դրել իմ սահմանը, վիրաւորել ես իմ հպատակին, տրորել ես իմ այգին, այդ դեռ բաւական չէ՝— ուզում ես Ջուրս էլ պղտորել։ Ես ուղարկեցի կաքաւին, որ քեզ այստեղ բերի, տեսնեմ՝ դու ի՞նչ մարդ ես, որ բան ու գործ թողած, այսքան տարի անպատիժ կոտորում ես Աստուծոյ արարածներին, որոնք քեզ ոչինչ վնաս չեն տուել»։

Ցականը նայում և ի՞նչ է տեսնում... Ստորերկրեայ գետակի եզերքին, քարէ գահոյքի վրայ, բազմած է մի ալեզարդ ծերունի, փառաւոր մօրուքով. նրա աջ կողմը նստած է մի գեղեցիկ կոյս, այնքան գեղեցիկ, այնքան նազելի, որ ոչ ուտես, ոչ խմես, միայն նրան մտիկ անես. նրա ձախ կողմումն էլ պպզած է մի ահագին գորտ, այնքան ագեզ, այնքան այլանդակ, որ տեսնողը հազիւ կարող է զսպել իւր զզուանքը։

«Կաց, ծերունի, ասում է Ցականը. դու վեհ ես և փառաւոր. բայց ես ծարաւ եմ, խօսելու ոյժ չունիմ. կաց, թող մի քիչ խմեմ այս Ջրից»։ Ասում է ու կռանում Ջրին, մի կուշտ խմում, վրայ նստում։

Ծերունին ասում է. «Որսորդ պատանի, տեսնում եմ, որ վախկոտ չես. առանց դատի ու դատաստանի չեմ ուզում գլորել քեզ այս գետակը, որ առնի տանի դէպի

մութ աշխարհի խորքերը. մի բան կըհարցնեմ, եթէ խելացի պատասխան տուիր, կ'ապրես, իսկ եթէ տուած պատասխանդ ինձ դուր չեկաւ, այն ժամանակ վայն եկել է քեզ տարել։

—Ասա, ծերունի, ասա. այժմ ես պատրաստ եմ։

«Լաւ. դու տեսնում ես կողքիս նստած այս երկու արարածները՝ կոյսը և գորտը. սրանցից ո՞րն է սիրուն»։

—Ամեն մէկը իրան տեղը սիրուն է։

«Այսի՞նքն...»։

—Եթէ իսկոյն մի գորտ տղայ
Ջրի ակնից այս դուրս լողայ,
Նրան ասենք՝ ընտրիր մէկին.
Անշուշտ կընտրէ նա գորտուկին։
Իսկ թէ եկողը մի մարդ լինի,
Խելքը գլխին մի պատանի.
Էլ ի՞նչ կասկած, ձեռք կըմեկնի,
Որ այդ կոյսին առնի տանի։

«Խելօք պատասխանեցիր, ասաց ծերունին. այժմ դու ազատ ես։ Բայց որովհետև իմ հողը մտնողը իրան ոտով չի կարող իմ սահմաններից դուրս գալ, ուստի ես ստիպուած պիտի օգնեմ քեզ»։ Ծերունին զգուշութեամբ պոկեց իւր ալեխառն մօրուքից երեք մազ՝ սպիտակ, դեղին և սև։ «Ա՛ռ այս մազերը, աւելացրեց նա, և երբ դուրս կըգաս լոյս-աշխարհ, սրանցից մինը կըքսես շրթունքիդ. առաջդ եկած կենդանուն կըհրամայես իմ անունով, որ քեզ տանի, ձեր տուն հասցնի։ Եւ որքան ժամանակ այս թալիսմանը ձեռիդ ունենաս ու խելացի կերպով օգուտ քաղես նրանից, սա կըպահէ իր ոյժը. բայց հէնց որ սկսես գործ դնել սրան վատութեան համար, իրան զօրութիւնը կըկորցնէ յաւիտեան»։

Ծերունին լռեց։ Ցականը նայեց-տեսաւ, որ ինքը մե-

նակ է ստորերկրեայ գետի եզերքին. ոչ ծերունին կար, ոչ կոյսը և ոչ գորտը։

Այն քաղաքը, որտեղ ապրում էր որսորդ Յականը, պատկանում էր մի թագաւորի, որ երեք աղջիկ ունէր. տղայ չունէր։ Որսորդը շատ էր ուզում թագաւորի հետ բարեկամութիւն անել, նրա աղջիկներից մինն ուզել, փեսայ դառնալ։ Բայց միշտ ինքն իրան մտածում էր. «Է՛, քոսոտ որսկան, ոտդ վերմակիդ համեմատ մեկնիր. դու որտեղ, թագաւորի աղջիկը որտեղ...»։ Այս անգամ, դուրս գալով մութ աշխարհից, նա բերանն առաւ սպիտակ մազը և խկոյն նրա առաջ կանգնեց մի երիվար՝ ձիւնի պէս սպիտակ և լոյսի պէս փայլուն։ Յականը հեծաւ ձին և նա մի րոպէում հասցրեց նրան իրանց քաղաքի պարիսպներին։ Պալատի մօտից անցնելիս, Յականը նկատեց, որ թագաւորի աղջիկները նստոտած են պատշգամբի վրայ և զուարճանում են պարտիզի գեղեցկութեամբ։ Նա ցատկեց բարձր պատնէշի վրայից, մտաւ այգին և օրիորդների առաջ ձի խաղացրեց։ Եւ երբ պարտիզպաններն այս ու այն կողմից աղաղակ բարձրացրին, շուռ տուեց ձիու բերանը և դուրս փախաւ քաղաքից։ Այնտեղ, հեռուում, նա արձակեց ձին և կամաց-կամաց գնաց իրանց տուն, իբր թէ ոչինչ չի արել։

Անցաւ մի օր, երկու օր, երեք օր, մի շաբաթ, երկու շաբաթ... Յականը որսատեղից վերադառնալիս՝ էլի տեսաւ թագաւորի աղջիկներին իրանց առաջուայ տեղը նստոտած։ Նա բերանն առաւ շէկ մազը։ Նրա առաջ կանգնեց մի հրաշէկ երիվար, սարք ու կարգը մէջքին, Յականը հեծաւ ձին, թռաւ-մտաւ թագաւորի այգին, կատարեց իւր ձիարշաւը և նոյն կարգով փախաւ-գնաց։

Ամբողջ քաղաքն սկսեց խօսել այս անցքի մասին։

Թագաւորը սաստիկ բարկացաւ և հրաման արաւ, որ ինչպէս էլ լինի, բռնեն կամ սպանեն այդ համարձակ ձիաւորին. բայց ով կարող էր քամու ետևից հասնել։ Շատ իշխաններ, զօրականներ, սպասաւորներ պատրաստուեցան, որ եթէ մի անգամ էլ յայտնուի խորհրդաւոր ձիաւորը, կամ բռնեն նրան, կամ խփեն, սպանեն։

Յականին էլ յայտնի եղաւ այդ բանը. բայց նա գիտէր, թէ ինչ էր անում։ Ժամանակին նա դուրս եկաւ դաշտը, բերանն առաւ սև մազը և սպասեց։ Նոյն րոպէին սաստիկ քամի բարձրացաւ, փոշին ամպի նման բռնեց շրջակայքը և խրխընջալով եկաւ-կանգնեց Յականի առաջ մի երիվար՝ սև, որպէս սաթը և փրփրուն, ինչպէս ծովի ալիքները։ Երիվարը փռնչում էր և սմբակներով դոփում գետինը. տափը նրա ոտի տակ տատանուում էր և դողդողում։ Յականը հեծաւ ձին և մրրկի պէս մտաւ թագաւորի այգին։ Պահապանները փախան, պահուեցան. արքայուհի օրիորդներից երկուսը պատշգամբից թագնուեցան պալատի ներքին սրահներում։ Փոքր աղջիկը մնաց իւր տեղը և ողջունեց երիտասարդ ձիաւորին սպիտակ թաշկինակով։ Յականը մի ակնթարթում խլեց թաշկինակը օրիորդի ձեռքից և անյայտացաւ։

Այս դէպքից մի շաբաթ անցած՝ թագաւորի աղջիկները երեք խնձոր ուղարկեցին իրանց հօրը։ Թագաւորը հասկացաւ, որ օրիորդները ցանկանում են ամուսնանալ։ Նա հրաման արձակեց, որ իւր տէրութեան մէջ եղած իշխանորդիք և ազնուական երիտասարդներ գան-հաւաքուեն պալատի առաջ ձգուած հրապարակը ձիարշաւի։ Հրապարակի մի ծայրում կառուցած էր մի շքեղ բուրդ, որի դստիկոնի վրայ նստոտած էին օրիորդները։ Ձիարշաւի ժամանակ

ազապները պիտի անցնէին դստիկոնի առաջով և աղջիկները խնձոր պիտի ձգէին այն երիտասարդին, որին հաւանում էին։ Հանդիսի ընթացքում մեծ աղջիկը և միջնեկը ցոյց տուին, թէ որոնք են իրանց ընտրեալները. իսկ փոքրը ախուր նստած էր։ Նա սպասում էր խորհրդաւոր ձիաւորին, բայց սա չկար ու չկար. խնձորը մնաց ձեռքի մէջ. ակնապիշ աչքերը արտասուքով լցուեցին։

«Իսկ դու, փոքրիկս, հարցրեց Թագաւորը. ինչո՞ւ չես ընտրում քեզ փեսացու. ո՞ւմ համար ես պահում խնձորը»։

Աղջիկը պատասխանեց. «Հայր, հաստատ լինի քո Թագաւորութիւնը. դու քո հպատակներին սիրում ես միատեսակ. քեզ համար խտրութիւն չկայ ազնուականի և ռամկի մէջ։ Նրանք էլ հաւասարապէս սիրում և պաշտում են քեզ։ Քո իշխանների մէջ, հայր Թագաւոր, ես չգտայ իմ սրտի սիրածին... Պսակիր, հայր, քոյրերիս. իսկ յետոյ հրաման արա, որ հաւաքուեն հասարակ հպատակներիդ կտրիճները. ես նրանց միջից կընտրեմ ինձ համար ամուսին»։

Հայրը տեսաւ, որ աղջիկը խելօք է մտածում, համաձայնուեց։

Մեծ աղջիկները պսակելուց յետոյ՝ Թագաւորը հրամայեց, որ իւր տէրութեան մէջ ինչ-որ ազապ տղայք կան հասարակ դասակարգից, ժողովուեն Թագաւորական հրապարակը, որովհետև արքայադուստրը ցանկանում է նրանց միջից ընտրել իրան փեսացու։

Նշանակած օրը եկան-հաւաքուեցան փեսացու երիտասարդները։ Աղջիկը նստեց ամբիոնի վրայ։ Երիտասարդները մէկ-մէկ անցան նրա առաջով։ Ամենքից վերջը եկաւ Ցականը՝ իր որսորդական աղեղն ուսին, սպիտակ թաշկինակը վրան փաթաթած։ Աղջիկը ճանաչեց նրան և ձգեց խնձորը։ Որսորդը նետի ծայրով բռնեց խնձորը։ Բոլորը

ծափ զարկեցին։ Թագաւորը մօտ կանչեց նրան և ներկայացրեց իւր աղջկան։ Յետոյ միւսների պէս եօթն օր, եօթը գիշեր հարսանիք արեց և առանձին բնակարան տուեց ապրելու։

Բայց միւս փեսաները սաստիկ վշտացան, որ իրանց քենակալը մի հասարակ որսորդ է, աղքատ ու ծագումով ստոր։ Ցականը նկատում էր այդ արհամարհանքը և ինքն իրան ասում էր. «Սպասեցէք, ժամանակը կըգայ, ես ձեր ճաշը կ'եփեմ»։

Անցկացաւ մի ամիս, երկու ամիս, երեք ամիս... Թագաւորը հիւանդացաւ։ Քաղաքի բոլոր բժիշկները, բոլոր գիտնականները եկան, հաւաքուեցան, խելք-խելքի տուին, բայց Թագաւորին չկարողացան բժշկել։ Նրա դրութիւնը օր-օրի վրայ աւելի ու աւելի ծանրանում էր։ Վերջը մի վհուկ եկաւ և ասաց. «Թագաւորն ապրած կենայ, դու մինչև որ առիւծի կաթ չխմես, չես առողջանալ»։ Թագաւորը կանչեց իւր փեսաներին. «Որդիք, ասաց, գնացէք, ոնց որ լինի, ինձ համար մի-երկու բաժակ առիւծի կաթ ճարեցէք, բերէք։

Ուղածը հեշտ բան չէր։ Մեծ փեսաները վեր առան շատ մարդիկ և մեծ պատրաստութիւնով գնացին դէպի այն վայրերը, որտեղ կարծում էին, թէ կարող են առիւծ գտնել։ Ցականին չտարան։ «Դու էլ կաղ էշով քարվան ես խառնուում, ասացին. լաւ է, կնկանդ կողքին նստիր և նրա հետ միասին գնուլպայ գործիր. ի՞նչ քու բանն է առիւծի դէմ գնալը»։

Ցականը կուլ տուեց այս նախատինքը։ Երբ-որ նրանք հեռացան, նետ ու աղեղը ուսը դցեց և կամաց-կամաց գնաց նրանց ետևից։ Գնաց, տեսաւ, որ մի ձորի բերանի,

խմբակ կազմած, նստած են։ Իսկ հեռուում առիւծների մռնչոցը սար ու ձոր դղրդեցնում էր։

Ցականը մօտեցաւ այն խմբակին, որ իշխաններից անջատ նստած էր մի կողմում։

—Բարի աջողում, ասաց Ցականը. ինչո՞ւ էք տխուր նստոտել։

«Աստծու բարին, պատասխանեցին նրանք. բա ի՞նչ անենք, ախպէր. կարելի՞ բան է՝ բռնել առիւծին, կթել ու բաց թողել. այ, տես, մեր իշխաններն էլ մնացել են մոլորուած։

—Շատ լաւ, եթէ ես ձեզ ազատեմ այդ դժուարութիւնից, ի՞նչ կըտաք։

«Էդ ո՞նց», հարցրին նրանք։

—Էնպէս էլի, գնամ, առիւծի կաթը բերեմ. դուք էլ տաք ձեր իշխաններին, նրանք էլ տանեն, թագաւորին տան։

«Դա լինելու բան չի», ասացին խօսողներից մի քանիսը։

—Ես անեմ, ձեր ինչի՞ն ա, պատասխանեց Ցականը։

«Շատ լաւ, ախպէր, շատ լաւ. ինչ ուզում ես կըտանք, միայն թէ մեզ էս խաթայ-բալից ազատես»։

—Դէ մնա՛ք բարով, գնամ-գամ, յետոյ կըխօսենք, ասաց Ցականը։ Նա ճանապարհ ընկաւ դէպի այն պնդոցը, որտեղից լսւում էր առիւծների մռնչիւնը, գնաց-գնաց, շատն ու քիչն Աստուած գիտէ, հասաւ մի բարձր ժայռի գլուխ և այնտեղից նայեց շրջակայքին։ Տեսաւ մի մէրուն-առիւծ, լակոտները կշտին, պպզած է։ Վերևից կանչեց. «Թագուհի՛ առիւծ, բարի լինի ազատութիւնդ, զօրանան ձագերդ, ապրի տէրդ՝ թագաւոր առիւծը. ո՞ւր է, ինչի՞ չի երևում։

—Հայրը գնացել է որս անելու, որովհետև ես անկարող եմ, լակոտներս մանր են. ո՞վ ես, ի՞նչ փորձաւ ունես։

«Մեր թագաւորը հիւանդ է, թագուհի՛ առիւծ. եկել

եմ քեզ կթեմ, մի քանի բաժակ կաթ տանեմ. խմի, լաւանայ»։

—Այդ անկարելի է, ասաց մայր-առիւծը. կաթը ձագերիս համար է. մի բաժակ չէ, մի կաթիլ էլ չեմ տալ։

«Ես կըխլեմ բոլոր ձագերդ, եթէ նրանց պատճառով կաթը չտաս, ասաց Ցականը. դատարկ ձեռքով հօ ետ չեմ դառնալու»։

—Արի՛ ու տար, եթէ քաջ ես, մռնչաց առիւծը։

Ցականը տեսաւ, որ խօսելով բան չի դառնալ, հանեց սև մազը և մօտեցրեց շրթունքներին։ Նոյն րոպէին սաստիկ փոթորիկ բարձրացաւ, անտառը տարուբերուեցաւ. սար ու ձոր դղրդացին. երևեցաւ սև երիվարը, սանձը բերանին։ Ցականը ական թօթափել վրայ տուեց առիւծի ձագերին, մին էլ ու մին էլ. երեք ձագն էլ առաւ, խուրջինի աչքը կոխեց։

Մայր-առիւծը մնաց քարացած։

Ցականը ժայռի գլխից ձայն տուեց. «Եթէ կաթը չտաս, ձագուկներդ մէկիկ-մէկիկ կըմորթոտեմ աչքիդ առաջ»։

Առիւծը խնդրեց. «Ա՛յ, մարդ, ազաչում եմ, ձեռք մի՛ տալ ձագերիս, արի՛, կթի՛ր, դատարկի՛ր կուրծս, տար ձեր թագաւորին. միայն թէ մի՛ տալ կորիւններիս։ Շո՛ւտ, շո՛ւտ, քանի հայրը չի եկել»։

Սև ձին թողեց ժայռի գլխին Ցականը, ինքը ցած եկաւ. «Իմ խելօք սևուկ, դու այդտեղ կըմնաս, կընայես. եթէ առիւծը միտքը փոխի և ինձ ուզենայ մնաս տալ, ատամներովդ կըձևոտես ձագերին, իսկ պողպատէ սմբակներովդ կըջախջախես առիւծի գլուխը։ Ասաց ու մօտեցաւ առիւծին։ Առիւծը պպզեց ետին ոտների վրայ։ Ցականը կթեց, պտուկը լցրեց։ Յետոյ նա բարձրացաւ ժայռի գլուխը և բաց թողեց ձագերից երկուսին։ «Թագուհի՛ առիւծ, ասաց նա. ձագերիցդ երկուսին բաց եմ թողում. մէկին տանում եմ. մի քանի օրից յետոյ Սևուկս կըբերի քեզ

և այդ ձագը»։ Ասաց ու հեռացաւ, գնաց քենակալների մօտ։

Ամենքը զարմացան, երբ նա, առիւծի կորիւնը ձեռին, մօտեցաւ նրանց։ «Տղայք, ասաց նա ժողովրդին, առանց իշխաններին նայելու. առիւծի կաթը բերել եմ. այ, այս կորիւնն էլ ձեզ վկայութիւն։ Ի՞նչ կըտաք, որ ձեզ տամ»։

—Ինչ որ ուզես, ինչ որ ուզես, ձայն տուին այս ու այն կողմից։

«Առիւծի կաթը ձեզ կըտամ, եթէ համաձայնուէք, որ ձեզանից երկուսի թիկունքին դրոշմեմ իմ կնիքը»։

—Համաձայն ենք, համաձայն ենք, ձայն տուեց ամբոխը։

Ցականը հանեց խուրջինից ձիու նալը. գցեց կրակի մէջ և ասաց. «Դէհ, բռնեցէք իմ մեծ քենակալին և կոնակը բաց արէք. եթէ նա շնորհք չունէր, ո՞ւր էր ձեզ այս տեղ բերում»։

Մի վայրկենում քենակալի մէջքը բաց արին։ Ցականը վեր առաւ կարմրացրած երկաթը, սեղմեց քենակալի մէջքին և ասաց. «Դէ, գնա այսուհետև ծիծաղիր որսորդ Ցականի վրայ և սովորիր թէ նա ինչպէս է դուլպայ գործում»։

Յետոյ Ցականը մատնացոյց արեց միւս քենակալին և ասաց. «Բերէք այն միւս իշխանին, որ մենակ պիտի կատարէր թագաւորի հրամանը»։

Այդ քենակալին էլ բերին։ Ցականը դրոշմեց նրա մէջքին իւր տարօրինակ կնիքը և ասաց. «Էնդուր եմ քեզ այսպիսի պատուանշան տալիս, որ էլ վրաս չծիծաղես»։

Այս գործողութիւնները կատարելուց յետոյ՝ նա կաթնով լիքը պտուկը տուեց իւր քենակալներին, իսկ ինքը կամաց-կամաց հեռացաւ, գնաց։

Առիւծի կաթն ուշանում էր։ Թագաւորն զգում էր, որ մահը մօտ է։ Զգում էին այդ բանը և բոլոր պալատականները։ Թագաւորը կանչեց իւր նազիր-վէզիրներին և ասաց. «Իմ հաւատարիմ իշխաններ, մեռնելուց առաջ ես շնորհակալութիւն եմ անում ձեզ այն ծառայութիւնների համար, որ մինչև օրս կատարել էք. յոյս ունիմ, որ վերջին խնդիրս էլ կըկատարէք։ Իմ փեսաներին ես ուղարկեցի, որ առիւծի կաթը բերեն. սխալուեցի, առիւծին առանց սպանելու կաթել չի կարելի. իսկ սպանելուց յետոյ նա կաթ չի ունենալ։ Ուրեմն նրանք կաթ չեն բերիլ, իրանք էլ չեն գալ, որովհետև առիւծները նրանց պատառոտած կըլինեն։ Խնդրում եմ, համաձայն օրէնքի, իմ թագաւորութիւնը բաժանէք իմ երեք աղջիկների մէջ և նրանց էլ այնպէս հնազանդ լինէք, ինչպէս ինձ էիք հնազանդ»։

Դեռ նոր էր վերջացրել թագաւորը իրան խօսքը, որ փեսաները ներս մտան և բերին առիւծի կաթը։ Թագաւորը խմեց և իսկոյն առողջացաւ։

«Սիրելի՛ որդիք, ասեց նա փեսաներին. դուք փրկեցիք ինձ մահից. ի՞նչ էք ուզում, խնդրեցէք. այս լաւութեան փոխարէնը ամեն բան կըտամ ձեզ»։

—Թագաւորն ապրած կենայ, պատասխանում են փեսաները. մեր արածը վարձատրութեան արժանի չէ. մենք մեր պարտքն ենք կատարել։ Բայց որովհետև դու քո մեծ ողորմութիւնից ուզում ես բաժին հանել մեզ, մենք մի բան միայն կըխնդրենք. ազատիր մեզ որսորդ Ցականի բարեկամութիւնից՝ մեզ բաշխիր նրա գլուխը»։

«Դժուար բան խնդրեցիք, ասաց թագաւորը. բայց ես տուել եմ ձեզ իմ արքայական խօսքը. թող այդպէս լինի»։

Հէնց այդ րոպէին դուռը բացւում է և ներս է մտնում Ցականը, առիւծի կորիւնը գրկին։

«Տէր թագաւոր, ասում է քաջ պատանին. այդ խա-

բեբանները, երևի, հաւատացրել են քեզ, թէ առիւծի կաթը իրանք են ճարել և դրա փոխանակ խնդրում են իմ գլուխը։ Սուտ են ասում, տէր իմ, կաթը ես եմ բերել, դրանց տուել. ահա սա էլ էն առիւծի կորիւնն է, որի կաթը կթել եմ։ Դրանց խաբեբայութիւնը բանալու համար, տէր արքայ, հրամայիր քո վէզիրներին, որ ստուգեն, թէ ինչ պայմանով եմ տուել կաթը ես դրանց. թող խսկոյն բաց անեն դրանց թիկունքները և տեսնեն. դրանց ամեն մինի մէջքին ձիու նալով կնիք եմ դրել, որ ոչ կըջնջուի, ոչ կըմաշուի։ Ստուգիր, տէր, և պատժիր դրանց, որ համարձակուել են խաբել իրանց թագաւորին»։

Փեսաները քար էին կտրուել։ Թագաւորը հրամայեց, որ խիստ քննութիւն անեն։ Միքանի օրից յետոյ խաբեբայ իշխանների դիակները օրօրւում էին կախաղանի վրայ։

Սրա փոխանակ Ցականը մեծ պատւի ու փառքի հասաւ։ Թագաւորի մահից յետոյ բոլոր ժողովուրդը Ցականին նրա տեղ թագաւոր նստացրին։

Նա հառաւ իրան նպատակին, դուք էլ հասնէք ձեր նպատակին։

89. ՍԱԳԱՎԱՃԱՌ ՍՈՒՐԷՆԸ

Որբևայրի կնիկ մի կար. որդի ունէր նա մինուճար՝ մի մեծ տղայ չարաճճի, որ չէր սիրում երթալ գործի։ Մայրը տղին աշկերտ տուաւ մի դերձակի լաւահամբաւ. բայց Սուրէնը գործը թողած, ինքը տկլոր, փորը քաղցած, ուստի մօտից փախաւ-գնաց...

—Քեզ ի՞նչ եղաւ, Սուրէն զաւակ. ինչի՞ եկար դառ ու դարդակ. ի՞նչ պիտի անենք մերկ, անծթի այսուհետև մենք, ա՛յ որդի։

«Մա՛յրիկ, ասաց մեր չար Սուրէն, մի ջուխտ սագ

կար մեր տանն, ուր են. տուր դրանցից մինը ծախենք, այսօր մի կերպ կառավարուենք։ Եւ երբ էգուց լոյսը բացուի, անհոգ եղիր, կ'երթամ գործի։

Մայրը բռնեց սագերից մին, ահով տուեց չար Սուրէնին։ Սուրէնն առաւ, գնաց շուկան։ Այնտեղ մի մարդ դիմացն ելաւ, մի ժանտադէմ, մեծաբերան, և հեգնօրէն նրան ասաւ.

—Ի՞նչ է գինը այդ ճնճղուկի։

«Ի՞նչ ճնճղուկի. սա հօ սագ է»։

—Քո գլուխը լա՛ի դատարկ է. դա ճնճղուկ է, ոչ թէ սագ է։

Կողքին կանգնած տղայոց մին խրատ տուեց մեր Սուրէնին. «Թագաւորի վէզիրն է դա, խեղճ ու աղքատ Սուրէն տղայ. ինչ որ ասի, պիտի լսես և ասածը ճիշտ համարես»։

«Ճնճղուկ է, լաւ, Սուրէնն ասաւ. էէ, շատ բարի, ի՞նչ ես տալիս»։

—Երկու շահի։

«Առա՛ տա՛ր. հանի՛ր, տո՛ւր դէս»։

Երկու շահին բռան միջին տուն է գալիս չարաճճին. տուն է դառնում սաստիկ տրտում և զրկանքը պահած սրտում։ Միւս առաւօտ, որոշ ժամին, նա հաղնում է ցընցոտիներ և մուրալով այս ու այն դին, հասնում է դուռն մեծ վէզիրին.

«Ողորմութի՛ւն արէք, պա՛ռոն, խեղճ ու աղքատ մուրացկանին».

—Մի կոպէկ տո՛ւր, անպիտանին, ասաց վէզիրն իւր կնոջը և փոխելով խօսքի ոճը՝ այս սագն, ասաց, մաքրել կրտաս, կարագ իւղով կրտապակես և արծաթէ սինուն

դրած, քիրման շալը վրան փռած, մեծ արքային դու կ՚ուղարկես, որ ես ու նա անուշ անենք ու Աստծուն փառաբանենք։

Վէզիրի խօսքը Սուրէնը լսեց, նրա համեմատ իւր գործը տեսաւ. ուղիղ կէսօրին նա նորից կանգնեց վէզիրի դռան ու տիկնոջն ասաւ. «Աղէն հրամայեց, որ սագն ուղարկես, սինու վրայ դրած ու քիրման շալը երեսին փռած»։ Կինն էլ հաւատաց։ Սուրէնը սագն առաւ, իրանց տուն տարաւ ու անուշ արաւ։ Գիշերուայ կէսին տեղից վերկացաւ և դէպի պալատ գնաց, մօտեցաւ, դարբասի դռան մի թուղթ կպցրեց և թղթի վրայ այս բանը գրեց.

«Սագավաճառ տղան եմ ես,
Եւ հնարներ ունիմ պէս-պէս.
Դուք սագն առաք ճնճղուկի տեղ...
Ես՝ և՛ սագը, և՛ սկուտեղ,
Քիրման շալը վրէն փռած՝
Տարայ մեր տուն...
Այս դեռ փոքրն է իմ գործերուն»։

Գրեց ու փախաւ, իրանց տուն հասաւ ու մօրը ասաւ. «Մայրիկ, յիշում եմ, որ երբ խեղճ հայրս դեռ կենդանի էր, ցնցոտիների առուտուր ունէր»։

—Այո, զաւակս, շուկայում մի փակ խանութ կայ այսօր, հօրդ խանութն է... Գուցէ դու այնտեղ գտնես հին ու նոր զգեստներ կամ շոր։

Առաւօտը վաղ Սուրէնս զօշաղ խանութը բացաւ ու դռանը նստաւ։ Մի ժամից յետոյ զինուորներ եկան, շուկան լցուեցան. սրան ու նրան հարցուփորձ արին՝ «Սագ

ծախող տղին ով է ճանաչում»։ Ոչ-ոք չի ասում։ Վերջը մօտեցան իրան՝ Սուրէնին։ Սուրէնը ասաց նրանց սրտաբաց. «Դուք այդ շորերով հարիւր տարի էլ ման-գալու լինէք, ում պիտի գտնէք. դուք պէտք է հանէք ձեր զգեստները, հագնէք հին ու մին մաշուած շորեր, մուրացկանի պէս ընկնէք դռները, ման գաք օր-գիշեր, որ սագ ծախողին գտնել կարենաք. ուրիշ կերպ երբէք, ոչ մի ժամանակ դուք յոյս չունենաք»...

Տղայի խօսքը մարդիկ յարգեցին, ներս մտան խանութ, շորերը փոխեցին՝ թողին Սուրէնին իրանց զգեստներ, հագան քրքրուած ու կեղտոտ լաթեր, ընկան փողոցներ։ Սուրէնն էլ, նրանք գնացին թէ չէ, իսկոյն հաւաքեց թողած բանները՝ թէ հանդերձները և թէ թրերը—խանութը փակեց, իրանց տուն քաշուեց։

Միքանի ժամից զինուորներն եկան, ոչ Սուրէն տեսան, ոչ շորեր գտան. տխուր, գլխակոր պալատ գնացին և վէզիր աղին ամենը պատմեցին։

Իսկ մեր Սուրէնը գիշերուայ կիսին գնաց-մօտեցաւ ծանօթ դարբասին. թուղթը կպցրեց ու վրան գրեց.

«Սագավաճառ տղան եմ ես,
Եւ հնարներ ունիմ պէս-պէս.
Դուք սագն առաք ճնճղուկի տեղ...
Դրա դիմաց ես ձեր ահեղ
Զինուորներին լաւ փետրեցի,
Մերկ ու տկլոր դուրս ճամպեցի,
Նրանց շորերն տարայ մեր տուն...
Այս դեռ փոքրն է իմ գործերուն»։

Շատ բարկացաւ թագաւորը, հրաման արաւ, ուր էլ լինի մեղաւորը, բռնեն, բերեն. նա չի կարող էլ համբե-

ըել, որ իւր երկրում մի սրիկայ իւր մարդկանցը բաց-աշկարայ խայտառակի և սագի պէս մերկ-պլոկի։

Վէզիր աղան շատ մտածեց և այսպիսի թակարդ սարքեց. բերեց մի ուղտ բարձր ու հսկայ, վրան ձգեց մի մեծ խուրջին, մէջը լիքը շատ թանկագին իրեղէններ, ու բաց թողեց փողոցն իվեր։ «Ով որ ուղտի եռքից նայի և բռնելու փորձեր անի, նա պիտի լինի սագ ծախողը, զինուորների շորի գողը»։ Ասաց վէզիրն ծառաներին, պատուէր տալով, որ լաւ նային։

Բայց Սուրէնիկն էլ չէր քնած. նա դիտում էր աչքը չռած, թէ երբ ուղտը ծանրաբեռնած, պիտի հանի իրանց դռան։ Հասնելուն պէս՝ նա բաց թողեց իրանց շունը իւր դրացու գամփռի վրան։ Գազանները իրար առան։ Ուղտին նայող ծառաները շուտ մոռացան խիստ պատուէրը. շնաքոլոն էր փառաւոր. մարդիկ եկան հարիւրաւոր... Իսկ այդ ժամին, Սուրէն ամին ուղտին առաւ իրանց գոմը, «գըխ-գըխ» արաւ, չոքացրեց, բեռը պահեց ու դուրս վազեց դէպի շներ. «Սառ ջուր բերէք, հարևաններ, շուտ ջուր բերէք և շների գլխին ածէք»։ Ասաց, վազեց, մեծ կուժն առաւ, գազանների գլխին ածաւ։ Հարևանները նոյնն արեցին ու շներին անջատեցին... Խեղճ ծառաներն ուշ հասկացան իրանց սխալը, դէս վազեցին ու դէն ընկան, կորած ուղտը էլ չգտան։—Երբ Ադամայ ժուրթը պատեց, Սուրէնն ելաւ, պահած ուղտը գոմից հանեց, առաջն արաւ, իրանց թաղից հեռու տարաւ։ Ապա ինքը պալատ գնաց և դարբասի դռան դիմաց թուղթ կպցրեց, վրան գրեց.

«Սագավաճառ աղան եմ ես,
Եւ հնարներ ունիմ պէս-պէս.
Դուք սագն առաք ճնճղուկի տեղ,
Իսկ ես ձեր ուղտն որպէս ասեղ

Ներս քաշեցի յարկիս տակը...
Այս էլ լինի իմ կատակը։
Վէզիր աղայ դու մեծանուն,
Այս դեռ փոքրն է իմ գործերուն»։

Մեծ վէզիրը շատ բարկացաւ. բայց այս անգամ հանգիստ կացաւ. ուրիշ հոգսեր ծանր ու խորին տիրել էին նրա մտքին. թագաւորի դուստրը սիրուն, որ խօսեցած էր իւր որդուն, հրաժարւում էր նրան գնալ. լաւ էր սեպում տանը մնալ։

«Վէզիր աղի ես չարամիտ որդուն գնամ թեթևամիտ. այդ չի լինի. թող այդ բանը մտքից հանի, թէկուզ հայրս ինձ սպանի»։

Ինչպէս եղաւ՝ այս համբաւը մեր Սուրէնի ականջն ընկաւ. գնաց մօրը՝ «Մամիկ, ասաւ. դու չե՞ս կարող ինձի ճարել կնկայ հալաւ թափ ու թաղայ, որ ես հագնեմ, վրէս սազայ»։

—Ո՛ղի, ասաց մայրը ապշած, հարսանիքիս հալաւները դեռ մնում են թափ ու թաղայ, որ դու հագնես, քեզ կըսազայ։

«Բէ՛ր, մայրիկս, ինչպէս նոր հարս ինձ զարդարի և ինչ ասեմ, լաւ կատարի»։

Մայրը բերաւ իւր զառ ու զարդ։ Սուրէնը հագաւ, դառաւ կին-մարդ. անչափ նախշուն էր, սիրունիկ, անչափ չքնաղ և աղաւորիկ, ինչպէս նոր-հարս թագի տակին, յար և նման լուսնեակին։—Իւր մօրն առաւ, պալատ գնաց։ Մայրը դռան կանգնած մնաց. ինքը թակեց բակի դուռը և դուրս եկող սպասուհուն խնդրեց յայտնել արքայուհուն, չքնաղատես դուստր թագուհուն, թէ նրա հետ լուրջ գործ ունի, եթէ միայն ներս կընդունի։ Երբ ներս տարան ապարանքը, հազիւ ծածկեց իւր ապշանքը.

Գահոյքի վրայ նստած էր մի կոյս,
Ոչ թէ աղջիկ էր, այլ արևի լոյս։

—Ինչի՞ եկար, քոյրիկ, ասաւ. ինչ հոգս ունիս կամ թէ ի՞նչ ցաւ։

«Ես չեմ եկել ողորմութեան, թէև կարօտ եմ օգնութեան. ես եկել եմ, որ Ձեզ ասեմ, թէ ամեն ժամ կամ, պատրաստ եմ Ձեզ ծառայել, Ձեր հրամանները կատարել, թէ պէտք լինի, նոյն իսկ կեանքս Ձեզ զոհ բերել... Ես լսել եմ, արքայադուստր իմ թագուհի՝ Ձեզ ուզում են կին տալ որդուն վէզիր աղի և թէ՝ այդ բան հակառակ է Ձեր ցանկութեան... Մտածել եմ այդ փորձանքից Ձեզ ազատել, եթէ հաճիք իմ խորհուրդս Դուք ընդունել»։

—Ուրախ կընեմ, ասա, տեսնեմ։

«Դուք պիտի հագնէք իմ շորերը և դուրս գնաք յետին դռնից. այնտեղ կանգնած է իմ մէրը. նա կըտանի Ձեզ մեր տուն և կըպահի այնտեղ թաքուն... Ես կըհագնեմ Ձեր շորերը ու կը մնամ, որ, երբ կըգայ թագաւորը, պատասխան տամ Ձեր փոխանակ. թէ ի՞նչ կ'ասեմ, այդ Դուք յետոյ պիտի իմանաք. իսկ այս պահուս շուտ պիտի գնաք, որ չուշանաք»։

—Շատ լաւ, ասաւ արքայադուստրն այն գեղանի, թող որ լինի ըստ քո բանի... Հազաւ զգեստն այն աղքատիկ, յետին դռնից իջաւ նա ցած, ուր պառաւն էր պատրաստ կանգնած և նրա հետ կամաց-կամաց իբրև օտար անցաւ, գնաց։

Սուրէնը հագաւ հարուստ շորերը դստերն արքայի, երեսին ձգեց թանձր ու նուրբ քողը մաքուր մետաքսի, ապարանջանը վզիցը կախեց, բազկանոցները կռնները քաշեց, փոքրիկ հանդոյցը, ակունքներով շատ, փարթամ մա-

զերուն քորոցով պնդեց, զառ ու զարդի մէջ նստեց, սպասեց։

Հազիւ պրծել էր, հայրը ներս մտաւ. «Աղջիկս, ասաւ, վերջին անգամն է, որ յայտնում եմ քեզ. իմ նախարարի տղին պիտի ուզես. թագաւորները իրանց խօսքերը երբէք չեն փոխում. բայց ես չեմ ուզում, որ ինձ ընդունես որպէս թագաւոր, մի խիստ, ահաւոր, այլ որպէս հօրըդ հնազանդ լինես և ինքնայօժար իղձս կատարես»։

—Հայր, վճռել եմ, քո սուրբ կամքը պիտի յարգեմ մի պայմանով։

«Ասա շուտով»։

—Երբ հարսանեաց ծէսը պրծնի, մեր քաղաքը թող քուն մտնի. ոչ-մի ճրագ թող չվառուի, և ոչ-մի մարդ տնից շարժուի՝ ոչ պաշտօնեայ, ոչ զօրական, ոչ հպատակ, վաճառական և ոչ նոյն իսկ հայրն իմ արքայն. որ ես մենակ ամուսնուս հետ փողոց ելնեմ, խնդամ, ճեմեմ... Երբ մենք մենակ միմեանց նայենք, մէկտեղ խնդանք ու ծիծաղենք, երբ մեր սրտեր միմեանց բանանք և մէկ-մէկու լաւ հասկանանք, սէր կըծնի մեր սրտերում, կըվերանայ սառնութիւնը և կըդառնանք մենք մեր տունը, հայր, անտրտում։

«Ընդունում եմ քո պայմանը և տալիս եմ այդ հրամանը»։

Տէր թագաւորի բարեհաճ կամքով և մեծ վէզիրի հոգս ու խնամքով ամբողջ քաղաքը տօնի տեսք առաւ... Պատ ու պաշտամբից գորգեր կախեցին, լուսամուտներում ծաղկունք շարեցին, փողոցների մէջ մուսետիկները բարձրագոչ ձայնով հանդէս կանչեցին բոլոր այր-մարդկանց. իսկ հարսի կողմից մատաղաշ աղջկունք, պատուաւոր կանայք,

պատանի տղայք եկան, ժողովեցան։ Զօրանոցներում զօրքն էր քէֆ անում, դպրոցներում մանկունքը խաղում. այգի ու պարտէզ, հրապարակ, կրկէս՝ ամեն տեղ մարդիկ խումբ-խումբ նուագում, երգում ու խնդում, ուտում ու խմում. սիրած թագուհուն օրհնում ու գովում...

Այսպէս եօթն օր տօն կատարեցին և եօթը գիշեր ուրախ անցուցին...

Վերջի գիշերը արքայի կամքով ամեն բան լռեց. քաղաքը մեռաւ, քամին դադարեց... Մեր հարսն ու փեսան, խոստման համաձայն, թև-թևի տուած մենակ շրջում են դատարկ քաղաքում, կամաց փսփսում, ամեն բան դիտում, ամեն ինչ քննում։ «Սա թանգարանն է քո հօր, արքայի. նա դպրանոցն է աղջիկ ու տղի. այնտեղ, տեսնում ես, շինած է կրկէս, ուր պատանիներ ազատ ժամերին մարզմունք են անում, ուր հայր թագաւորն է զուարճանում,— ասում էր փեսան։

«Իսկ ինչ շէնքեր են միւս կողմը մռայլ՝ մութ ու խաւարում կանգուն շար-ի-շար»,—հարսն է հարցնում, փեսային տհաճ այն կողմը տանում։

—Նա զօրանոցն է հզօր արքայի. սա վառօդարանն տէր-թագաւորի...

«Իսկ նա ինչ բան է», այդ թմբի վրան... որ ցից կանգնած է, վերևից չըլան. ինչի՞ համար է։ Ոչինչ մի ծածկիր. պատմիր ամեն բան։ Մօտ գնանք նրան։

—Այդ չարժէ տեսնել։

«Ուզում եմ դիտել»։

—Հեռանանք, գնանք։

«Չէ պիտի իմանանք»։

—Վախում եմ տխրես։

«Շատ երկչոտ չեմ ես։

—Քո կամքը սուրբ է, ցանկութիւնդ արդար և ես

պատրաստ եմ տալ քեզ բաւարար, լրիւ պատասխան, միայն հեռուից. չարժէ մօտենալ ու սիրտ պղտորել... նա պատժարանն է չարագործ մարդկանց. այնտեղ կախում են՝ ով չի կատարում հօրդ հրամանը, կամ ում չի սիրում մեծ սադրազամը։

«Օ՜, դա վատ բան է, գնանք, մօտենանք։ Եւ Աստուած անէ, երբ-որ ես ու դու թագաւոր դառնանք, այդ չար գործիքը խսպառ պիտի բառնանք։ Տես այս սեան վրայ բոլոր գործիքներ պատրաստ են ահա։ Ո՞րի համար են»։

—Սագավաճառի, լսել ե՞ս արդեօք. այն չարաճճի լակոտը լկտի, որ թագաւորին ու նախարարին այնքան հասցրեց վիշտ, վիրաւորանք ցաւ ու անարգանք։ Սագավաճառի համար է պատրաստած այդ կախաղանը։

—«Օ՜, ես լսել եմ, կա՛ց, վիզս անցնեմ, տեսնեմ՝ ամո՞ւր է»։

—Չէ՜-չէ՜. չեմ թողիլ. կ'ուզես ես անցնեմ, փորձելդ զուր է։

Ասաց տաք-գլուխ անխելք պատանին և օղակն անցուց իւր պարանոցը։ Սուրէնը ոտքով զարկեց աթոռին. աթոռն ընկաւ ցած և փեսան մնաց օդի մէջ կախուած։ Իսկ չարաճճին հեռացաւ, գնաց։

Պալատի դռան, դարբասին կպած, առաւօտ վաղ այսպէս էր գրած.

«Սագավաճառ Սուրէնն եմ ես,
Եւ հնարներ ունիմ պէս-պէս.
Սադրազամի խելօք տղին
Ես եմ կախել բլրի գլխին։
Ով-որ սագը ճնճղուկի տեղ
Աղքատ մարդուց խլի անմեղ,
Արժանի է այդ յարգանքին...

Թէկուզ ընդդէմ հէնց իւր կամքին։
Արքայուհին ողջ և առողջ
Սպասում է,
Թէ երբ արքայն պիտի հաճի
Նախարարին իւր տմարդի
Անչափ, անթիւ գեղծմանց համար
Արժանաւոր պատիժ մի տալ։

Միւս առաւօտ մունետիկներ ման են գալիս փողոցներում, թագաւորի պատգամները բարձրաբարբառ յայտարարում. «Այն պատանին, որ այս գիշեր արել է այս ու այս բանը, թող համարձակ դուրս գայ հանդէս և ամեն բան պատմէ այնպէս, ինչպէս որ կայ. որպէս արքայ՝ ես տալիս եմ նրան ներում. իսկ թէ գտնեմ որ արդար է իւր գործերում, իմ փեսացուս թող նա լինի, ինձնից յետոյ թագաւորի։

Երկու-երէք օր հազիւ էր անցել, որ սագավաճառ Սուրէն պատանին հայր-թագաւորի փեսան էր դարձել։ Իսկ կաշառակեր մեծ վէզիր աղան իւր գեղծումների, գէշութեանց համար անպատիւ եղել, գործից հեռացել։

Վ Ե Ր Ջ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ի. ԱՌԱԾՆԵՐ

Աժան միսը արգանակ չի ունենալ։
Զուածան հաւը կռկռան կըլինի։
Ա՜խ, մի տանձ ընկնէր՝ կոթը դէպի վեր։
Ահա փիսիկը, ուր է մսիկը։
Ահը լաւ է, քան մահը։
Ամառուան անձրևին, ձմեռուան արևին մի՛ հաւատար։
Անձրև օրը հաւերուն ջուր տուող շատ կըլինի։
Անուշ լեզուն օձը ծակից կըհանէ։
Էն ջրից վախեցին, որ ոչ թշշում է, ոչ խշշում։
Աշխարհս ով է կերել։—Հեզն ու խոնարհը։
Առաջ գետի անցքը գտիր, յետոյ ջուրը մտիր։
Բամբասանք չէ, բանն ասանկ է։
Բարկ քացախը իր ամանը կըճաքեցնէ։
Գայլի անունն է կոտրած, աղուէսը աշխարհ քանդեց։
Գայլն ընկաւ ջոկին, վայն եկաւ մէկին։
Գողը գողէն գողացաւ, Աստուած տեսաւ, զարմացաւ։
Դարբինին դանակ չի լինիլ, ջուլհակին պատանք։
Դարտակ կարասի ձայնը բարձր դուրս կըգայ։
Դուռդ փակ պահիր, հարևանիդ գող մի՛ բռնիր։
Դրուստ խօսողի գդակը ծակ կըլինի։
Եղան լաւը լծի տակ կիմացուի։
Երեխէն մահանայ, մէրը կըշտանայ։
Ես աղայ, դու աղայ, բա մեր աղունն ո՞վ աղայ։
Երեսէն հայելի, ետևէն ածելի։
Եօթը եկեղեցի շինելու փոխանակ, եօթը որբ՝ մարդ արա։
Զանգակի ձայնը հեռուից լաւ է գալիս։
Թրի կտրածը կըսաղանայ, լեզուի կտրածը չի սաղանալ։

Ինձ տես, քեզ լաց, հօրդ տանը ամուր կաց։
Լաւ է ուշ քան երբէք։
Լաւ հաւը իր ճուտերի վրայ ման կըտայ։
Ծառը քանի որ պտուղ շատ ունենայ, գլուխը կախ կըգցի։
Ծոմն ընկեր՝ ձեռքը փրփուրին կ'երկընցնէ։
Ծոմն իյնողը՝ անձրևէն չի վախեր։
Կաթի հետ մտածը հոգու հետ դուրս կըգայ։
Կտրած հացը չի սաղանալ։
Հազար լսէ, մէկ խօսէ, տես դիմացինդ ինչ կասէ։
Համբերութեան ծառը դառն է, բայց պտուղը քաղցր։
Հասկացող որդին հօր աչքն է։
Հաւն էլ իր ճուտը ուրուրին չի տալիս։
Ձեռքի մէկ թռչունը լաւ է, քան ծառի վրայի երկուսը։
Ձուկը գլխէն կըհոտի։
Ձուագողը ձիագող կըդառնայ։
Մալին տէր պէտք է, որդուն՝ հէր։
Մարդը չէր մարդանման, խօսքն էր մարդասպան։
Մեր տանը կուտ կուտէ, դրացու տանը ձու կածէ։
Մէկ ձեռը ծափ չի տալ։
Մէջք մէջքի տանք, սարեր շուռ կըտանք։
Մրջիւնը պստիկ ա, համա ասլանի ականջ ա մտնում,
Մօտիկ հարևանը լաւ է, քանց հեռու բարեկամը։
Նախանձոտը նախ ինքն իրեն կըխանձէ։
Շաքարը քաղցր է, ամա հացի տեղը չի բռնի։
Շներն իրար հետ կռւում են, գայլի դէմ միանում։
Ոչխարի մորթ է հագել, գայլի գործ է կատարում։
Ո՛վ ուշ—աչքը փուշ։
Ո՛վ չուշտ—փորը կուշտ։
Ուրիշի աչքը քեզ լոյս չի տալ։
Սոխ ու հաց, պարզերեսս կաց։
Տաշած քարը դեռնին չի մնայ։

II. ԲԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

(Տարուայ ընթացքում անցածի ամփոփումը)

Ա. ԱՌԱՐԿԱՑ

Մարդս հինգ արտաքին զգայարանք ունի՝ տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք եւ շօշափելիք։

§ 1. Հինգ զգայարանքի միջնորդութեամբ ճանաչած բաները (իրերը) կոչւում են առարկայ։—Աշակերտ, հայր, քոյր, երգ, շաքար, բամբակ, վարդ—առարկաներ են։

§ 2. Մարդս առարկաներին ջոկ-ջոկ անուններ է տալիս. ամեն առարկայ իւր անունն ունի։ Առարկայի մասերն էլ ջոկ-ջոկ անուններ ունին։

§ 3. Մարդս այն ժամանակն է առարկայի անունը տալիս, երբ-որ իւր տեսածի և ճանաչածի մասին ուրիշներին մի բան է ուզում ասել։

Առարկան տեսնում և գնում ենք մեր հինգ զգայարանքներով. իսկ անունը չենք կարող տեսնել և գնել. նրան միայն լսում ենք և հասկանում։ Առարկաների անունները մեր տեսողութեանը ենթարկելու համար՝ նրանց գրում ենք, այսինքն տառերով նշանակում ենք։

Բ. ԾՆՈՂԱՒՈՐ ԵՒ ԱՆԾՈՒՆՉ ԱՌԱՐԿԱՆԵՐ

ա. Ոչխար, շուն, կատու, ձի, հաւ, կով, գոմէշ, աշակերտ, քահանայ,

բ. Սեղան, քար, աթոռ, փայտ, կերակուր, այգի, գիրք, եկեղեցի։

§ 4. Առաջին տողի մէջ նշանակած բառերը կենդանի առարկաների անուններ են. այդ առարկաները ազատ կարող են մի տեղից միւս տեղ անցնել, իրանք իրանց տեղը փոխել։ Դրանք շնչաւոր առարկաներ են։

Երկրորդ տողի մէջ նշանակած բառերը անկենդան առարկաների անուններ են։ Այդ առարկաներն իրանց կամքով չեն կարող մի տեղից միւս տեղ անցնել, իրանք իրանց տեղը փոխել։ Դրանք անշունչ առարկաներ են։

1. Ի՞նչ շնչաւոր առարկաներ էք տեսնում տանը, բակումը, գոմումը, անտառումը։ Բերանացի։

2. Ի՞նչ անշունչ առարկաներ էք տեսնում դասատանը, պարտէզումը, այգումը, դաշտումը, ուսումնարանումը, եկեղեցումը։ Բերանացի։

3. Հետևեալ բառերից ջոկեցէք և գրեցէք առաջ շնչաւոր առարկաների անունները, յետոյ անշունչներինը.—Կացին, գիւղացի, սրոց, սղոց, դարբին, հովիւ, մուրճ, աղախին, կողպէք, ծառայ, աղաւնի, խոզ, հաւ, հաւաբուն, մեխ, այգի, այգեպան, հաց, հացթուխ, սրահ, գոմ, ձի, կով, եզը, ոչխար, օրօրոց, մանուկ, անկողին, մահճակալ, զգեստ, դերձակ, ասեղ, կօշկակար, կօշիկ, սիսեռ, կաղամբ, համեմ, կարմրախայտ, լոր, մեղու, ճանճ, ծառ, մոծակ, բզէզ, խոտ, հնձող, մանգաղ, ձեռներ, ոտներ, աչքեր, այծ, սագ, բադ, եղջիւր, եղջերու, միս, պանիր, աքաղաղ, նապաստակ...

Դ. ՄՏՔԻՐՈՒ ԵՒ ՆԻՒԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ

ա. Աստուած, հոգի, հրեշտակ, ապրուստ, եռանդ, աշխոյժ, աշխատանք, ծուլութիւն, քաջութիւն, սրբութիւն։

բ. Արօր, սեղան, աքաղաղ, մարդ, բաժակ, ալիւր, կաքաւ, կաղամբ, կացին, անտառ, կարագ, գինի։

§ 5. Առաջին սիւնակի մէջ նշանակած առարկաները թէև կան և անուն ունին, բայց մեր հինգ զգայարանքին ենթակայ չեն. դրանց մենք միայն մտքով ենք ճանաչում։ Դրանք մտաւոր առարկաներ են։

Երկրորդ սիւնակի մէջ նշանակած առարկաները շնչաւոր և անշունչ առարկաներ են. դրանց ճանաչում ենք մեր հինգ զգայարանքի միջնորդութեամբ։ Դրանք կոչւում են նաև նիւթական առարկաներ, որովհետև կազմուած են որևէ նիւթից։

4. Հետևեալ խօսքերից ջոկեցէք մտաւոր առարկաները նիւթականներից, նիւթականներն էլ երկու խմբի բաժանեցէք՝ շնչաւոր և անշունչ։

Աստուած ստեղծեց մարդուն և տուեց նրան հոգի, միտք և կամք, որ կարողանայ սեպհական խելքով իրան համար ապրուստ ճարել։ Մարդը հնարեց արօրը, երկիրը վարեց, հացահատիկներ ցանեց. կացին հնարեց՝ իւր տան ու վառելիքի համար փայտ կտրատեց. սանձ ու թամբ հնարեց և իրանից ուժեղ կենդանիներին հնազանդեցրեց. միտք բանացրեց և շատ անասուններ, գործիք ու սարք ունեցաւ։

Դ. ԸՆԸՐԿԵՑԻ ԹԻՒԸ

ա. Հաց, քար, ծառ, պատ, միս, մոմ, աղ, մաղ, ձեռն, ոտն։

Կացին, սեղան, քորոց, աշակերտ, կերակուր, եկեղեցի, քահանայ, մատանի։

բ. Հաց-եր, քարեր, ծառեր, պատեր, մսեր, մոմեր, աղեր, մաղեր, ձեռներ, ոտներ։

Կացին-ներ, սեղաններ, քորոցներ, աշակերտներ, կերակուրներ, եկեղեցիներ, քահանաներ, մատանիներ կամ՝ քահանայք, մատանիք։

§ 6. Առաջին երկու տողի մէջ եղած բառերից ամեն մինը մի հատիկ առարկայի անուն է՝ մի հաց, մի քար, մի կացին, մի եկեղեցի։

Երկրորդ երկու տողի մէջ եղած բառերից ամեն մինը միքանի միատեսակ առարկայի անուն է՝ շատ հաց, շատ քար, շատ կացին, շատ եկեղեցի։

Միևնոյն անունը՝ շատ առարկաներ ցոյց տալիս վերջից եր, ներ, երբեմն էլ ք է առնում։

5. Հետևեալ խօսքերի մէջ մի առարկայի անունը ջոկեցէք շատից.—Հայրս գնաց փողոց և գնեց միս, հացեր, հաւեր, բադ և հնդկահաւեր։ Աշակերտները կաւիճ գնեցին և գրատախտակի վրայ դասը գրեցին։ Գիւղացիք արտերը վարեցին։ Քահանայք եկեղեցում ժամ ասացին։ Դաշտում արածում էին կովեր, եզներ, այծեր,

ոչխարներ և ուրիշ շատ կենդանիք։ Դարբինը շինում է կացին, բահ, խոփ, մանգաղ, ուրագ և ուրիշ շատ բաներ։ Ջուլհակը շալ գործեց։ Բրուտը շինեց կժեր, սրուակներ, գաւաթներ։ Հաւը ձու է ածում։ Կովը կաթն է տալիս։ Աշակերտը գնեց մատիտ, քանոն, գրիչ, թանաքաման և գրչաման։ Հայկը պայուսակ ունի։

Ե. ԵՌԵՐԿՈՒՑԻ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆԸ

ա. Կարմիր խնձոր, սպիտակ շաքար, թթու քացախ, սև թանաք, կապոյտ ծաղիկ։

բ. Ոսկէ մատանի, քարէ եկեղեցի, արաբական ձի, հիւսիսային եղջերու, առաւօտեան հով։

§ 7. Առաջին և երկրորդ տողերի մէջ նշանակած բառերը՝ կարմիր, սպիտակ, արաբական, հիւսիսային... ոչ առարկաների անուններ են և ոչ նրանց մասերի. նրանք դրուած են առարկաների համար և ցոյց են տալիս նրանց *որպիսութիւնը* կամ *յատկութիւնը*։

§ 8. Մարդս իւր զգայարանքների միջոցով ոչ միայն առարկաներն է ճանաչում, այլ և նրանց *որպիսութիւնը* (թէ առարկան *ինչպիսի* է)։

Որպիսութիւնն առանց առարկայի չի կարող լինել։ Որպիսութիւնն էլ, առարկայի պէս, իւր անունն ունի։

6. Հետևեալ օրինակներից ջոկեցէք որպիսութիւնների անունները.—սեւ կուպր, կարմիր գինի, կանաչ խոտ, պայծառ արև, փայլուն աստղ, կապոյտ երկնակամար, փայտեայ կլոր գաւաթ, անտառային թթու խնձոր. դաշտային խորամանկ աղուէս. փոքրիկ բրդոտ նապաստակ. թունաւոր սև օձ. եղջերաւոր խոշոր անասուն. հարաւային տաք քամի. հիւսիսային սառնաբեր փոթորիկ. պողպատէ սուր մանգաղ. քարէ լայն ուղի։

7. Որպիսութիւն ցոյց տուող անունների տակը գիծ քաշեցէք։—Պայծառ երկնակամարի վրայ գորշագոյն ամպեր երևացին։ Ամպերը թաձրացան և սև կեղևով ծածկեցին կապոյտ երկինքը։ Երեկոյեան կենսատու արևը ջրեց ծարաւ երկիրը։ Դաշտային թառամած բոյսերը զուարթացան։

8. Հետևեալ առարկաների մօտ գրէք իրանց պատշաճ որպիսութիւնները անունները.—ամպ, գունտ, շուն, թիթեռ, խնձոր, ջուր, կապիկ, ապակի, քամի, գրիչ, անիւ, խուրձ, խոտ, արև, ոսկի, արծաթ, ածուխ, քար, բամբակ, հաց։

§ 9. Միքանի առարկաներ կարող են միևնոյն որպիսութիւնն ունենալ. *մնասակար գայլ, մնասակար մարդ, մնասակար գործ. բարձր ձայն, բարձր ծառ, բարձր մարդ, բարձր արժանաւորութիւն։*

9. Հետևեալ որպիսութիւնները ինչ առարկաների կարելի է յատկացնել.—կարմիր, սպիտակ, սև, կանաչ, կապոյտ, քաղցր, դառը, սուր, պինդ, փափուկ, կլոր, հիւթաւոր, թափանցիկ, ծանր, թեթև, մաքուր։—Բերանացի և գրաւոր։

10. Հետևեալ առարկաներից ամէն մինը ինչ յատկութիւններ պիտի ունենայ անպատճառ՝ սոխը, սխտորը, արծաթը, ոսկին, պղինձը, շուշանը, մանուշակը, զանգակը, գետի ջուրը, ծովի ջուրը, բամբակը, արճիճը, մեղրը, քացախը։

11. Որպիսութիւն ցոյց տուող բառերի տակը գիծ քաշեցէք.—Անձրևային աշուն. աշնանային անձրև։ Փոթորկալի ծով։ Ծովային փոթորիկ։ Դաշտային ծաղիկ։ Ծաղկաւէտ դաշտ։ Անձրևատամաս։ Ամարային անձրև։ Մարդկային արժանաւորութիւն։ Արժանաւոր մարդ։

Զ. ՈՐՊԻՍՈՒԹԵԱՆ ԹԻՒԸ

ա. Կարմիր խնձորներ, երկար քանոններ, սպիտակ թղթեր, կանաչ յուլունքներ, գիւղացի մարդիկ, դաշտերի բնակիչներ։

բ. Կարմիրները, երկարները, սպիտակները, կանաչները. գիւղացի-ք, դաշտեցի-ք։

§ 10. Որպիսութիւն ցոյց տուող բառերը թիւ չունին, երբ առարկայի մօտ են դրուած. բայց եթէ մենակ են, կարող են առարկաների անուան պէս եր, ներ, ք տառերն առնել իրանց վերջում և շատի համար գործ ածուել։

12. Հետևեալ օրինակների մէջ գտէք մենակ գործածուած որպիսութիւն ցոյց տուող բառերը և տակը գիծ քաշեցէք.—Հիւանդները նախանձում են առողջներին։ Հարուստները պարտաւոր

են օգնել աղքատներին։ Գիտունները տգէտներին սովորեցնում են։ Օրէնքը պատժում է չարերին։ Քրիստոսը ներում էր մեղաւորներին, բժշկում էր կաղերին, կոյրերին, անդամալոյծներին, բորոտներին և դիւահարներին։

Է. ԱՌԱՐԿԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Շունը հաջում է, շունը կծում է, շունը փախչում է։ Թռչունը թռչում է, թռչունը երգում է, բուն է շինում ձագ է հանում, մժեղներ է բռնում, ճուտերին կերակրում։

§ 11. Նշանակած բառերը՝ հաջում է, թռչում է, երգում է... ոչ առարկաների անուններ են և ոչ որպիսութեան. նրանք միայն ցոյց են տալիս, թէ առարկան ինչ է անում, ինչ է գործում։ Դրանք գործողութիւն ցոյց տուող բառեր են։

Առարկայի գործողութիւնն էլ մարդս ճանաչում է իւր հինգ զգայարանքների միջնորդութեամբ։

§ 12. Գործողութիւնն էլ, որպիսութեան պէս, առարկայի համար է դրւում։ Որպիսութիւնը ցոյց է տալիս, թէ առարկան ինչպիսի է, իսկ գործողութիւնը՝ թէ նա ինչ է անում, ինչ է շինում։

§ 13. Ինչպէս որ առարկաներն ու իրանց որպիսութիւնները, այնպէս էլ առարկաների գործողութիւնները ջոկ-ջոկ բառերով ենք նշանակում։

13. Հետևեալ խօսքերի մէջ գտէք գործողութիւն ցոյց տուող բառերը և նրանց տակը գիծ քաշեցէք.—Որսորդն սպանեց մի գայլ։ Գայլը պատառոտել էր հովուի ոչխարները։ Կարապետը առաւօտները վեր է կենում, շորերը հագնում, երեսը լուանում, աղօթք է անում և առաւօտուայ հացն ուտում ու գնում դաշտը։ Մանր տղաներն ուսումնարան են գնում։ Ձին բեռն է կրում։ Օձը սողում է։ Ձուկը լողում է։ Թռչունը թռչում է։ Արծիւը սլանում է օդի մէջ։ Գետը հոսում է։ Քամին փչում է։ Ամպը որոտում է։

14. Արտագրեցէք առաջ գործողութիւն ցոյց տուող բառերը,

յետոյ առարկաների անունները։—Գիւղացին մաքրում է վարելահողը, վարում է օրավարը, սերմում է, ցաքանում և Աստուած կանչում, որ ժամանակին տայ արև, անձրև և օրհնէ նրա վաստակը։

15. Ամեն մի առարկայի մօտ դրէք իւր յարմարաւոր գործողութիւնը և աւելացրէք, թէ առարկան ինչ բան է շինում և ինչից։—Հացթուխը թխում է հաց ալիւրից։ Քոյրս կարում է շապիկներ քաթանից։ Դարբինը շինում է պայտեր... կօշկարը... պղնձագործը... ոսկերիչը... նկարիչը... խոհարարը... ջաղացպանը... դերձակը... հիւսնը... ջուլհակը... որմնադիրը... ճարտարապետը... հնձողը... ձկնորսը...

16. Հետևեալ բառերից որոնք են ցոյց տալիս առարկայ, գործողութիւն և որպիսութիւն.—Մշակ. մշակել. մշակող. մշակութիւն։ Կոտրեցի. կոտրած. կոտոր։ Փշրանք. փշրուն. փշրում էր։ Կերակուր. կերած. կերել եմ։ Կրգրեմ. գիրք. գրութիւն. գրիչ. գրող։ Խմիչք. խմեցի. խմած։ Խելք. խելօք. խելօքացաւ։ Խաղ, խաղում է. խաղասէր. խաղալիք։ Ծամում է. ծամ. ծամելիք։ Կար. կարած. կարող. կարկատան. կարեց։ Կրհնձէ. հունձ. հնձող. հնձած։ Ձայն. ձայնաւոր. ձայնել. անձայն։ Ճանապարհ. ճանապարհել. ճանապարհորդ. ճանապարհորդութիւն։ Մանուկ. մանկական. մանկանալ։ Յիշատակ. յիշատակել. յիշատակող. յիշատակարան։ Ներել. ներողամիտ. ներողութիւն։ Շնորհ. շնորհել. շնորհած, շնորհաւորէք. շնորհաւորեցի. շնորհաւորող։ Չար, չարանալ. չարութիւն. չարչարանք. չարչարուել։ Սուր. սրոց. սրել։ Այժ. ուժեղ. ուժեղանալ։

Ը. ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ԹԻՒԸ

ա. Ես կարդում եմ։ Դու գրեցիր։ Հնձողը հնձեց։

բ. Մենք կարդում ենք։ Դուք գրեցիք։ Հնձողները հնձեցին։

§ 14. Առաջին տողի մէջ գործ կատարող առարկաները մէկ-մէկ են. նրանց կատարած գործողութիւնն էլ մէկ է—մի անգամ է կատարւում։ Երկրորդ տողի մէջ գործողները շատ են. նրանց կատարած գործողութիւնն էլ շատ է—միքանի անգամ է կատարւում։ Գործողութիւնն էլ,

առարկայի ու որպիսութեան պէս, կարող է մէկ և շատ ցոյց տալ։ Գործողութիւնը շատացնելիս՝ վերջից աւելացնում ենք ն և ք տառերը մենակ կամ ուրիշ տառերի հետ։

17. Հետևեալ օրինակները փոփոխեցէք այնպէս, որ առարկաները ու գործողութիւնները մէկից շատ ցոյց տան։—Աշակերտը կարդում է իւր դասը։ (Աշակերտները կարդում են իրանց դասերը)։ Կովը արածում է դաշտումը։ Թռչունը երգում է իւր քաղցրահնչիւն երգը։ Որմնադիրը պատում է պատը։ Վարժապետը սովորեցրեց աշակերտին։ Աշակերտը լսեց վարժապետի ասածը։ Բահանան մկըրտեց մանկանը։ Մանուկը մեծացաւ, ուժեղացաւ և իւր հօրն օգնող եղաւ։ Ամառը ես կըգնամ գիւղը, աշնանը նորից կըվերադառնամ։

18. Հետևեալ օրինակների մէջ գործողութիւնները փոփոխեցէք՝ շատը մէկ շինեցէք.—Հացը թխում են տանտիկինները կամ հացթուխները։ (Հացը թխում է տանտիկինը կայլն։) Հացը թխում են խմորից։ Խմորը հունցում են ալիւրից, ջրից և խաշից։ Ալիւրն աղում են ջաղացում ցորենից։ Հացահատիկները հասնում են արտերում, հասկերի մէջ։ Գիւղացիք դաշտը մշակում են. նրանք հերկում են հողը—ցել են անում, յետոյ ցելումը սերմում են ցորեն և ուրիշ հացահատիկներ։

§ 15. Մեր սովորած *բառերից* միքանիսը առարկայի անուն են. միւսները որպիսութեան, իսկ ոմանք գործողութեան։

19. Հետևեալ խօսքերը վերլուծեցէք և ասացէք իւրաքանչիւր բառի նշանակութիւնը.—Փայլուն արևը մայր մտաւ (փայլուն՝ ցոյց է տալիս արևի որպիսութիւնը. արևը՝ անշունչ և նիւթական առարկայի անուն է. մայր մտաւ՝ ցոյց է տալիս արևի գործողութիւնը)։ Լուսինը վաղուց գնաց թագկացաւ։ Փոքրիկ աստղերը ամպի տակ մտան։ Բարեպաշտ մարդիկ ժամ գնացին։ Ծոյլ մանուկները տանը մնացին։ Աշխատասէր աշակերտները դասերը սովորում են։ Աղօտ լուսինը լուսաւորում է քնած երկիրը։ Պայծառ աստղերը փայլում են պարզ երկնքի վրայ։ Սև-սև ամպերը ծածկեցին կապոյտ երկնքի երեսը։ Գիշերը մթնեց։ Վայրենի գազանները զարթեցին։ Չար մարդիկ սիրում են խաւար գիշերներ։

Թ. ԲԸՌ, ՎԱՆԿ ԵՒ ՏԸՌ

§ 16. Առարկային, նրա որպիսութեանն ու գործողութեանը մարդս առանձին-առանձին անուններ է տալիս։ Առարկայի, գործողութեան և որպիսութեան անունները *բառեր* են։

ա. Հաց, ծառ, քար, ջուր, ցուրտ, սև, լաւ, մոմ, միս, շէկ։

բ. Բա-ժակ, գարի, ցորեն, բարակ, հասակ, սիրուն։

գ. Բա-րե-կամ, աշակերտ, աշխատել, աշխատութիւն։

§ 17. Առաջին տողի մէջ նշանակուած բառերը կարդացուում են միանգամից. միւս տողերի մէջ նշանակուածները երկու կամ երեք անգամից։

Բառի այն մասը, որ արտասանուում է միանգամից, *վանկ* է կոչուում։

§ 18. Վանկերի թուին նայելով բառերը լինում են՝ միավանկ, երկավանկ և բազմավանկ։

§ 19. Ամենայն բառ մի կամ միքանի վանկից է շինուած, իսկ ամենայն վանկ շինուած է մի կամ միքանի *հնչիւններից*։

§ 20. Գրելու ժամանակ հնչիւնների տեղակ գործ ենք ածում առանձին նշաններ, որոնք *տառ* կամ *գիր* են կոչուում։

§ 21. Կան տառեր, որոնք հեշտ են արտասանուում և, առանց ուրիշ տառերի օգնութեան, պարզ հնչուում են. բայց կան և այնպիսի տառեր, որոնք միայնակ դժուար են հնչուում և հեշտ հնչուող տառերի օգնութեամբ են միայն արտասանուում։—Հեշտ հնչուող տառերն են՝ ա, ե, է, ը, ի, ո, օ, ու։ Սրանք *ձայնաւոր* են կոչուում։ Մնացած տառերը կոչուում են *բաղաձայն*։

§ 22. Առանց ձայնաւոր տառի վանկ չի լինիլ։ Առանց բաղաձայն տառի վանկ կարող է լինել։

§ 23. Գրելու ժամանակ, բառի մի մասը մէկ տողից

միւս տող անցկացնելիս, պէտք է ամբողջ վանկ կամ վանկեր անցկացնել։

Ա-սա, ա-բա, ա-ժան, գի-նի, բա-բի, դա-նակ, ե-ղան։
Ա-բե-գակ, ա-բե-դայ, ժա-մա-նակ, ժա-մա-ցոյց։

§ 24. Կանոնաւոր կարդալու և անսխալ գրելու համար պէտք է գիտենալ, թէ բառերն ինչպէս են վանկւում։ Վանկելու հիմնական կանոնն այն է, որ բաղաձայն տառը, եթէ մենակ է, կպչում է իրանից յետոյ եկող ձայնաւորին։

20. Վերոյիշեալ կանոնին համաձայն վանկեցէք հետևեալ բառերը՝ կերայ, տեսայ, եկայ, բարակ, գաթայ, թաւայ, արեգակ, Ա.բրուսեակ, քահանայ, յիսուն, Յիսուս, գարի, ցորեն, ցերեկ, ցուցակ, կարաս, կացին, գաւաթ, գինի, Գարեգին։

Ար-ճիճ, աղ-քատ, աղ-ջիկ, ար-դար, եղ-նիկ։ Ըն-դե-ղէն, ընտ-րու-թիւն, երկ-բա-չափ։

§ 25. Երբ բառի մէջ միքանի բաղաձայներ կան, միայն վերջին բաղաձայնն է կպչում իրանից յետոյ եղած ձայնաւորին, իսկ միւսը կամ միւսները մնում են նախորդ ձայնաւորին։

21. Վանկեցէք հետևեալ բառերը. աղբիւր, եղջիւր, երկինք, երդիկ, երկնաւոր, երկրագործ, իշխանաւոր, ինքնասէր, որկրամոլ, որդեսէր, սրբակեաց, ընկոյզ, ընտանի, ընդեղէն, թարգմանել, մարդկութիւն, մաքրասէր, կարգաւոր, ընտրութիւն։

Բը-ժիշկ, բնակ, բլեթ, դղում, դժոխք, թթու, թզուկ, բըրդել, խըն-դիր, զըն-դան, ճրնճ-ղուկ։

§ 26. Եթէ բառի սկզբում միքանի բաղաձայն տառեր կան, վանկելու ժամանակ առաջին բաղաձայնից յետոյ դրւում է ը ձայնաւորը, իսկ միւս բաղաձայները վարւում են նախընթաց կանոնին համեմատ։

22. Վանկեցէք հետևեալ բառերը. բռնել, բրդել, գրիչ, գընդակ, գլուխ, գդակ, դրդել, տրտմիլ, զննել, զրկել, թթու, թզուկ, թռչուն, թշնամի, ժպիտ, ժլատ, ժժմակ, լռել, լրտես, խխունջ, խնձոր, խնդիր, խրտնել, ծնունդ, ծնկաչոք, ծղրիդ, կրթել, կրկնել, կռթնել, հնդիկ, հնդկահաւ, ձնծաղիկ։

§ 27. Բառի վերջում բաղաձայն տառերը միշտ կըցւում են իրանցից առաջ եղած ձայնաւորին՝ մէկ լինին, թէ միքանի. միայն ն և ը տառերը հարևան բաղաձայնի հետ առանձին վանկ են կազմում (ծունը—ծու-նը)։

23. Վանկեցէք հետևեալ բառերը և, ուր որ պէտք է, ը աւելացրէք.—Սանդ (գործիք), սանր, ծունկ, ծունր, ծածկ, ծանր, մարդ, մանր. կարծր, բարձր, ոտք, ոտն, ձեռք, ձեռն, բերք, բեռն, կառք, գառն, դառն, սառն, դուռն, նուռն, բուռն, ծուռն, ամառն, ձմեռն, մեղր, կայսր, եղր, ծաղր։

Բըժիշկ, դըդում, զընդան, թըզուկ, ժըժմակ, լըրտես, խընդիր, ծընունդ։

Սկունդ—ըսկունդ. սպաս—ըսպաս. զբաղմունք—ըզբաղմունք. շտապ—ըշտապ։

Առաջին տողի մէջ բաղաձայն տառը վանկուելու համար իրանից յետոյ առել է ը ձայնաւորը, իսկ երկրորդ տողի մէջ բաղաձայնը իրանից առաջ է առել ձայնաւորը։

§ 28. ս բաղաձայնը թ, կ, պ, տ, փ, ք, տառերի հետ, զ բաղաձայնը ը, գ, մ տառերի հետ և շ բաղաձայնը տ տառի հետ հանդիպելիս, բառի սկզբում, հնչւում են որպէս ամփոփ ըս, ըզ, ըշ և կազմում են կէս վանկ։

24. Աւելացրէք ը տառը, ուր որ հարկաւոր էք համարում.—Սթափուիլ, սկեսուր, սկայ, սկունդ, սկուտղ, սպաս, սպունդ, սպի, սպիտակ, սպեղանի, սպասել, ստամոքս, ստէպ, ստոր, ստոյգ, ստանալ, ստինք, սփիւռ, սփոփանք, սփածանելի, սքօղել, սքանչելի, սքանչանալ։—Զբօսանք, զբաղմունք, զգալի, զգեստ, զգոյշ, զգօն, զգայարանք, զմայլել, շտապել, շտեմարան։

Սարդ (միջատ)—սարդ (այդ սարը)։ Զին երկու ոտի վրայ ծառս

եղաւ (ծառանալ)։ Ծառս արմատից կտրուեց (այս ծառը)։ տունն, բունն, (այն տունը, այն բունը)։

§ 29. ս. ղ. ն տառերը, եթէ բառի անանջատ մասը չեն, այլ, որպէս եկամուտ տառեր, աւելացած են բառի վերջում, որ առարկաների դասաւորութիւնը ցոյց տան, իրանց նախորդ բաղաձայնի հետ միշտ մի վանկ են կազմում։

25. Ուր որ յարմար է ը դրէք և վանկ կազմեցէք.—Կարդ—կարդալ։ Կարդ կարիր։ Բարդ—բարդել. մարդ—տղամարդ. մէրդ—մարդ—մայրդ. հորթ, հօրդ. կիրթ, գիրդ. սերտ, սէրդ. բանտ—բանտարկել. բանդ շինիր, յետոյ խաղա. մարս—մարսել. մերս—մերսել. մէրս—մարս—մայրս. սարս—սարսել—սարսափ. սարս ձիւնապատ, ամպերս մթին, անտառներս խիտ։

§ 30. Կ տառը իբրև մասնիկ դրւում է բառի սկզբում և, եթէ մօտի տառը բաղաձայն է, առնում է ը տառը և նրա հետ առանձին վանկ է կազմում, իսկ եթէ մօտի տառը ձայնաւոր է, այն ժամանակ նա յաջորդ ձայնաւորի հետ մի վանկ է կազմում։ Կըգրեմ (կ'ասեմ)։

§ 31. Հայերէն տառերը դրւում և կարդացւում են հետևեալ կարգով. այբ, բեն, գիմ, դա, եչ, զա, է, ըթ, թո, ժէ, ինի, լիւն, խէ, ծա, կէն, հո, ձա, ղադ, ճէ, մէն, յի, նու, շա, ո, չա, պէ, ջէ, ռա, սէ, վէվ, տիւն, րէ, ցո, ւիւն, փիւր, քէ, օ, ու, ֆէ (և=ю=իու. յ=й)։

§ 32. Բոլոր տառերը միասին վերցրած կազմում են հայերէն այբուբենը, իսկ այստեղ առաջ բերած կարգը կոչւում է այբբենական կարգ։ Հայերէն այբուբենի տառերը 39 են։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Ից ՍՍՌ
Ա. Մ. Մասիսյանի անվան

ՆԻՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ

I. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԵՒ ՏԱՆԸ

1. Իմ ուսումնարան գնալը . 5
2. Հանելուկ 6
3. Կարդալ-գրել. 7
4. Ամեն բան իրան տեղ . . 7
5. Տխուր երեխայ 8
6. Մեր տունը 9
7. Խրճիթ 10
8. Մեր դասատունը 11
9. Հրաւէր դէպի ուսումն. . 12
10. Մեր ընտանիքը 13
11. Պապը. 14
12. Պապը թոռնիկին 15
13. Առաւօտեան ճառ. . . . 16
14. Օրօրոցի երգ. Գ. Ք. . . 17
15. Կաւիճ 18
16. Թռչնակ 20
17. Սպունգ . . . . . —
18. Գարնան կարապետ. Գ. Ք. 23
19. Մատիտ . . . . . —
20. Ռետին 25
21. Երկու քոյր. Գ. Ք. . . 27
22. Կրակ 29
23. Դարբին 30
24. Օդ. 31
25. Քամին և նաւերը . . . 32

II. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԵՒ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽՈՒՐԻՑ

26. Շնիկ 34
27. Կատու . . . . . —
28. Ձի 35
29. Տխուր ձի 36
30. Կով. 37
31. Կենդանիների վէճը . . . 38
32. Կթել և հարել. Արարատ. 39
33. Ոչխար 40
34. Գառը գայլի մորթով . . 41
35. Խոզ. . . . . —
36. Խոզը կաղնի ծառի տակ . 42
37. Աղաւնիներ 43
38. Ծիծեռնակ. . . . . —
39. Պանդխտի երգը. Դոդոխ. . 44
40. Կաղամբի թիթեռ 45
41. Ձատիկ . . . . . —
42. Թիթեռ և մանուկ . . . 46
43. Այգի. 47
44. Պարտէզ . . . . . —
45. Ծաղիկների երգը . . . 48
46. Բոյսերի կերակուրը . . 49
47. Ծառերի վէճը 50
48. Ուտելիք 51
49. Հանելուկ. Արարատ. . . —
50. Փորձանք ու պատուհաս. 52
51. Զրաղաց . . . . . —
52. Վուշ և բաթան 53
53. Ձրի ճանապարհորդ. . . 55
54. Զարմանալի մշակ . . . 57

10 153 Ա.Ֆ. 10 —

III. ՏԱՐՈՒԱՑ ՀՈՐՍ ԵՂԱՆԱԿՆԵՐԻՆ

55. Ի՞նչ արեց ձմեռը 59
56. Ալևոր պապի չարիքները. —
57. Ձիւն 61
58. Յունվարի մէկին 62
59. Նոր տարի 63
60. Ակնկալութիւն գարնան . —
61. Գարուն 64
62. Մայիսուայ առաւօտ . . —
63. Ամառ. 65
64. Երաշտ . . . . . —
65. Երկը. և ծաղիկը . . . 66
66. Ամառը խոտհարքում . . —
67. Հունձ 68
68. Թաժայ հաց 69
69. Շինակ. երգը. Պատկան. —
70. Զհնձած արտ 70
71. Մանկական յիշողութիւնից 71
72. Աշուն 72
73. Ձորս եղբայր. Ռ. Պ. . . —

IV. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻՑ

74. Մանկական հեքիաթ. ժող. 74
75. Շունն ու կատուն 76
76. Գորտը և եզը. Կրիլովից . 80
77. Հանելուկ. ժող. . . . . —
78. Վարդենին ու փուշը. փոխ. 81
79. Հանելուկ. ժող. . . . . —
80. Պստիկն ու լխտիկը. Յ. Թ. —
81. Աղուէսն ու կկուն . . . 82
82. Ագռաւները. Սբ-ից . . 86
83. Անխելք մարդը. Սբ-ից. 87
84. Վարդուհին ու Ցոլակը . 90
85. Յոպոպիկը 97
86. Ուրիշին հոր փորես. փոխ. 98
87. Հրեղէն ձի. փոխ. . . . 102
88. Որսորդ Ցականը . . . 105
89. Սագավաճառ Սուրէնը

V. ԲԱՌԵԼՈՒԱԾ

I. Առածներ 129
II. Քերականական վարժութիւններ 131

2013

4555